



Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ



NATIONAL
ENDOWMENT
FOR
DEMOCRACY

SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

ԶԵԿՈՒՅՑ. ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱԼԱՆՔԻ ԵՒ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ



Բովանդակություն

Մեթոդաբանություն.....	2
I. Խափանման միջոցների կիրառման ոլորտում միջազգային չափանիշները.....	4
II. Ընդհանուր տվյալներ դիտարկված գործերի վերաբերյալ.....	5
III. Կողմերի մասնակցությունը Նիստին	13
IV. Նախկինում ընտրված խափանման միջոցի պայմանների խախտում.....	16
V. Նիստի ընթացքում կողմերի միջնորդություններն ու դիրքորոշումները խափանման միջոցի առնչությամբ	18
5.1 Հանրային մեղադրողի դիրքորոշումը	18
5.2 Պաշտպանական կողմի փաստարկները	25
VI. ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ	27
6.1 Հիմնավոր կասկած	27
6.2 ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ	42
6.2.1 Խափանման միջոցի իրավաչության իրավական հիմքերը	42
6.3 Փախուստի կանխում.....	49
6.4 Կանխել հանցանքի կատարումը.....	54
6.5 Պարտավորությունների կատարման ապահովում	60
6.6 Նիստի ընթացքում դատարանի կողմից անդրադարձ այլ հանգամանքների	80
6.7 Սահմանափակումների կիրառման առանձնահատկություններ	81
Եզրահանգումներ	83
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	86

Հետազոտությունն իրականացրել են Հասմիկ Հարությունյանը և Աննա Մելիքյանը:

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական ավելի մեծ բարեփոխումների խթանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Մեթոդաբանություն

Դատական նիստերի մշտադիտարկում և ակտերի ուսումնասիրություն

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ հակակոռուպցիոն և երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննվող քրեական վարույթների մշտադիտարկում:

Մշտադիտարկումն իրականացվել է 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Դիտարկվել են պատահականության սկզբունքով ընտրված թվով 100 այն քրեական գործերը, որոնց շրջանակներում ներգրավված մեղադրյալների նկատմամբ նիստի դիտարկման պահին ընտրված է եղել կալանք կամ տնային կալանք խափանման միջոցը: Դիտարկվել են ինչպես նախնական, այնպես էլ դատաքննության փուլում գտնվող գործեր: Մշտադիտարկումն իրականացվել է երեք դիտորդի կողմից՝ հատուկ մշակված հարցաշարի հիման վրա:

Բացի այդ, ուսումնասիրվել են գործերով նույն դատարանների կողմից 2023 թվականի նոյեմբերից մինչև 2024 թվականի նոյեմբեր հրապարակված խափանման միջոցների կիրառման վերաբերյալ 151 որոշումները: Գործերն ընտրվել են նույն սկզբունքով՝ մինչև ուսումնասիրվող նիստը գործով մեղադրյալի նկատմամբ կիրառված է եղել կալանք կամ տնային կալանք խափանման միջոցը:

Ներկայետական օրենսդրության և միջազգային կարգավորումների ուսումնասիրություն

Բացի ներկայացվածը, իրականացվել է նաև ոլորտը կարգավորող ներկայետական օրենսդրության և միջազգային կոնվենցիաների, ՄԻԵԴ նախադեպերի, ինչպես նաև Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների կողմից արտահայտված դիրքորոշումները:

Դիտարկման ժամանակահատվածում, մասնավորապես 2024 թվականի հունիսի 28-ից շուրջ երեք ամիս դատալեքս համակարգը խափանված է եղել, որի արդյունքում երևանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում նշանակված նիստերի մասին տեղեկությունը հրապարակայնորեն հասանելի չի եղել, և դիտարկվել են այն նիստերը, որոնց մասին տեղեկություն հայտնի է դարձել դատարանի աշխատակազմում: Ընդ որում՝ որոշ դատական կազմեր հրաժարվել են տրամադրել նման տեղեկություն՝ հղում անելով լրացուցիչ ծանրաբեռնվածությանը:

2024 թ. հուլիսի 23-ին ԻԴԱՍ-ի կողմից Դատական դեպարտամենտին ուղղված գրությամբ, ի ապահովումն դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի, առաջարկվել է ՀՀ դատարանների դատավորների վարույթում քննվող

գործերի նիստերի վերաբերյալ տեղեկությունները հրապարակել court.am կայքում շաբաթական կտրվածքով՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի գործունեության վերաբերյալ հրապարակվող ձևաչափով: Ի պատասխան, Դատական դեպարտամենտը նշանակված նիստերի մասին տեղեկություն հրապարակելը ոչ նպատակահարմար է համարել՝ նշելով, որ դա կծանրաբեռնի դատական կազմերին¹: Նշենք նաև, որ նիստերի մասին տեղեկությունները հանրության համար տեղադրված չէին նաև դատարանի նստավայրերի շենքում:

Հարկ է արձանագրել, որ որոշ դատական կազմեր դատալեքսում ընդհանրապես չեն տեղադրում խափանման միջոցը կիրառելու/փոփոխելու վերաբերյալ որոշումները կամ տեղադրում են դրանցից միայն որոշները: Նշված մոտեցումը թույլ չի տալիս ապահովել թափանցիկությունը և հանրային հաշվետողականությունը: Նման մոտեցումը առավել մտահոգիչ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստի ժամանակ դատարանը չափազանց հակիրճ է անդրադառնում խափանման միջոցը կիրառելու մասին որոշման հիմնավորումներին:

Սույն զեկույցում ներկայացվում են տնային կալանք խափանման միջոցի կիրառման պրակտիկայի վերաբերյալ արձանագրված առանձնահատկությունները:

I. Խափանման միջոցների կիրառման ոլորտում միջազգային չափանիշները

Մի շարք միջազգային փաստաթղթերով նախատեսված է կալանքին որպես այլընտրանք այլ խափանման միջոցների կիրառումը, որոնց պայմաններում անձը շարունակում է մնալ ազատության մեջ: Նման այլընտրանքային միջոցների հիմնական նպատակը քրեական արդարադատության համակարգում առավել մարդասիրական մոտեցման ցուցաբերումն ու անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության խթանումն է:

Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության Ստանդարտ նվազագույն կանոններով /Տոկիոյի կանոններ/ նախատեսվում և խրախուսվում է ազատատնությունից զրկելուն փոխարինող միջոցների կիրառումը՝ ինչպես քրեադատավարական պրոցեսի նախնական, այնպես էլ հետագա փուլերում²:

¹ Դատական դեպարտամենտի կողմից ուղարկված 31.04.2024թ. ԴԴ-4 – Ե-6127 գրություն

² United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules),

Կանոններով նախատեսվում է նախ, որ դրանք կիրառելիս անդամ պետությունները պետք է ձգտեն ապահովել պատշաճ հավասարակշռություն ենթադրյալ հանցագործների իրավունքների, զոհերի իրավունքների և հասարակական անվտանգության ու հանցագործությունների կանխարգելման միջև:

Կանոններով առանձնակի ուշադրություն է դարձվում մինչդատական վարույթում կալանքին փոխարինող այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հարցին: Մասնավորապես, սահմանվում է, որ կալանքը պետք է կիրառվի որպես քրեական դատավարության վերջին միջոց՝ հաշվի առնելով ինչպես ենթադրյալ հանցագործության քննության անհրաժեշտությունը, այնպես էլ հասարակության ու տուժողի պաշտպանության կարևորությունը: Կալանքին այլընտրանքները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում: Նախնական կալանքը չպետք է ավելի երկար տևի, քան անհրաժեշտ է դրա նպատակներին հասնելու համար և պետք է իրականացվի հարգելով մարդասիրության սկզբունքներն ու անձի արժանապատվությունը³:

Եվրոպայի Խորհրդի շրջանակներում նույնպես ընդունվել են փաստաթղթեր, որոնք խթանում են այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը: Այսպես, ԵԽ Նախարարների կոմիտեի Rec(2006)13 հանձնարարականը անդամ երկրներին կոչ է անում ընդլայնել այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը, ինչը կարող է ներառել ստորագրություն չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, տնային կալանքը, էլեկտրոնային վերահսկողությունը և այլն⁴:

Այն, որ կալանքը պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց, բազմիցս արձանագրվել է նաև Եվրոպայի Խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի կողմից ևս: Վերջինս նույնպես պետություններին կոչ է արել ընդունել քաղաքականություն, որը կխթանի այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը: Կոմիտեն բազմիցս անդրադարձել է նաև կալանքի ավտոմատ կիրառման ու անհիմն երկարեցման անթույլատրելիությանը⁵:

<https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/united-nations-standard-minimum-rules-non-custodial-measures>

³ Նույն տեղում, Կանոն 6-6.1-6.2

⁴ Recommendation Rec(2006)13 of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974th meeting of the Ministers' Deputies)

<https://pipeu.coe.int/documents/41781569/42171329/CMRec+%282006%29+13+on+the+use+of+remand+in+custody%2C+the+conditions+in+which+it+takes+place+and+the+provision+of+safeguard+against+abuse.pdf/ccde55db-7aa4-4e11-90ba-38e4467efd7b>

⁵<https://www.coe.int/en/web/cpt/remand-detention?utm>

Գոյություն ունեցող այս և մի շարք այլ միջազգային փաստաթղթերով ձևավորված մոտեցումները հանգում են նրան, որ կալանքը պետք է կիրառվի որպես բացառություն և ոչ որպես կանոն, և պետությունների քրեական համակարգերում խրախուսվում է այլընտրանքային փախանման միջոցների ներդրումն ու արդյունավետ կիրառումը:

II. Ընդհանուր տվյալներ դիտարկված գործերի վերաբերյալ

Ուսումնասիրության ընթացքում 242 գործով 115 մեղադրյալի նկատմամբ դիտարկված նիստից առաջ որպես խափանման միջոց կիրառված էր տնային կալանքը, որոշ դեպքերում՝ համակցված այլ խափանման միջոցների հետ: 115 մեղադրյալից **9-ը (8%)** եղել են իգական սեռի:

Դիտարկված գործերով տնային կալանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը եղել է շուրջ 15 ամիս⁶: Այս գործով մեղադրյալին վերագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված արարքը /խոշոր չափերով գողություն՝ տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով/:

Դիտարկված գործերը քննվել են տարբեր դատավորների վարույթում: Քանի որ նիստերը ընտրվել են պատահականության սկզբունքի հիման վրա, նույն դատավորի կողմից քննված և դիտարկված նիստերի քանակը տարբերվել է և տատանվել է 1-ից մինչև 5 նիստ:

Մեղադրյալների մասին տեղեկություններ

Դիտարկված գործերով ներգրավված են եղել 1-ից մինչև 16 մեղադրյալ:

Մեղադրյալներից **7-ը (6%)** օտարերկրյա պետության քաղաքացիներ են, մասնավորապես՝ 3-ը՝ ՌԴ, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության, Իրանի, ԱՄՆ և Լիբանանի մեկական քաղաքացի: 7 մեղադրյալի դեպքում քաղաքացիության հարցը չի քննարկվել, իսկ դատալեքսում նշում առկա չէ:

⁶ ԵԴ1/1871/01/23

Բոլոր օտարերկրացիները ներկայացված են եղել պաշտպանի կողմից, ընդ որում՝ 2-ը՝ հանրային պաշտպանի:

Դիտարկված գործերով 5 մեղադրյալները հայերենի չեն տիրապետել, բոլոր նման դեպքերում նիստին մասնակցել է թարգմանիչ: Հատկանշական է, որ 5-ից 3-ը ՀՀ քաղաքացիներ էին: Օտարերկրյա քաղաքացիներից ոմանք էթնիկ հայեր էին, և թարգմանության կարիք չեն ունեցել:

Դատվածություն

Ուսումնասիրված գործերից 13-ով (11%) ներգրավված մեղադրյալները ունեցել են դատվածություն, իսկ ևս 3-ը՝ մարված: Մեկ դեպքում դատալեքսում տեղադրված տվյալները հակասական են՝ ընդհանուր տվյալներում նշված է դատված, իսկ դատական ակտում՝ մեղադրյալի անձնական տվյալների հատվածում՝ չդատապարտված: 9 դեպքում դատվածության առկայության կամ բացակայության վերաբերյալ որևէ տեղեկություն նշված չի եղել:

Դատվածության առկայությունը քննարկվել է դատարանի կողմից հատկապես հանցանք կատարելը կանխելը հիմքը քննարկելիս: Բոլոր դեպքերում այս գործոնը վկայակոչվել է որպես հանցանք կատարելու հավանականությունը բարձրացնող գործոն և դրվել է տնային կալանքը երկարացնելու հիմքում:

Հատկանշական է, որ միատեսակ չէ դատական կազմերի մոտեցումը մարված դատվածության հանգամանքին: Որոշ դեպքերում դատարանը նշել է, որ դատվածության մարված լինելը չի կարող օգտագործվել անձի դեմ, իսկ մյուս դեպքում դատարանը նշել է, որ թեև մարված, սակայն կոնկրետ արարքի համար դատվածության առկայությունը չի կարող անտեսվել:

Օրինակ, գործերից մեկով դատարանը նշել է, որ մեղադրյալը նախկինում դատապարտված է եղել, սակայն արդեն իսկ կրել է պատիժը: Ինչ վերաբերում է սույն քրեական վարույթի շրջանակում ենթադրաբար կատարված արարքին, ապա Դատարանը դրա վերաբերյալ կարծիք չի հայտել, քանի որ *«նախքան ներկայացված մեղադրանքի վերաբերյալ վերոհիկտ կայացնելը դատարանը մեղադրանքի հիմնավորվածության հարցին չի կարող անդրադառնալ: Ուստի Դատարանն արձանագրում է, որ բացակայում է հանցանք կատարելը կանխելու անհրաժեշտությունը»*⁷:

Մեկ այլ գործով մեղադրյալին վերագրվել է թմրամիջոցների շրջանառություն: Դատարանը փաստել է, որ մեղադրյալի վերաբերյալ ՀՀ ինֆորմացիոն կենտրոնի

⁷ ԵԴ1/1772/01/24

կողմից տրված պահանջագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեև վերջինի դատվածությունները մարված են, սակայն նախկինում կատարված հանցագործությունները կրկին վերաբերում են թմրամիջոցների շրջանառությանը: Դատարանը նշել է, որ «թեև, իրավացիորեն, որևէ կերպ անձի մարված դատվածությունները չեն կարող վերջինի համար առաջացնել իրավական առումով անբարենպաստ հետևանքներ, սակայն դրանք չեն կարող անտեսվել Դատարանի կողմից՝ չգնահատվելով, որպես մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքներ»: Դատարանն արձանագրել է, որ մեղադրյալը մշտապես քրեական հետապնդում իրականացնող մարմինների ուշադրության կենտրոնում է, այն էլ մեծապես թմրամիջոցների շրջանառությանը վերաբերելի վարույթների շրջանակներում: Բացի այդ, մեղադրյալի վերաբերյալ դատարանում քննվող երկու վարույթների շրջանակներում էլ մեղադրյալին վերագրվող արարքներում մատնանշվում է նույն տեսակի թմրամիջոցը: Դատարանը երկարաձգել է տնային կալանքը ժամկետը՝ գտնելով, որ այլ խափանման միջոցները պիտանի չեն⁸:

Ընտանեկան կարգավիճակ

Ինչ վերաբերում է մեղադրյալների ընտանեկան կարգավիճակին, ապա վերջիններս մեծամասամբ եղել են ամուսնացած՝ 54 մեղադրյալ, 25-ը՝ ամուրի, 2-ը՝ ամուսնալուծված, մնացյալ դեպքերով համապատասխան տեղեկությունը հասանելի չի եղել:

Ուսումնասիրված գործերից 42-ի պարագայում գործով ներգրավված մեղադրյալները հայնտնել են, որ իրենց խնամքին ունեցել են այլ անձ, հիմնականում անչափահաս երեխաներ ու թոշակառու ծնողներ: Մեղադրյալների զգալի դեպքում տեղեկություն հասանելի չի եղել:

Մեղադրյալի խնամքին այլ անձ լինելու հանգամանքը, ի թիվս այլ հանգամանքների, որոշ դեպքերում դատարանի կողմից հաշվի է առնվել խափանման միջոցը փոխելիս:

Մասնավորապես, տնային կալանք խափանման միջոցը բացակայելու արգելք և վարչական վերահսկողություն խափանման միջոցով փոխելիս դատարանը նշել է, որ «*մեղադրյալն ունի մշտական բնակության վայր, չունի դատվածություն, խնամքին է տարեց մայրը*»⁹:

⁸ ԵԴ1/2221/01/23

⁹ ԵԴ1/0926/01/24

Այնուամենայնիվ, այս գործոնը ոչ բոլոր դեպքերում է վճռորոշ եղել դատարանի համար, անգամ այն դեպքում, երբ մեղադրյալը ունեցել է խնամքին այլ անձ ու տնային կալանքով պայմանավորված հնարավորություն չի ունեցել ապահովել այլ խնամքը:

Մեկ այլ գործով, չնայած դատարանին ներկայացվել է մեղադրյալի խնամքին երեք անչափահաս երեխաներ ունենալու հանգամանքը և այդ փաստը քննարկվել է դատավորի կողմից, սակայն տնային կալանք խափանման միջոցը երկարաձգվել է, քանի որ դատարանը գտել է, որ *«ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի կողմից քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունն առկա է, քանի որ գործը գտնվում է նախնական դատալսումների փուլում, դեռևս չի հարցաքննվել տուժողը¹⁰»*:

Կրթություն

Գործերով ներգրավված մեղադրյալների կրթական մակարդակը տարբեր է եղել: **22** դեպքում մեղադրյալները ունեցել են բարձրագույն կրթություն, և 3-ը՝ թերի բարձրագույն, 3-ը՝ միջին մասնագիտական, 35 դեպքում՝ միջնակարգ կրթություն, մեկը՝ չի ունեցել անգամ միջնակարգ կրթություն (եռամյա), իսկ մնացյալ դեպքերում կրթության մասին տեղեկություններ հայտնի չի եղել:

Առողջական վիճակ

Գործերի գերակշիռ մասի պարագայում մեղադրյալի առողջական վիճակի հարցը չի շոշափվել կամ տեղեկությունը հասանելի չի եղել: **19** գործող մեղադրյալները ունեցել են առողջական խնդիրներ, ինչը արձանագրվել է դատարանի կողմից: Առանձին դեպքերում մեղադրյալի առողջական խնդիրները կարևոր գործոն են եղել խափանման միջոց ընտրելիս:

Գործերից մեկով մեղադրողը միջնորդել է երկարացնել տնային կալանքի ժամկետը: Դատարանը մերժել է այդ միջնորդությունը, այդ թվում՝ նշելով առողջական վիճակի գործոնը:

«Մեղադրյալին մեղսագրվող ենթադրյալ արարքները դասվում են միջին ծանրության հանցագործությունների շարքին, որոնց համար որպես պատիժ նախատեսվում է նաև տուգանքի ձևով, ինչպես նաև հաշվի առնելով, որ մեղադրյալը շուրջ ութ ամիս գտնվել է անազատության մեջ և ունի առողջական խնդիրներ՝ Դատարանը գտնում է, որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց տնային կալանքի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունը բացակայում է:

¹⁰ ԵԴ1/0749/01/24

Վերոգրյալի համատեքստում Դատարանն արձանագրում է, որ թեև որոշակիորեն հավանական է մեղադրյալի կողմից նոր հանցանք կատարելու և իր վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված քրեական վարույթին խոչընդոտելու ռիսկը, այնուամենայնիվ, հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև մեղադրյալի առողջական խնդիրները, Դատարանը գտնում է, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը կարելի է ապահովել նրա նկատմամբ ընտրված գրավ և բացակայելու արգելք խափանման միջոցների համակցությամբ»¹¹:

Մեկ այլ գործով դատարանը հաշվի է առել մեղադրյալի առողջական վիճակի վերաբերյալ գործում առկա տվյալները, բուժման նպատակով նրան անհրաժեշտ գումարի բացակայությունը, նվազեցրել է գրավի չափը 3.000.000 ՀՀ դրամից 1.500.000 ՀՀ դրամ, իսկ գրավի մնացած մասը՝ 1.500.000 ՀՀ դրամը՝ վերադարձրել գրավատուին¹²:

Այնուամենայնիվ, այլ գործով մեղադրյալի մոտ առողջական խնդիրների առկայությունը դատարանի կողմից որպես բավարար հիմք չի գնահատվել տնային կալանքը այլ խափանման միջոցով փոխելու համար:

Այդպես, գործերից մեկով դատարանը, անդրադառնալով պաշտպանական կողմի՝ մեղադրյալի առողջական լուրջ խնդիրներ ունենալու փաստարկին, արձանագրել է, որ խափանման միջոցի հիմքերի առկայության պայմաններում՝ փախուստի ռիսկի և տուժողի ու վկանեից մեկի չհարցաքննված լինելու հիմնավորմամբ, ընդհուպ հաշվի առնելով մեղադրյալի առողջական վիճակը, առավել մեղմ՝ ազատությունից չզրկելու հետ կապված խափանման միջոցները կամ դրանց համակցությունն ի գործ էն ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագծը: Այս համատեքստում Դատարանն արձանագրել է, որ մեղադրյալը, գտնվելով տնային կալանքի տակ, հաճախակի այցելում է բժշկական հաստատություն և ստանում համապատասխան բուժում, և սույն խափանման միջոցի կրման ընթացքում երբևէ որևէ խոչընդոտ չի առաջացել մեղադրյալի՝ բժշկական օգնություն ստանալու հետ կապված, ուստի, հաշվի առնելով, որ առկա չէ փաստական տվյալ մեղադրյալի առողջական վիճակի՝ տնային կալանքի հետ անհամատեղելիության վերաբերյալ, Դատարանը գտել է, որ պաշտպանական կողմի նման պատճառաբանությունը հիմնավոր չէ: Վերոգրյալի հիման վրա Դատարանը տնային կալանքի ձևով ընտրված խափանման միջոցի ժամկետը երկարաձգել է առավելագույն ժամկետով¹³:

Մինևույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ չնայած պաշտպանության կողմի ներկայացրած փաստարկին առ այն, որ տնային կալանքի ընթացքում

¹¹ ԵԴ1/0984/01/24

¹² ԵԴ1/2221/01/23

¹³ ԵԴ1/1670/01/24

մեղադրյալի առողջական վիճակը վատթարացել է, դատարանը այդ հանգամանքին չի անդրադարձել, մանրամասները չի քննարկել, չնայած վերջնական որոշմամբ խափանման միջոցը մեղմացել է, կիրառվել է վարչական հսկողությունը և գրավը¹⁴:

Զբաղվածություն

Ինչ վերաբերում է մեղադրյալի զբաղվածությանը, ապա նրանցից 32-ը եղել են գործազուրկ, 34-ը՝ ունեցել ֆորմալ կամ ոչ ֆորմալ զբաղվածություն, ոմանք շարունակում էին համարվել աշխատակից, մեկը՝ կենսաթոշակառու: Մնացածի դեպքում տեղեկությունները առկա չեն: Առանձին գործերով դատական նիստերի մշտադիտարկումից պարզվել է, որ անձը ունի զբաղվածություն և աշխատանք, սակայն զբաղվածության մասին տեղեկությունը datalex համակարգում չի արտացոլվել¹⁵:

Որոշ դեպքերում մեղադրյալը աշխատել է, բայց կորցրել է աշխատանքը քրեական վարույթով մեղադրյալի կարգավիճակով պայմանավորված:

Մեղադրյալների զբաղվածության և աշխատանք չունենալու հանգամանքը, այդ թվում՝ տնային կալանքի տակ լինելով պայմանավորված, խափանման միջոցի ընտրության և փոփոխության մասին որոշում կայացնելիս բարձրացվել է և քննարկվել դատարանի կողմից:

Գործերից մեկով տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալի պաշտպանը միջնորդել է փոփոխել խափանման միջոցը՝ նշելով տնային կալանքով պայմանավորված օրինական եկամուտ ստանալու հնարավորությունից զրկվելու և դրանով պայմանավորված վերջինիս և նրա ընտանիքի սոցիալական վիճակի վատթարանալու հանգամանքը: Մասնավորապես՝ նշվել է, որ տնային կալանքը կրելու հասցեում առկա է տարածք, որը մեղադրյալը ցանկանում է վարձակալությամբ տրամադրել և ստացված եկամտով հոգալ ընտանիքի հոգսերը: Չնայած խափանման միջոցը չի փոխվել, սակայն դատարանը թույլատրել է այդ տարածքը տալ վարձակալությամբ՝ հաշվի առնելով դրա՝ առանձնացված կարույց լինելու հանգամանքը: Դատարանը մասնավորապես նշել է.

«...տնային կալանք խափանման միջոց ընտրելիս և դրա պայմանները սահմանելիս Դատարանին չեն ներկայացվել մեղադրյալի սոցիալական վիճակի վերաբերյալ որևէ տեղեկություններ, ուստի ներկայացված հանգամանքը հանդիսանում է նոր: Անդրադառնալով նշված հանգամանքի՝ խափանման միջոցի պայմանները փոփոխելու բովանդակային բավարարության հարցին՝ Դատարանն արձանագրում

¹⁴ ԵԴ1/2170/01/23

¹⁵ ԵԴ1/2221/01/23, ԵԴ1/1754/01/24, ԵԴ1/2544/01/24, ԵԴ1/2847/01/24

Է, որ 2024 թվականի հունիսի 7-ի որոշմամբ սահմանվել է, որ առկա է խոչընդոտման հիմք՝ պայմանավորված մեղադրյալի ենթադրյալ քաղաքական, գաղափարական հայացքներով: Դատարանն արձանագրում է, որ պաշտպանության կողմի միջնորդության մասնակի բավարարումը որևէ կերպ չի կարող ազդել խոչընդոտման հիմքի վրա: Մասնավորապես՝ մեղադրյալի տան՝ հատակագծի վերին ձախ հատվածում գտնվող առանձնացված շինության մեջ ՀՀ քաղաքացի և միաժամանակ ազգությամբ հայ չհանդիսացող անձանց հյուրընկալելը թույլատրելը և միևնույն ժամանակ մեղադրյալի մոտքը նշված հատված արգելելը չի կարող խոչընդոտման ռիսկերն ավելացնել, ուստի այդ մասով միջնորդությունը ենթակա է բավարարման»¹⁶:

Դիտարկված գործերից մեկով մեղադրյալի նկատմամբ երկու անգամ ընտրվել է տնային կալանք խափանման միջոցը, որի հերթական քննարկման ժամանակ պաշտպանական կողմը միջնորդել է տնային կալանքը փոփոխել և նրա նկատմամբ կիրառել վարչական հսկողություն, ինչը հնարավորություն կտա վերջինին աշխատել և հոգ տանել իր երեք անչափահաս զավակների ու առողջական խնդիրներ ունեցող կնոջ նկատմամբ: Դատարանը գտել է, որ քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է, ստացված ապացույցները պատշաճ փաստաթղթավորվել են և ներկայացվել դատարան, մեղադրյալը տնական ժամանակ գտնվել է անազատության մեջ, որպիսի պայմաններում նրա կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու, մասնավորապես՝ քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունը բավարար չէ նրա նկատմամբ տնային կալանքի ձևով խիստ խափանման միջոց կիրառելու, դրա ժամկետը երկարաձգելու համար: Միևնույն ժամանակ դատարանն ընդունել է, որ մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովումը հնարավոր է իրականացնել նաև վարչական հսկողության հետ համակցված վերջինի նկատմամբ բացակայելու արգելք խափանման միջոցի կիրառմամբ, որի պայմաններում համարժեքորեն կսահմանափակվի մեղադրյալի տեղաշարժվելու իրավունքը, սակայն որը չի խոչընդոտի վերջինի աշխատելու կամ ազատ տեղաշարժվելու հնարավորությանը¹⁷:

Մեկ այլ գործով ևս դատարանը վկայակոչել է աշխատելու անհնարինության խնդիրը: Այդպես, որոշման մեջ դատարանը նշել է.

«Սույն համատեքստում Դատարանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ անցած ժամանակահատվածում մեղադրյալը դրսևորել է պատշաճ վարքագիծ, չեն արձանագրվել վերջինիս կողմից տնային կալանքի պայմանները խախտելու դեպքեր: Բացի այդ, Դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ տնային կալանքի համապատասխան սահմանափակումներով պայմանավորված մեղադրյալը զրկված է աշխատելու հնարավորությունից, ինչը բացասական կերպով է

¹⁶ ԵԴ1/0994/01/24

¹⁷ ՍԴ1/0042/01/24

անդրադառնում վերջինիս և իր ընտանիքի գույքային դրության վրա: Դատարանի գնահատմամբ վերը նշված հանգամանքները վարույթի սույն փուլում այնքա վկայում են այն մասին, որ մեղադրյալի մասնավոր շահը գերակշռում է հանրային շահին: Յետևապես՝ Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում այլ՝ առավել մեղմ այլընտրանքային խափանման միջոցների՝ վարչական հսկողության և բացակայելու արգելքի համակցությունը կարող է լինել գործուն երաշխիք՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում Արամ Խալաթյանի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը չեզոքացնելու համար: Այլ կերպ՝ Դատարանը գտնում է, որ վարչական հսկողություն և բացակայելու արգելք այլընտրանքային խափանման միջոցների համակցությունն ի գործ է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը գործի հետագա քննության փուլում»¹⁸:

Գործերից մեկով պաշտպանը նշել է, որ գործի ընթացքն անընդհատ հետաձգվում է, ուստի խնդրել է մեղադրյալի նկատմամբ կիրառված տնային կալանքը փոխել վարչական հսկողությամբ՝ ընտանեկան վիճակով և աշխատանք չունենալու հանգամանքներով պայմանավորված, նշել է նաև մեղադրյալի կողմից ջերմոցի արտադրանքը իրացնելու անհրաժեշտությունը: Դատարանը երկարացրել է տնային կալանքի ժամկետը ևս երեք ամսով: Դատարանը հղում է կատարել նախորդիվ կայացրած որոշման մեջ արձանագրված ռիսկերի, այդ թվում՝ նախաքննության ժամանակ իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերված լինելը և քրեական գործով մի քանի տարաբնույթ հանցագործություններում մեղադրվելը, որոնք կատարվել են տարբեր ժամանակահատվածում, և եզրահանգել, որ դատավարական սույն փուլում ի հայտ չեն եկել այնպիսի նոր հանգամանքներ, որոնք էականորեն կնվազեցնեին դատարանի որոշմամբ արձանագրված ռիսկերը, ուստի դեռևս շարունակվում են առկա լինել վերը նշված՝ մեղադրյալի փախուստը կանխելու և մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու հիմքերի մտավախությունը, և այլընտրանքային խափանման միջոց տնային կալանքից բացի, որևէ այլ այլընտրանքային խափանման միջոց ի գործ չի լինի ապահովել մեղադրյալի օրինական վարքագիծը: Չբաղվածության առնչությամբ դատարանն առաջարկեց մեղադրյալին մթերքի իրացման փաստացի անհրաժեշտության ի հայտ գալու դեպքում գրավոր կամ պաշտպանի միջոցով տեղեկացնել դատարանին, իսկ դատարանը կթույլատրի մթերքի իրացման գործընթացին ներգրավվել¹⁹:

Չարկ է նշել նաև աշխատանք չունենալու գործոնը որպես ռիսկը բարձրացնող հանգամանք վկայակոչելու դեպքերը: Այդպես, գործերից մեկով մեղադրողը պնդել է, որ առկա է բարձր հավանականություն, որ մեղադրյալը, ազատության մեջ հայտնվելով, կկատարի հանցանք, քանի որ չի աշխատում: Դատարանն արձանագրել է, որ այդ կալանավորման հիմքի առկայությունը հիմնավորված չէ,

¹⁸ ԵԴ1/1118/01/24

¹⁹ ԵԴ1/0317/01/23

քանի որ մեղադրյալի վերաբերյալ դատվածության տեղեկանքի ուսումնասիրությունից երևում է, որ վերջինս նախկինում դատապարտված չի եղել: Հետևաբար՝ միայն այն հանգամանքը, որ այս պահին մեղադրյալը չի աշխատում, դեռևս չի փաստում, որ նա հանցավոր ճանապարհով կփորձի ձեռք բերել ապրուստի միջոց²⁰:

Ուսումնասիրված գործերը ըստ հանցանքի տեսակի

Դիտարկված գործերով մեղադրյալները հիմնականում մեղադրվել են հետևյալ հանցանքների կատարման մեջ՝

- Թմրամիջոցների օգտագործում, ապօրինի շրջանառություն, իրացում և մաքսանենգություն՝ 33 անձ,
- Խուլիգանություն՝ 17 անձ,
- Հրագենի ապօրինի շրջանառություն և պահպանում՝ 15 անձ,
- Անձի առողջությանը ծանր վնաս հասցնել՝ 10 անձ,
- Կաշառք ստաբալը՝ 8 անձ,
- Գողություն՝ 8 անձ,
- Սպանության փորձ՝ 6 անձ,
- Հանցավոր կազմակերպությանը մասնակցելը՝ 5 անձ,
- Խարդախություն՝ 4 անձ և այլն:

III. Կողմերի մասնակցությունը նիստին

Մեղադրյալի բացակայությամբ նիստեր

Դիտարկված գործերով միայն **երկու** մեղադրյալ ներկա չէին նիստին: Գործով նշված նիստին ներկա են եղել բացակայող մեղադրյալի պաշտպանը և հանրային մեղադրողը: Այս գործերով մեղադրողը երկու դեպքում միջնորդել է երկարացնել տնային կալանքի ժամկետը, գործերից մեկով պաշտպանը չի առարկել՝ նշելով, որ այդ խափանման միջոցն ընդունելի է²¹:

Նիստերը դիտարկվել են դատարանում, նիստի ընթացքում դատարանը որոշել է խափանման միջոց տնային կալանքը թողնել անփոփոխ: Նիստի ժամանակ

²⁰ ԵԴ1/1823/01/24

²¹ ԵԴ1/3434/01/24

դատարանը որոշումը գրեթե չի հիմնավորել, իսկ որոշման տեքստը տեղադրված չէ դատալեքս համակարգում, ուստի դատարանի հիմնավորումները հասանելի չեն:

Հատկանշական է, որ այդ նիստերից մեկով, երբ դատավորը փորձել է պարզել պաշտպանից, թե արդյոք տեղյակ է, թե ինչու ներկա չէ մեղադրյալը, պաշտպանը պատասխանել է, որ դատավորի հարցին ի պատասխան, թե արդյոք տեղյակ են, թե ինչու չի բերվել, պաշտպանը պատասխանեց, որ չի խոսել պաշտպանյալի հետ, քանի որ արգելված է հեռահաղորդակցության միջոցներից օգտվելը: Դատավորի ճշտող հարցին ի պատասխան, թե ինչպե՞ս է պաշտպանի հետ շփվելը արգելված, վերջինս պատասխանեց, որ մեղադրյալը պաշտպանների հետ հեռախոսով չի խոսում²²:

Պաշտպանի մասնակցությունը

Դիտարկված գործերով 115-ից 111 (97%) մեղադրյալներ հանդես է եկել պաշտպանի մասնակցությամբ, որից 17-ի (15%) պարագայում ներգրավված է եղել հանրային պաշտպան: 2 մեղադրյալի դեպքում այդ հանգամանքը պարզ չէ, քանի որ դատալեքսում հրապարակված որոշման մեջ այդ տվյալը արտացոլված չէ:

Դիտարկված գործերով երկու մեղադրյալ չեն ունեցել պաշտպան²³: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ խափանման միջոցը փոփոխվել է: Երկու դեպքում էլ կիրառված է եղել տնային կալանք բացակայելու հետ համակցված: Դատարանը երկու դեպքում էլ որոշել է վերացնել տնային կալանքը, իսկ բացակայելու արգելքը թողնել անփոփոխ:

Մեկ դեպքում մեղադրողը միջնորդել է երկարացնել տնային կալանքը՝ վարույթին խոչընդոտելու ռիսկով պայմանավորված, քանի որ դեռևս չեն հետազոտվել ապացույցները: Մեղադրյալը դատարանին տեղեկացրել է, որ այն հասցեում, որտեղ կրում է տնային կալանքը, տան վարձակալության պայմանագրի ժամկետը լրացել է, և սեփականատերը նոր վարձակալության պայմանագիր չի կնքել, ուստի խնդրել է տնային կալանքի ժամկետը երկարացնելու դեպքում որպես հասցե նշել իր պապին պատկանող տան հասցեն: Դատարանը որոշել է տնային կալանքը վերացնել՝ պահպանելով նրա նկատմամբ կիրառված բացակայելու արգելքը: Դատարանը նշել է, որ «*քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է և հաստատված մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկվել է դատարան*»:

²² ԵԴ1/1287/01/24

²³ ԵԴ1/0796/01/24, մեղադրյալը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված արարքի մեջ; ԵԴ1/1772/01/24, մեղադրյալը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու մեջ:

Այսինքն՝ վարույթի նախաքննության ընթացքում կատարվել են հիմնական ապացույցների հավաքմանը, ձեռքբերմանը ուղղված քննչական, դատավարական գործողությունները, ուստի մեղադրյալի կողմից ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու ռիսկն ըստ էության վերացել է: Առավել ևս, որ վարույթով մեղադրյալը չունի հանցակիցներ և չկան դատակոչված վկաներ: Ինչ վերաբերում է մյուս հիմքերին՝ մեղադրյալի կողմից փախուստը կամ հանցանքի կատարումը կանխելուն, ապա դատարանը սույն իրավիճակում գտնում է, որ նման հիմքեր առկա չեն»: Դատարանը նաև հաշվի է առել այլ հանգամանքներ, այդ թվում՝ մեղադրյալի անձը՝ այն որ երբևէ քրեական պատասխանատվության չի կանչվել, և խնամքին չորս անչափահաս երեխա ունենալը: Նշենք, որ այս գործով մեղադրյալին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված արարքը (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը):

Երկրորդ գործով նույնպես մեղադրողը միջնորդել էր երկարացնել տնային կալանքի ժամկետը, իսկ մեղադրյալն առարկել էր: Դատալեքս համակարգում տեղադրված որոշումը մանրամասներ չի պարունակում, թե՛ մեղադրողի միջնորդության, թե՛ մեղադրյալի առարկության առնչությամբ: Այնուամենայնիվ, դատարանը գտել է, որ փախուստի ու հանցանք կատարելու ռիսկ առկա չէ, թեև նշել է, որ նախկինում դատված է եղել մեղադրյալը, բայց ընդգծել է, որ արդեն կրել է պատիժը: Իսկ օրենքով իր վրա դրված պարտականությունների չկատարման հիմքի առնչությամբ Դատարանն արձանագրել է, որ քրեական գործով առկա է մեկ վկա, որը հանդիսանում է ոստիկանության աշխատակից, ուստի ենթադրությունն առ այն, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է անօրինական ազդեցություն գործադրել վկայի վրա, գտնվում է նվազ մակարդակում: Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը արձանագրել է, որ մեղադրյալի կողմից վարույթին խոչընդոտելու հիմքը գտնվում է այնպիսի մակարդակում, որ վերջինիս պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել անազատության հետ չկապված այլընտրանքային խափանման միջոցների կիրառմամբ, այն է՝ «բացակայելու արգելք» այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ: Այս գործով մեղադրյալը մեղադրվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու մեջ (գողություն):

8 գործով պաշտպանը ներկա չի եղել նիստերին, նրանցից 4-ը հանդիսացել են հանրային պաշտպան: 5 դեպքում դատարանը որոշել է տնային կալանքի ժամկետը երկարացնել, որոշ դեպքերում՝ գրավի համակցությամբ: Թեև հիմնականում դատարանը վկայակոչել է օրենքով մեղադրյալի վրա դրված

պարտականությունների չկատարման ռիսկը, հինգ գործից երկուսով դատարանը հիմք է ընդունել հանցանք կատարելու ռիսկը, ընդ որում՝ երկու դեպքում էլ մեղադրյալը կին էր:

Երեք դեպքում դատարանը վերացրել է տնային կալանքը՝ կիրառելով բացակայելու արգելք խափանման միջոցը, ընդ որում՝ մի դեպքում վարչական հսկողության հետ համակցությամբ:

Մեղադրողի բացակայությամբ նիստեր

Դիտարկված գործերով երեք նիստին ներկա չէր հանրային մեղադրողը: Երեք դեպքում էլ տնային կալանքը երկարաձգվել է²⁴:

IV. Նախկինում ընտրված խափանման միջոցի պայմանների խախտում

Դիտարկված գործերից **5-ի** պարագայում արձանագրվել է նախկինում ընտրված խափանման միջոցի պայմանների խախտում²⁵: Նշված գործերից մեկով կհարմվել է կալանք, մեկ այլ գործով՝ վարչական հսկողություն, իսկ մնացած դեպքերում՝ տնային կալանքը երկարաձգվել:

Այդ գործերից մեկով գրանցվել է «Բացակա վերահսկողության ժամանակահատվածում» խախտման տեսակ: Մասնավորապես՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Էլեկտրոնային մոնիթորինգի բաժնի համակարգողի կողմից կազմված արձանագրության համաձայն՝ աշխատակիցը չի կարողացել կապ հաստատել մղադրյալի հետ, զանգին պատասխանել է մայրը և ասել, որ տղան լողանում է: Ըստ պրոբացիայի ծառայողի՝ տեղեկությունը հավատ չի ներշնչել, ուստի վերոգրյալի մասին կատարվել է ահազանգ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության 1-02 հեռախոսահամարին: Ավելի ուշ ժամի պրոբացիայի ծառայողի հետ կապ է հաստատել մեղադրյալի հայրը և հայտնել, որ տղան աննկատ տնից դուրս է եկել: Իսկ Պրոբացիայի ծառայության նույն բաժնի համակարգողի կողմից կազմված արձանագրության համաձայն՝ երբ կապ է հաստատել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Էրեբունի վարչական շրջանի բաժանմունքի հերթապահի հետ, վերջինս հայտնել, որ մեղադրյալը տանը չէր: Դատարանը որոշել

²⁴ ԵԴ1/3303/01/24

²⁵ ԵԴ1/0193/01/24, ԵԴ1/1728/01/24, ԵԴ1/0317/01/23, ԵԴ /1237/01/22, ԵԴ1/1334/01/23

Է մեղադրյալի նկատմամբ կիրառված տնային կալանքը փոխել կալանքով՝ 3 ամիս ժամկետով, և նրան արգելանքի վերցնել դատական նիստերի դահլիճում²⁶:

Մեկ այլ գործով մեղադրյալի խափանման միջոցի վերաբերյալ դիրքորոշում հայտնելով՝ հանրային մեղադրողը նշել է, որ նախաքննության ընթացքում վերջինիս նկատմամբ կիրառված է եղել տնային կալանքը, իսկ մեղադրյալը խախտել է վերոնշյալ խափանման միջոցի պայմանները, մասնավորապես՝ իր բնակարանում ընդունել է այնպիսի անձանց, որոնց այցը սահմանափակված է եղել դատարանի որոշմամբ: Բացի այդ, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության մարմնից ստացվել են թվով 9 իրազեկումներ մեղադրյալի կողմից խախտում կատարելու մասին: Հանրային մեղադրողը նշել է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մեղադրյալին ոստիկանության աշխատակիցները որևէ բժշկական հաստատություն կամ այլ վայր չեն ուղեկցել, որը ևս վկայում է այն մասին, որ մեղադրյալը չի կատարում իր վրա դրված պարտականությունները: Թեև մեղադրողը միջնորդել էր խստացնել խափանման միջոցը՝ կիրառել կալանք, այս գործով դատարանը վերացրել է տնային կալանքը՝ կիրառելով վարչական հսկողություն և գրավ խափանման միջոցները: Անդրադառնալով մեղադրողի կողմից նշված խախտումների՝ դատարանը նշել է, որ առկա չեն այնպիսի փաստական տվյալներ, որ նշված խախտումները կատարվել են մեղադրյալի նախաձեռնությամբ և վերջինս ունեցել է նման միտում: Դատարանը նշել է, որ քրեական գործի նախաքննությունը ավարտվել է, հարցաքննվել են գործով անցնող բոլոր անձինք և իրականացվել են այն բոլոր դատավարական գործողությունները, ուստի վարույթին միջամտելու ռիսկը նվազել է²⁷:

Երրորդ գործով Պրոբացիայի ծառայությունից գրություն էր ստացվել առ այն, որ երկու անգամ մեղադրյալը խախտել է տնային կալանքի պայմանները: Դատարանն այն որպես խախտում չհամարեց, քանի որ մեղադրյալը իր որդու գերեզմանն է այցելել: Հարկ է նշել, որ հանրային մեղադրողը նույնպես ընդգծել էր, որ գրություններում նշված հանգամանքները որպես խափանման միջոցի խստացնելու հիմք չի դիտարկում: Դատարանը երկարացրեց տնային կալանքը: Դատարանը նաև նշել է, որ մեղադրյալը գրկված չէ Դատարանի թույլտվությամբ համապատասխան հսկողության ներքո այցելել որդու գերեզմանին, որպիսի բնույթի միջնորդություն նախկինում ներկայացվել է և բավարարվել Դատարանի կողմից²⁸:

²⁶ ԵԴ1/0193/01/24

²⁷ ԵԴ1/1728/01/24

²⁸ ԵԴ1/0317/01/23: Այս գործով խափանման միջոցի մասին որոշման մեջ դատարանը անդրադարձել է երկու մեղադրյալի խափանման միջոցի հարցին միասին:

Մեկ այլ դեպքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ մեղադրյալը խախտել է վերահսկողության պայմանները և թողել տարածքը՝ սուրճ խմելու նպատակով: Դատարանը սակայն խափանման միջոցը չի փոխել, քանի որ այլ խախտումներ նախկինում չեն եղել, և զգուշացրել է մեղադրյալին, որ կրկնվելու դեպքում խափանման միջոցը կփոխվի²⁹:

Մյուս դեպքում կրկին տեղեկությունը ստացվել է Պրոբացիայի ծառայությունից և ներկայացվել ցանկ, թե քանի անգամ է մեղադրյալը տնից դուրս եկել անհայտ հասցեներով: Նշված խախտումների լույսի ներքո՝ մեղադրողը միջնորդել է տնային կալանքը փոխարինել կալանքով, քանի որ ներկայումս ընտրված խափանման միջոցը ի գործ չէ ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Պաշտպանական կողմը խախտումների առկայությունը բացատրել է պոլիկլինիկա այցելելու անհրաժեշտությամբ և ներկայացրել է բուժօգնություն ստանալու վերաբերյալ փաստաթղթեր: Դատարանը որոշել է տնային կալանքը փոխարինել կալանքով³⁰: Այս գործով որոշումը տեղադրված չէ դատալեքս համակարգում, ուստի դատարանի հիմնավորումներին ծանոթանալ հնարավոր չէ:

V. Նիստի ընթացքում կողմերի միջնորդություններն ու դիրքորոշումները խափանման միջոցի առնչությամբ

5.1 Հանրային մեղադրողի դիրքորոշումը

Դիտարկված նիստերից միայն **7-ի** դեպքում է հանրային մեղադրողը միջնորդել փոփոխել խափանման միջոցը, իսկ մնացած դեպքերում՝ թողնել անփոփոխ և երկարացնել ժամկետը: Ընդ որում՝ բոլոր դեպքերում մեղադրողը միջնորդել է կիրառել կալանք:

Հիշեցնենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կարևոր նախադեպ է ձևավորել նաև կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու վերաբերյալ: Այսպես, 2025 թվականի փետրվարի 28-ի թիվ ԱՐԴ/0180/01/23 որոշմամբ արձանագրվել է, որ ի ապահովումն անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքի՝ օրենսդիրը լրացուցիչ պայմաններ է նախատեսել կալանքից ազատված անձին կրկին կալանավորելու համար, եթե նրա վերաբերյալ միջնորդությունը մերժվել է կամ վերջինս համապատասխան որոշմամբ ազատվել է կալանքից: Այսպես, անձը *կրկին կարող է կալանավորվել միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող*

²⁹ ԵԴ1/1334/01/23

³⁰ ԵԴ /1237/01/22

*մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելիս կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելիս, և որոնք հիմնավորում են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը*³¹:

Որոշ դեպքերում որպես հիմնավորում հանրային մեղադրողը վկայակոչել է տնային կալանքի պայմանների խախտման դեպքեր, մինչդեռ մնացած դեպքերում որևէ նոր՝ խափանման միջոցի խստացումը հիմնավորող հանգամանք չի ներկայացվել:

Այդպես, ուսումնասիրված գործերից մեկով հանրային մեղադրողը նշել է, որ վարույթին խոչընդոտելու հիմքն առկա չէ, քանի որ գործով դատակոչված վկաները հանդիսանում են ոստիկանության աշխատակիցներ, որոնց նկատմամբ անօրինական ազդեցություն ունենալն անիրատեսական է: Մինևույն ժամանակ հայտնել է, որ առկա է մեղադրյալի կողմից փախուստի հավանականությունը, քանի որ մեղադրյալը նախաքննության ընթացքում թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և գտնվել է հետախուզման մեջ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ միջնորդել է մեղադրյալի նկատմամբ ընտրված տնային կալանք խափանման միջոցը փոխել կալանք խափանման միջոցով, սակայն չի նրկայացրել որևէ նոր հանգամանք: Նիստի ընթացքում պաշտպանն առարկել է հանրային մեղադրողի կողմից ներկայացված միջնորդության դեմ՝ հայտնելով, որ հանրային մեղադրողի կողմից մատնանշված փախուստի հիմքի առկայությունը մինչդատական վարույթում դատարանի որոշմամբ չի հաստատվել: Միաժամանակ միջնորդել է իր պաշտպանյալի նկատմամբ կիրառել անազատության հետ չկապված այլընտրանքային խափանման միջոցներ: Դատարանը տնային կալանքը վերացրել է, իսկ բացակայելու արգելք խափանման միջոցը թողել անփոփոխ³²:

Մեկ այլ գործով հանրային մեղադրողը միջնորդել է տնային կալանքը փոխարինել կալանքով, քանի որ մեղադրյալին առաջադրված մեղադրանքը համարվում է ծանր հանցագործություն, նշել է դեռևս չհարցաքննված վկաների և վերջիններիս վրա ազդելու հավանականության մասին, հիշատակել է մեղադրյալի կողմից քննությունից խուսափելու հանգամանքը և արարքի հանրային վտանգավորությունը: Տվյալ պարագայում խոսքը վերաբերել է խոշոր չափերով հափշտակությանը: Պաշտպանական կողմն առարկել է միջնորդության դեմ և նշել, որ նախ հանրային մեղադրողի կողմից որևէ նոր հանգամանք չի ներկայացվել, թե ինչու պետք է խափանման միջոցը խստացվի: Ներկայացվել է նաև, որ **կալանքից ազատված անձի նկատմամբ առանց էական փաստական**

³¹ ԱՐԴ/0180/01/23, <https://cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2772>

³² ԵԴ1/1981/01/24

հանգամանքների մատնանշմամբ չի կարող կիրառվել ավելի խիստ խափանման միջոց, մասնավորապես՝ կալանք խափանման միջոցը:

Պաշտպանը միջնորդել է վերացնել տնային կալանքը՝ պահպանելով գրավը և բացակայելու արգելք խափանման միջոցները: Դատարանը որոշել է մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց տնային կալանքը երկարաձգել ևս երեք ամիս ժամկետով³³: Որոշումը տեղադրված չէ դատալեքս համակարգում, ուստի որոշման հիմնավորումները հասանելի չեն:

Մեղադրողի կողմից տնային կալանքի պահպանման անհրաժեշտությունը հիմնավորելը

Հարկ է նշել, որ որոշ գործերով անգամ եթե դատարանի որոշումը տեղադրված է լինում, որոշման մեջ միշտ չէ, որ արտացոլված է մեղադրողի դիրքորոշումը և փաստարկները:

Հանրային մեղադրողի կողմից արդեն իսկ կիրառված խափանման միջոցը անփոփոխ թողնելու կամ խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դիրքորոշումներում հիմնականում ներկայացվել են նույնական փաստարկներ: Հիմնականում նշվել է, որ դեռևս չեն վերացել և/կամ պահպանվում են նախորդիվ կայացրած դատական ակտերում նշված տնային կալանքի կիրառման հիմքերը կամ որ ընտրված խափանման միջոցների փոփոխման անհրաժեշտությունը բացակայում է:

Որոշ դեպքերում կիրառվել է նաև այսպիսի տրամաբանություն՝ ըստ մեղադրողի, նախկինում հաստատված խափանման միջոցը կիրառելու բոլոր հիմքերը պահպանվում են, որևէ փոփոխություն առկա չէ, նոր հանգամանքներ ի հայտ չեն եկել, ուստի տնային կալանքի ժամկետը պետք է երկարաձգվի ևս երեք ամսով³⁴:

Առավել հաճախ մեղադրողի կողմից վկայակոչվել է այն հանգամանքը, որ գործը գտնվում է նախնական դատալսման փուլում, դեռևս չեն հարցաքննվել վկաները և չեն հետազոտվել ապացույցները, ուստի առկա է վարույթին խոչընդոտելու եղանակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունները չկատարելու հավանականությունը: Հիմնականում այդ հավանականությունը կոնկրետ հանգամանքներով չի հիմնավորվել, այլ կիրառվել է ընդհանրական ձևով:

Գործերից մեկով մեղադրողը նշել է. *«Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի՝ տնային կալանքի, ժամկետը անհրաժեշտ է երկարաձգել՝*

³³ ԵԴ1/0599/01/24

³⁴ ՍԴ1/0067/01/23

հաշվի առնելով մեղադրյալի կողմից վարույթին խոչընդոտելու ռիսկը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեռևս դատաքննության ընթացքում չեն հետազոտվել ապացույցները»: Այս դեպքում երկարաձգելու միջնորդությունը հիմնավորվել է ապացույցների հետազոտման անհրաժեշտությամբ, սակայն չի նկարագրվել դրանց վրա մեղադրյալի ազդեցության հնարավորությունները և դրանով պայմանավորված ռիսկերը կամ հասանելիության եղանակը: Ավելին՝ ինչպես նշել է դատարանը իր որոշման մեջ, գործով անգամ վկաներ չեն եղել դատակոչված: Մեղադրյալը հանդես է եկել առանց պաշտպանի: Դատարանի կողմից տնային կալանքը վերացվել է, թողնվել է բացակայելու արգելք խափանման միջոցը:

Մեկ այլ գործով հանրային մեղադրողը միջնորդել է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված տնային կալանքի ժամկետը երկարաձգել երեք ամիս ժամկետով՝ նշելով, որ շարունակում է առկա լինել վարույթին խոչընդոտելու եղանակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունները չկատարելու հավանականությունը: Հավելել է նաև, որ պետք է հարցաքննվի վկան, իսկ վկայի և մեղադրյալի միջև կապի առկայության մասին տեղեկություններ չունի: Պաշտպանը իր հերթին ներկայացրել է, որ մեղադրյալը դրսևորել է միայն պատշաճ վարքագիծ, կիրառված խափանման միջոցն ի գործ է ապահովել նրա պատշաճ վարքագիծը, սակայն հաշվի առնելով, որ նախաքննությունն ավարտվել է, և միայն մեկ վկա է դատակոչվել, մեղադրյալը նախաքննության ընթացքում աջակցել է վարույթն իրականացնող մարմնին, ուստի խոչընդոտելու եղանակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունները չկատարելու հավանականությունը նվազել է: Բացի այդ, պաշտպանը նշել է, որ մեղադրյալի երեխան նոր է ծնվել, ինչով պայմանավորված երբեմն անհրաժեշտություն է առաջանում, որ մեղադրյալի տուն բժիշկ այցելի, ուստի խնդրել է վերացնել տնային կալանքի հետ կիրառված սահմանափակումները: Դատարանը փոխել է տնային կալանքը բացակայելու արգելքով³⁵:

Նմանատիպ մոտեցմամբ գործերը, երբ մեղադրողը չի մանրամասնել, թե ինչով է վարույթին միջամտելու ռիսկը պայմանավորված և դրա հավանականության աստիճանը, և սահմանափակվել է ընդհանուր բնույթի պնդումներով, դիտարկված գործերի զգալի մաս են կազմել:

Հատկանշական է, որ այն գործերով, որոնցով վկաները ոստիկանության աշխատակիցներ են հանդիսացել, և՛ մեղադրողը, և՛ դատարանը նրանց վրա ազդելու ռիսկը քիչ հավանական է համարել գործերի ճնշող մեծամասնության

³⁵ ԵԴ1/2254/01/23

դեպքում³⁶, թեև որոշ գործերով մեղադրողը այս հանգամանքը չի շեշտադրել և ընդհանրական խոսել է ազդելու ռիսկի մասին³⁷:

Որոշ գործերով որպես հիմնական ռիսկային գործոն մեղադրողը նշել է փախուստի ռիսկը: Որպես փախուստի ռիսկը հիմնավորող հանգամանք մատնանշվել են հետևյալ հանգամանքներ՝ նախաքննության ժամանակ հետախուզման մեջ գտնվելը, նախաքննության ժամանակ ինքնական չներկայանալը, ոստիկանների կողմից հայտնաբերվելը, այլ վարույթով ներգրավված լինելը, հնարավոր պատժի խստությունը և այլն:

Որոշ դեպքերում մեղադրողը վկայակոչել է հիմք, որը նախորդիվ կայացված դատական ակտերով հաստատված չի համարվել: Նշված հանգամանքի մասին խոսել են և՛ պաշտպանը, և՛ որոշ գործերով՝ դատարանը:

Գործերից մեկով հանրային մեղադրողը նշել է, որ խափանման միջոց տնային կալանքը վերացնելու կամ փոփոխելու հիմքեր չկան, անհրաժեշտ է այն երկարաձգել, իսկ գրավը՝ թողնել անփոփոխ: Որպես հիմնավորում նշվել է, որ մեղադրյալի կողմից ապօրինի զենք իրացնելու մասով վարույթ է անջատվել, որը գտնվում է նախաքննության փուլում, իսկ մեղադրյալը ցուցմունքով հայտնել է, որ գտել է այդ զենքը, հետևաբար՝ առկա է նախաքննությանը խոչընդոտելու հավանականություն: Բացի այդ, առկա է նաև փախուստի դիմելու հավանականություն, քանի որ մեղադրյալը և նրա մոտ պահվող զենքը հայտնաբերվել է ոստիկանության աշխատակիցների կողմից: Այս առումով պաշտպանը նշել է, որ մեղադրյալի նկատմամբ տնային կալանք կիրառելիս դատարանն անդրադարձել է միայն գործի քննությանը խոչընդոտելու հավանականությանը: Մասնավորապես՝ դատարանը հստակ նշել է, որ հնարավոր է մեղադրյալն ազդի գործով դեռևս չհարցաքննված անձանց վրա: Դրանից հետո իրականացվել է նախաքննություն, որևէ անձ չի հարցաքննվել, որը դատակոչված լինի: Ըստ պաշտպանի՝ ներկայում այդ հիմքը վերացել է, առկա չէ որևէ անձ, որը պետք է հարցաքննվի դատարանում: Ինչ վերաբերում է անջատված մասին, ապա դրանով կատարվելիք գործողությունները կապ չունեն սույն վարույթի հետ: Հակառակ դեպքում քննությունը չպետք է անջատվեր և գործը չպետք է ուղարկվեր դատարան: Պաշտպանը պնդել է, որ փախուստի դիմելու վերաբերյալ որևէ տվյալ առկա չէ գործում, իսկ նախորդիվ դատարանը այդ հիմքը հաստատված չի համարել: Ավելին՝ երբ ոստիկանության աշխատակիցները մոտեցել են մեղադրյալին, նրան հարցրել են, թե արդյոք որևէ զենք ունի, վերջինս հայտնել է, որ մեքենայում ունի ինչպես օրինական պահվող, այնպես էլ ապօրինի զենք:

³⁶ ԵԴ1/1981/01/24

³⁷

Դատարանը վերացրել է տնային կալանքը, իսկ որպես համակցված խափանման միջոց ընտրված գրավը թողել է անփոփոխ³⁸:

Հատկանշական է, որ անջատված վարույթի շրջանակներում անհրաժեշտ գործողությունների հարցին անդրադառնալիս դատարանը նշել է, որ այլ վարույթի շրջանակներում սույն վարույթով մեղադրյալի ենթադրյալ վարքագծի հավանականության գնահատումը դուրս է դատարանի լիազորությունների շրջանակից և չի կարող արդարացնել սույն վարույթով մեղադրյալի ազատության իրավունքի հետագա սահմանափակումը: Այս կապակցությամբ դատարանն ընդգծել է, որ այլ վարույթով վարույթն իրականացնող մարմինն է իրավասու տվյալ վարույթի անհրաժեշտությունից ելնելով համապատասխան հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը քննարկել:

Դիտարկված որոշ գործերով մեղադրողը վկայակոչել է հանցանք կատարելու ռիսկը: Հատկանշական է, որ այդ հիմքը վկայակոչվել է նախկինում նույնաբնույթ հանցագործություն կատարելու, ինչպես նաև քաղաքական հայացքներով պայմանավորված արարքների դեպքում: Գործերից մեկով մեղադրողը որպես ռիսկի գործոն նշել է նաև մեղադրյալի՝ աշխատանք չունենալը:

Գործերից մեկով մեղադրողը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալը դատվածություն ունենալու պայմաններում կատարել է նույնատեսք արարք, առկա է հավանականություն առ այն, որ վերջինս, հայտնվելով ազատության մեջ, կկատարի հանցանք: Ելնելով նշվածից՝ հանրային մեղադրողը միջնորդել է մեղադրյալի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարաձգել երեք ամիս ժամկետով: Մեղադրյալը չի առարկել տնային կալանքի երկարաձգմանը: Դատարանն արձանագրել է, որ գործով ձեռք չեն բերվել այնպիսի նոր փաստական տվյալներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են նախկինում արձանագրված՝ մեղադրյալին տնային կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցանքի հանրային վտանգավորության աստիճանն և բնույթը, ուստի մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց տնային կալանքը վերացնելու կամ փոխելու փաստական հիմքեր չկան³⁹:

Մեկ այլ գործով, որով մի խումբ մեղադրյալներ մեղադրվում էին հավաքի ժամանակ զանգվածային անկարգություններին մասնակցելու մեջ, մեղադրողը միջնորդել է երկարացնել խափանման միջոցի ժամկետը՝ բոլորի վերաբերյալ նշելով հետևյալը.

³⁸ ԵԴ1/0353/01/24

³⁹ ԵԴ1/1802/01/24

«...մեղադրյալների կողմից նոր հանցանք կատարելու հավանականության ռիսկերի նվազման, փոփոխության հիմքեր առկա չեն: Հանցանքը կատարվել է հասարակության լայն շրջանակների ներկայությամբ և ոչ միայն հասարակության, այլ պետական իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության ներկայությամբ, ոչ միայն ներկայությամբ, այլ նաև՝ վերջիններիս նկատմամբ: Իհարկե նկատի չունենալ, որ գործով սույն մեղադրյալների և նրանց գործողությունների արդյունքում տուժել են կոնկրետ այս գործով ներգրավված տուժողները, այլ ընդհանուր համատեքստում նկատի ունենալ: Բացի այդ, գործը դեռևս գտնվում է նախնական դատալսումների փուլում, ուստի նաև մեղադրյալների վրա դրված պարտականությունների չկատարման համատեքստում, խոչընդոտելու կամ այլ կերպ միջամտելու հավանականությունը դեռևս առկա է, ու այս առումով գտնում են, որ խափանման միջոցի փոփոխման հիմքեր առկա չեն»⁴⁰:

Հատկանշական է, որ մեղադրողը նաև վկայակոչել է մեղադրյալների մեծ թիվը և նրանց մասնակցությունը նիստին ապահովելու անհրաժեշտությունը, որին հնարավոր է հասնել, եթե նրանց տեղափոխեն տնային կալանքի վայրից դատարան, այլ ոչ թե նրանք, ազատության մեջ գտնվելով, ինքնուրույն գան դատարան:

Այս գործով հատկանշական է պաշտպանական կողմի դիտարկումն առ այն, որ խափանման միջոցի հարցի նախորդ քննարկման ժամանակ՝ նախաքննության փուլում, քննիչը միջնորդել էր երկարացնել խափանման միջոցը՝ նշելով, որ անհրաժեշտություն կա մի շարք գործողություններ իրականացնելու: Ըստ պաշտպանի՝ քրեական գործը ավարտելուց հետո պարզ դարձավ, որ խափանման միջոցի կիրառման մասին որոշումից հետո քննիչի կողմից մատնանշված գործողությունները չեն կատարվել, ավելին՝ առհասարակ վարույթային որևէ գործողություն չէր կատարվել: Ըստ պաշտպանի՝ ներկայիս խափանման միջոցի քննարկումը օրգանապես կապված է նախորդ խափանման միջոցի հետ, որի հիմքում ընկած էին իրականությանը չհամապատասխանող տվյալներ: Պաշտպանը նշել է, որ հիմնական մեղադրանքի հիմքում ընկած է մեկ ոստիկանի ցուցմունք, որը բխում է տեսանյութից և տեսագրության արձանագրությունից: Հատկանշական է, որ այս գործով մեղադրողը չի նշել, որ ոստիկան-վկայի կամ տուժողի վրա ազդեցությունը իրատեսական չէ՝ ի տարբրության այլ գործերի: Այս առումով պաշտպանը նշել է. «*Եթե մեղադրողը կարծում է, որ հողագործ, տարրական կրթություն ունեցող իմ պաշտպանյալը կարող է ազդել ոստիկանության երկարամյա ստաժ ունեցող սպայի վրա, ապա մենք պետք է վերանայենք մեր պատկերացումները ոստիկանական համակարգի մասին*»: Պաշտպանը նաև նշել է, որ մեղադրյալը ունի երեք անչափաս երեխա և ընտանիքի միակ կերակրողն է, իսկ տնային կալանքի պայմաններում չի կարող աշխատել: Այս

⁴⁰ ԵԴ1/1754/01/24

գործով դատարանը վերացրել է տնային կալանքը՝ կիրառելով բացակայելու արգելք և վարչական հսկողություն խափանման միջոցները համակցությամբ⁴¹:

Մեկ այլ գործով, որով մեղադրյալին մեղսագրվում է խուլինգանություն՝ բողոքի ակցիայի ժամանակ ճանապարհը փակելու և այլ գործողություններ կատարելու միջոցով, մեղադրողը նշել է, որ դեռևս չի վերացել դատական ակտով նշված մեղադրյալի կողմից ապօրինի ազդեցություն գործադրելու եղանակով վարույթին խոչընդոտելու հավանականությունը, ինչպես նաև հաշվի առնելով երկրում առկա իրավիճակը (այլ բողոքի ակցիաների կազմակերպում), այն պայմանները, որոնցում տեղի է ունեցել մեղադրյալին մեղսագրվող արարքը՝ գտել է, որ առկա է նաև մեղադրյալի կողմից նույնաբնույթ արարք կատարելու հավանականությունը: Դատարանը այս գործով ևս վերացրել է տնային կալանքը՝ կիրառելով բացակայելու արգելք խափանման միջոցը⁴²:

Դիտարկման շրջանակներում արձանագրվել են նաև դեպքեր, երբ մեղադրողը փորձել է անհատականացնել հիմնավորումները՝ հղում անելով գործի հանգամանքներին:

Գործերից մեկով հանրային մեղադրողը միջնորդել է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված տնային կալանքի ժամկետը երկարաձգել երեք ամիս ժամկետով: Նախ, մեղադրողը վկայակոչել է առավել տարածված փաստարկը՝ ներկա փուլում շարունակում է առկա լինել մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը՝ հաշվի առնելով, որ գործը նոր է գտնվում դատաքննության փուլում, դեռևս չեն հետազոտվել ապացույցները, իսկ մեղադրյալը կարող է ազդել վկաների վրա: Այնուամենայնիվ, այս գործով նման պնդման հիմքում դրվել է տուժողի կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքն առ այն, որ մինչև մեղադրյալին իրավապահ մարմինների կողմից հայտնաբերելը, վերջինս մի քանի անգամ հանդիպել է նրա հետ, փորձել է համոզել, որ իր դեմ ցուցմունք չտա, իր դեմ տրված ցուցմունքները փոխի՝ իրեն օգնի: Տուժողը ներկայացրել է նաև ձայնագրություններ: Դատարանը վերացրել է տնային կալանքը, կիրառել է վարչական հսկողություն՝ արգելելով շփում ունենալ կոնկրետ անձանց հետ⁴³:

Դիտարկված գործերով տուժողները կամ դիրքորոշում չեն հայտնել, կամ միացել են հանրային մեղադրողի դիրքորոշման: Մեկ դեպքում դիրքորոշում են հայտնել, որ չեն ցանկանում, որ տնային կալանքը երկարաձգվի:

⁴¹ ԵԴ1/1754/01/24

⁴² ԵԴ1/1039/01/24

⁴³ ԵԴ1/2195/01/23

5.2 Պաշտպանական կողմի փաստարկները

Պաշտպանական կողմը հիմնականում պնդել է, որ տնային կալանքի պայմաններում ընտանիքի միակ կերակրող հանդիսացող մեղադրյալը չի կարողանում աշխատել և ընտանիքի ծախսերը հոգալ, նշվել են առողջական խնդիրները, նախաքննությունը ավարտված և ապացուցողական բազան հավաքագրված լինելը, տնային կալանքի հիմքերի վերացված լինելը, մեղադրողի կողմից տնային կալանքի երկարաձգման անհրաժեշտությունը հիմնավորած չլինելը, մեղադրյալը պատշաճ վարքագիծը և այլն:

Հատկանշական է, որ որոշ դիտարկված գործերով պաշտպանը և/կամ մեղադրյալը չեն առարկել տնային կալանքի երկարաձգմանը⁴⁴:

Գործերից մեկով մեղադրողը պնդել է, որ առկա է հավանականություն, որ մեղադրյալը չի կատարի օրենքով իր վրա դրված պարտականությունները: Պաշտպանն առարկել է հանրային մեղադրողի միջնորդության դեմ՝ հայտնելով, որ իրենց կողմից համապատասխան փուլում միջնորդություն է ներկայացվելու համաձայնեցված վարույթ կիրառելու վերաբերյալ, ուստի նման պայմաններում իր վստահորդի կողմից իր պարտականությունները չկատարելու եղանակավ Վարույթին խոչընդոտելու ռիսկ առկա է: Բացի այդ, դատակոչված չեն այլ անձինք, ուստի դատարանին միջնորդեց վերացնել տնային կալանք խափանման միջոցը, քանզի ընտանիքի անդամների հոգսը դրված է իր վստահորդի վրա: Այս գործով դատարանը մերժել է հանրային մեղադրողի միջնորդությունը մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց տնային կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որոշել է մեղադրյալին ազատել տնային կալանքից, իսկ մեղադրյալի նկատմամբ ընտրված բացակայելու արգելքը խափանման միջոցը թողնել անփոփոխ: Դատարանը նշել է, որ գործն ըստ էության քննող դատարանի կողմից միայն առաջադրված մեղադրանքով նոր արարք կատարելու ռիսկ արձանագրելը, այլ տվյալների բացակայության պայմաններում, կարող է խախտել անձի անմեղության կանխավարկածը, որպիսի պայմաններում դատարանը նման ռիսկ չի արձանագրում: Այլ կերպ՝ համաձայնեցված հնարավոր վարույթի պարագայում, հաշվի առնելով նաև մեղադրյալի խնամքի տակ գտնող անձանց առկայությունը, միջին ծանրության հանցանքներով մեղադրանքի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելը չի բխում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքից, ու եզրակացրել, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել բացակայելու արգելք խափանման միջոցով⁴⁵:

⁴⁴ ԵԴ1/1334/01/23

⁴⁵ ԵԴ1/0775/01/24

Մեկ այլ գործով մեղադրողը նշել է, որ կիրառված խափանման միջոցը՝ տնային կալանքը, վերացնելու կամ փոփոխելու հիմքեր առկա չեն, այն ի գործ է ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը, առկա է վարույթին խոչընդոտելու հավանականություն, ուստի միջնորդեց տնային կալանքը թողնել անփոփոխ: Պաշտպանն առարկել է մեղադրողի կողմից ներկայացված միջնորդությանը՝ նշելով, որ նախ քրեական վարույթի նյութերը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Բացի այդ, դատակոչված երկու վկաները հանդիսանում են ոստիկանության ծառայողներ, և մեղադրյալի կողմից նրանց վրա ազդեցություն գործադրելն իրատեսական չէ: Ավելին՝ մեղադրյալը դեռևս նախաքննության սկզբնական փուլից ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, ուստի առկա չէ մեղադրյալի կողմից վարույթին խոչընդոտելու հավանականությունը: Պաշտպանը դատարանի ուշադրությունը հրավիրվել է նաև այն հանգամանքի վրա, որ մեղադրյալը մեղքն ընդունում է և ցանկություն է հայտնել միջնորդություն ներկայացնելու՝ արագացված վարույթ կիրառելու: Դատարանը տնային կալանքը փոխել է վարչական հսկողության և բացակայելու արգելքի⁴⁶:

Մեկ այլ գործով պաշտպանը միջնորդել է մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխել: Պաշտպանը մասնավորապես նշել է, որ ընտրված խափանման միջոցի միակ հիմքը մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունն է, որի հիմքում էլ դրված է տուժողի ցուցմունքը: Վարույթն իրականացնող մարմինը մերժել է իրենց միջնորդությունը հարցաքննել այն անձին, ում օգնությամբ մեղադրյալը հանդիպել է տուժողին: Մեղադրյալի պնդմամբ՝ իր դեմ օգտագործվող ձայնագրությունները մոնտաժված են, սակայն վարույթն իրականացող մարմինը որևէ գործողություն չի ձեռնարկել այդ հանգամանքը ստուգելու ուղղությամբ: Պաշտպանն ընդգծել է, որ մեղադրյալը շուրջ ինը ամիս գտնվում է անազատության մեջ, և այդ ընթացքում որևէ խախտում չի կատարել, ունի առողջական խնդիրներ՝ մեկ երիկամը բացակայում է, խնամքին են գտնվում հինգ անձինք՝ երկու մանկահասակ երեխաները, ծեր ծնողները և կինը, ընտանիքը այլ եկամուտ չունի: Մեղադրյալն է շինարարական աշխատանքներ կատարել և հոգացել ընտանիքի կարիքները: Տուժողը, վկաները Հայաստանի Հանրապետությունում չեն գտնվում, ավելին՝ մի քանիսը գտնվում են քրեակատարողական հիմնարկում: Նման պայմաններում մեղադրյալին շարունակական տնային կալանքի տակ պահելու անհրաժեշտություն չկա: Դատարանը որոշել է տնային կալանքը վերացնել և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել վարչական հսկողությունը, իսկ ռպես համակցված

⁴⁶ ԵԴ1/1118/01/24

խափանման միջոց կիրառված գրավը՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով՝ թողնել անփոփոխ⁴⁷:

Դիտարկված գործերից մեկով պաշտպանը միջնորդել է, որ «գոնե ցերեկային ժամերին մեղադրյալը կարողանա դուրս գալ բակ կամ կենցաղային հարցեր լուծել»⁴⁸:

Մեղադրյալի դիրքորոշումը

Մեղադրյալները հիմնականում միացել են պաշտպանների՝ դիրքորոշմանը: Հաճախակի վկայակոչել են աշխատելու և ընտանիքի ծախսը հոգալու անհրաժեշտությունը, առողջական խնդիրների առկայությունը և բուժում ստանալու անհրաժեշտությունը, ինչպես նաև ընտանիքի անդամների կարիքներից ելնելով՝ այլ անձանց տնային կալանքի կրման հասցե այցելելը, օրինակ՝ մանկահասակ երեխային հետազոտելու նպատակով բժշկի այցելության անհրաժեշտություն, որը կիրառված սահմանափակումների դեպքում խնդրահարույց է, որդու գերեզման այցելելու անհրաժեշտություն և այլն:

VI. ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Դիտարկված նիստերի արդյունքներով դատարանի կողմից **76 (66%)** մեղադրյալի նկատմամբ տնային կալանք խափանման միջոցը պահպանվել է, իսկ մնացածի դեպքում՝ փոխել: Մասնավորապես՝ **2-ի** մեղադրյալի նկատմամբ փոխվել է կալանքի, **24-ի** նկատմամբ կիրառվել է վարչական հսկողություն, այդ թվում՝ համակցված բացակայելու արգելքի և/կամ գրավի հետ, **12-ի** նկատմամբ փոխվել է բացակայելու արգելքով, այդ թվում նաև որոշ դեպքերում՝ գրավի հետ համակցված, **մեկ** մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը փոխվել է գրավի:

Ուսումնասիրության շրջանակներում առանձնակի ուշադրություն դարձվել է դատարանի կողմից խափանման միջոցի մասին որոշման հիմնավորվածությանը, իրավական վերլուծությանն ու կոնկրետ միջոցն ընտրելու հիմնավորումներին:

⁴⁷ ԵԴ1/2195/01/23

⁴⁸ ՍԴ1/0067/01/23

6.1 Հիմնավոր կասկած

Հիմնավոր կասկած և խափանման միջոցի կիրառման հիմքեր

Ներպետական օրենսդրությունը կարգավորում է խափանման միջոցի կիրառման իրավաչափության հարցերը, որտեղ կենտրոնական դեր ունի հիմնավոր կասկածը: Հաշվի առնելով տնային կալանքի և կալանքի՝ ազատության սահմանափակման ծավալը և խափանման միջոցի էությունը, կալանքի վերաբերյալ ՄԻԵԴ և Վճռաբեկ դատարանի կողմից կայացված դիրքորոշումները կիրառելի են նաև տնային կալանքի դեպքում:

Քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածը սահմանում է, որ *խափանման միջոց չի կարող կիրառվել, եթե բացակայում է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածը*: Այս կանոնը մանրամասն մեկնաբանության է ենթարկվել պրակտիկայում՝ ինչպես ներպետական դատարանների կողմից, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով:

Վերջիններիս ուսումնասիրությունը հանգեցնում է այն ընդհանուր մոտեցմանը, որ խափանման միջոց կիրառելու կարևորագույն հիմքը մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածի առկայությունն է: Ինչը իր հերթին պահանջում է, որ պետք է գործով առկա լինեն բավարար տվյալներ, որոնք անաչառ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող է կատարած լինել իրավախախտում: Միևնույն ժամանակ, նման փաստերն ու տեղեկությունները պետք է բավարարեն որոշակի նվազագույն շեմ, որը թույլ կտա կասկածը հաղթահարել, որպեսզի անաչառ դիտորդն այդ կասկածի հիման վրա հավանական համարի մեղադրանքի հիմնավորվածությունը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն՝ անձը կարող է զրկվել ազատությունից միայն քրեական վարույթի շրջանակներում, նրան իրավասու իշխանության մոտ տանելու նպատակով հանցագործություն կատարած լինելու ողջամիտ (հիմնավոր) կասկածի հիման վրա⁴⁹: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածն անձի ազատազրկման առաջնային պայմանն է⁵⁰: Հետևաբար, չնայած ողջամիտ կասկածը պետք է գոյություն ունենա անձին ձերբակալելու և առաջին անգամ կալանավորելու ժամանակ, սակայն, ողջամիտ

⁴⁹ ՄԻԵԴ, Ջեչուսն ընդդեմ Լիտվայի (Jėčius v. Lithuania) no. 34578/97, 31 հուլիսի 2000, § 50, ECHR 2000-IX

⁵⁰ ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 12, § 44:

կասկածի գոյությունը և դրա շարունակականությունը պետք է հիմնավորվի կալանավորման ժամկետի երկարաձգման բոլոր դեպքերում⁵¹:

Այսպես, հիմնավոր կասկածի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ դիրքորոշումները՝

- հանցանք կատարած լինելու կասկածի՝ ողջամտորեն հիմնավորված լինելու պահանջը կամայական ձերբակալման և կալանավորման դեմ երաշխիքի կարևոր մասն է կազմում⁵²,

- «հիմնավոր կասկած» եզրույթը ենթադրում է փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինե՞ր հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում⁵³,

- կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածի բարեխղճությունը: Միևնույն ժամանակ, եվրոպական դատարանը փաստել է, որ կասկած ունենալու բարեխղճությունը չի կարող ինքնին բավարար համարվել: Պարտադիր է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինե՞ր հանցանքը⁵⁴:

- *Հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն առ այն, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք, շարունակական կալանքի իրավաչափության համար պարտադիր պայման է, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար:* Այսինքն՝ անգամ կալանքի երկարաձգման հարցի քննարկման ժամանակ միևնույնն է, անհրաժեշտ է կրկին անդրադառնալ հիմնավոր կասկածի հարցին: Նման դեպքերում ազատությունից զրկելը պետք է շարունակի հիմնավորված լինել նաև այլ հիմքերով⁵⁵:

⁵¹ ՄԻԵԴ, Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի (Mammadov v. Azerbaijan), no. 15172/13, 22 մայիսի 2014, § 90:

⁵² Gusinskiy v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01

⁵³ K. F. v. Germany գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 144/1996/765/962

⁵⁴ Gusinskiy v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, §53

⁵⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ara Harutyunyan v. Armenia գործով 2016 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 629/11, կետեր 48-49:

Երբ «հիմնավոր կասկածի» առկայությունն այլևս բավարար չէ կալանքի հետագա երկարացման համար, պետք է հիմնավորվի, թե արդյո՞ք դատական մարմինների կողմից մեջբերված այլ հիմքերը շարունակում են արդարացնել ազատությունից զրկելը, արդյո՞ք անազատության մեջ պահելու հիմքերը շարունակում են լինել «հիմնավոր» և «բավարար», և արդյո՞ք իշխանությունները «հատուկ ջանասիրություն» են ցուցաբերել գործի քննության ընթացքում⁵⁶:

Դատարանը նաև որոշել է, որ կալանքի ցանկացած ժամկետի արդարացումը, անկախ նրանից, թե որքան կարճ է եղել, պետք է համոզիչ կերպով ապացուցվի իշխանությունների կողմից⁵⁷:

Ինչպես կարելի է նկատել մեջբերված որոշումներից, տասնամյակների ընթացքում ՄԻԵԴ այս մոտեցումներն ու ստանդարտները ավելի են ամրապնդվել և զարգացել:

Ինչպես արդեն ներկայացվեց, ՄԻԵԴ-ը մի շարք այլ գործերով վերահաստատել է նաև, որ հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որը օբյեկտիվ դիտորդի համար համոզիչ կլինի, որ տվյալ անձը կարող է կատարած լինել հանցագործություն: Միևնույն ժամանակ ՄԻԵԴ-ը սահմանել է նաև, որ այն թե ինչը կհամարվի հիմնավոր, կախված է գործի բոլոր հանգամանքներից⁵⁸: Ավելին, կասկածի «հիմնավորվածությունը» գնահատելիս Դատարանը պետք է կարողանա պարզել, թե արդյոք 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով նախատեսված երաշխիքի էությունը ապահովվել է: *Ջետևաբար, պետությունը ի դեմս իրավասու մարմինների պետք է ներկայացնի առնվազն որոշ փաստեր կամ տեղեկություններ, որոնք կարող են բավարարել Դատարանին, որ ենթադրյալ հանցագործությունը կատարելու մեջ ձերբակալվածի առնչությամբ առկա են հիմնավոր կասկածներ*⁵⁹:

Կալանքի իրավաչափության առանձնահատկություններից է այն, որ կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք

⁵⁶ Ե՛ւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Magee v. The United Kingdom* գործով 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը, գանգատներ թիվ 26289/12, 29062/12, 29891/12, կետ 88:

⁵⁷ *Grubnyk V. Ukraine* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռ, գանգատ թիվ 58444/15

Ibrahim and Others v. the United Kingdom գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի վճիռ, գանգատ թիվ 50541/08

Piruzyan v. Armenia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 33376/07

⁵⁸ *Bas v Turkey* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 3 մարտի 2020 թվական, գանգատ համար 66448/17

⁵⁹ Նույն տեղում, պարագրաֆ 174

երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը⁶⁰: Կալանքի՝ որպես խիստ միջոցի կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի⁶¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում «հիմնավոր» և «բավարար» են համարվում այնպիսի հիմքերը, ինչպիսիք են թաքնվելու վտանգը, վկաների վրա ներգործելու նպատակով ճնշում գործադրելու կամ կեղծված ապացույցների ռիսկը, նախնական համաձայնության գալու ռիսկը, կրկին հանցագործություն կատարելու ռիսկը, հասարակական կարգը խախտելու ռիսկը և կալանավորված անձին պաշտպանելու անհրաժեշտությունը: Ընդ որում, ազատ արձակելուն կողմ և դեմ փաստարկները չպետք է լինեն ընդհանուր և վերացական⁶²:

2021 թվականին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարևոր փոփոխություններից է այն, որ վերագրվող հանցագործության մեջ հիմնավոր կասկածը տարածվել է խափանման բոլոր միջոցների վրա, այլ ոչ թե միայն կալանավորման, քանի որ ցանկացած խափանման միջոց իրենից ներկայացնում է մեղադրյալի իրավունքների որոշակի սահմանափակում: Հաշվի առնելով կալանքի առանձնահատուկ տեղը խափանման միջոցների համակարգում՝ օրենսգիրքը սահմանել է դրա իրավաչափության լրացուցիչ պայմաններ, որոնք առավելապես վերաբերում են ապացուցողական իրավունքի տիրույթին: Դրանք են՝ այլընտրանքային խափանման միջոցների ոչ պիտանի լինելը /118-րդ հոդվածի 2-րդ մաս /, խափանման այդ միջոցի իրավաչափության պայմանների՝ քննիչի կամ դատախազի կողմից պատշաճ հիմնավորվելը և միաժամանակ դատարանի կողմից պատճառաբանված հաստատվելը /118-րդ հոդվածի 4-րդ մաս/, կալանքի ժամկետի երկարացման դեպքում՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը⁶³ (due diligence), ինչպես նաև տվյալ մեղադրյալի

⁶⁰ Տե՛ս, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Sahin Alpay v. Turkey գործով 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ: Ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մաս:

⁶¹ Տե՛ս, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Djundiks v. Latvia գործով 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:

⁶² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ara Harutyunyan v. Armenia գործով 2016 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 629/11, կետեր 50-51:

⁶³ Տե՛ս՝ ԱՎԴ/0022/06/08 քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 31.10.2008թ. որոշումը:

նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու, այսինքն՝ մինչդատական վարույթը դեռևս չավարտելու անհրաժեշտությունը⁶⁴:

Կալանավորման և այլ խափանման միջոցների պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ խափանման միջոցի հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա կալանավորման հիմքերի առկայության և կալանավորման իրավաչափության հարցի քննարկումն անիմաստ է⁶⁵:

Հիմք ընդունելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած վերոգրյալ մոտեցումները՝ ներպետական մակարդակում նույնպես ձևավորվել է հիմնավոր կասկածի վերաբերյալ բավականին լայն և համանման նախադեպային իրավունք:

Այսպես, Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ Վահրամ Գևորգյանի գործով փաստել է. «(...) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (...):

Յուրաքանչյուր դեպքում [հանցանք կատարած լինելու կասկածը պետք է լինի ողջամիտ:

«Հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (...) [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն

⁶⁴ Տես՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022թ.

⁶⁵ Տե՛ս Վահրամ Ռուդիկի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը

ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

(...) Դատարանը ընդունել է նաև, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող վերոնշյալ տեղեկությունները, փաստերը կամ ապացույցները պետք է հետազոտվեն մրցակցային դատավարության կանոնների պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ այդ տեղեկություններին, տվյալներին կամ ապացույցներին պետք է ծանոթանա նաև պաշտպանության կողմը:

Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված⁶⁶»

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Հիմնավոր կասկածը պետք է ապահովվի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնավորված և օրինաչափ սահմանափակումը, իսկ դատական վերահսկողությունը լինի երաշխիք այդ իրավունքի անհիմն սահմանափակումները կանխելու համար:

Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում

⁶⁶ Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում

են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան»⁶⁷:

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի անձի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունը՝ ավելի բարձր նշանակության բարիքի, այն է՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, անձի ազատության սահմանափակման հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմնավոր կասկածի առկայությունն ունի հիմնարար նշանակություն, քանզի դրա բացակայության պայմաններում անձի ազատության ցանկացած սահմանափակում կհամարվի ի սկզբանե ապօրինի: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ **քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ**⁶⁸:

Հիմնավոր կասկածի գնահատման հարցին դատավորների մոտեցումը կարելի է բաժանել պայմանական երեք խմբերի՝

⁶⁷ Հարություն Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴ2/0009/06/11 որոշումը

⁶⁸ Էդգար Եղիազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշում

1. վերաբերելի իրավական նորմերի և Վճռաբեկ դատարանի և/կամ ՄԻԵԴ նախադեպերի ցիտում, այնուհետև ընդհանրական ձևով ձևակերպված նշում առ այն, որ հիմնավոր կասկածն առերևույթ առկա է կամ որ դատարանը մանրամասն չի անդրադառնալով այդ հարցին, քանի որ դատավարության ավելի ուշ փուլերի հարց է: Այս դեպքում դատավորները հիմնականում օգտագործել են նույնաբնույթ ձևակերպումներ, փոփոխվել է միայն մեղադրյալի անունը:

2. վերաբերելի իրավական նորմերի և Վճռաբեկ դատարանի և/կամ ՄԻԵԴ նախադեպերի ցիտում՝ առանց գործի հանգամանքներն այս համատեքստում ընդհանրապես անդրադառնալու⁶⁹:

3. Որևէ անդրադարձի բացակայություն⁷⁰ կամ դատալեքստում որոշման և դրա հիմնավորումների չիրապարակելը:

Որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նույնաբովանդակ տեքստ կիրառվել է և՛ առաջին անգամ նախնական դատալսման հարցին անդրադառնալիս, և՛ հաջորդիվ՝ անկախ դատավարության փուլից: Նույն դատավորը տարբեր գործերով կիրառել է նույնաբովանդակ տեքստ:

Դիտարկված որևէ նիստում ողջամիտ կասկածին դատարանը բանավոր խոսքում չի անդրադարձել, իսկ անդրադարձ եղել է արդեն դատալեքստում հրապարակված ակտում: Որոշ ակտեր չեն հրապարակվել, ուստի դատարանի հիմնավորումները հասանելի չեն:

Խափանման միջոցի երկարացման հարցը քննելիս դատարանը նախ տեսական անդրադարձ է անում՝ սահմանելով հիմնավոր կասկածի հաստատման կարևորությունը.

Խափանման միջոց կիրառելու կարևորագույն հիմքը մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածի առկայությունն է: Հանցանք՝ քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարք կատարված լինելու հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի և տեղեկությունների առկայություն, որոնք անաչառ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող է կատարած լինել իրավախախտում: Նշված փաստերը և տեղեկությունները պետք է բավարարեն որոշակի նվազագույն շեմ, որը կասկածը պետք է հաղթահարի, որպեսզի անաչառ դիտորդն այդ կասկածի հիման վրա հավանական համարի մեղադրանքի հիմնավորվածությունը: Ընդ որում, պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը

⁶⁹ Օրինակ՝ ԵԴ1/1718/01/24ԵԴ1/1440/01/23

⁷⁰ Օրինակ՝ ԵԴ1/1930/01/23, ԵԴ1/2071/01/23

հիմնավորելու համար: Կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է⁷¹:

Մեկ այլ գործով մեղադրյալի խափանման միջոցի հարցը քննարկելիս դատարանը արձանագրել է, որ.

Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված նպատակներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը: Հարկ է նկատել, որ վերագրվող հանցագործության մեջ հիմնավոր կասկածի առկայությունը պարտադիր է ոչ միայն կալանքի, այլև այլընտրանքային խափանման միջոցների կիրառման պարագայում, քանի որ ցանկացած խափանման միջոց իրենից ներկայացնում է մեղադրյալի իրավունքների որոշակի սահմանափակում, ուստի դրա կիրառման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պետք է ապացուցողական թեկուզ ցածր չափանիշով հիմնավորում ներկայացնի մեղադրյալի կողմից իրեն վերագրվող արարքի կատարման վերաբերյալ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), իր մի շարք նախադեպային որոշումներում նշել է, որ քրեական իրավախախտում կատարված լինելու «հիմնավոր կասկածը» ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք անաչառ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող է կատարած լինել իրավախախտում:

Ընդ որում, հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (համանման իրավական դիրքորոշում է արտահայտել Վճռաբեկ Դատարանը 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 քրեական գործով)⁷²:

Ողջամիտ կասկածի հարցի քննարկման մոտեցումները դատարանի կողմից կարելի է բաժանել պայմանական երեք խմբի՝

1. **Մեղադրական եզրակացությամբ գործը դատարան ուղարկված լինելը և/կամ դատարանի կողմից վարույթ ընդունելը որպես ողջամիտ կասկածի առկայության բավարար հիմք:**

⁷¹ ԵԴ1/0994/01/24

⁷² ԵԴ1/2240/01/23

Վերլուծված որոշումներից 15-ում որոշ դատական կազմեր օգտագործել են նույնաբովանդակ տեքստ՝ որոշ տարբերակումներով.

«Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Դատարան, հիմք ընդունելով անմեղության կանխավարկածի սկզբունքի առաջնայնությունը, Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու պայմաններն առերևույթ առկա են»⁷³:

«Վերը շարադրված իրավադրույթների լույսի ներքո վերլուծելով սույն քրեական գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալի նկատմամբ քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Դատարան և դատավորի կողմից ստանձնվել է քրեական գործի վարույթը, Դատարանը, հիմք ընդունելով անմեղության կանխավարկածի սկզբունքի առաջնայնությունը, արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու պայմաններն առերևույթ առկա են»⁷⁴:

Այս տեքստը հանդիպել է դատավորներ Արամայիս Ասատրյանի, Ջոն Հայրապետյանի, Էդուարդ Մկրտչյանի, Ռոման Սմբատյանի, Սուսաննա Գզոգյան, Սամվել Յուզբաշյանի, Արմինե Մելիքսեթյանի, Սուրեն Խաչատրյանի որոշումներում:

Ընդհանրական տեքստից բացի՝ գործերի հանգամանքների լույսի ներքո որևէ վերլուծություն կամ հիմնավորում չի արվել:

Նմանատիպ դիրքորոշում, փոքր ինչ այլ ձևակերպմամբ, հայտնել է նաև դատավոր Գնել Գասպարյանը.

«Նախ, ուսումնասիրելով գործի նյութերը և հաշվի առնելով, որ գործը ուղարկվել է դատարան՝ մեղադրական եզրակացությամբ, Դատարանը գտնում է, որ դեռևս շարունակում է առկա լինել հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալը ենթադրաբար կատարել է իրեն մեղսագրվող արարքները, սակայն այս փուլում Դատարանը նշվածի վերաբերյալ ապացույցների մանրամասն վերլուծություն և գնահատում չի կարող կատարել»⁷⁵:

Դատավոր Ժորա Զիչոյանն օգտագործել է հետևյալ ձևակերպումը.

«Քրեական գործի նյութերով, մասնավորապես՝ մեղադրական եզրակացությունում նշված և դատական նիստերի ընթացքում հետազոտված ապացույցներով կարող է հիմնավորվել այն կասկածը, որ մեղադրյալը կարող է կատարած լինել մեղսագրված

⁷³ ԵԴ1/1754/01/24

⁷⁴ ԵԴ1/1196/01/22

⁷⁵ ԵԴ1/2577/01/24

ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը և առնչություն ունենալ դեպքին, այլ կերպ ասած՝ առկա է հիմնավոր կասկած մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը կատարելու վերաբերյալ»⁷⁶:

Դատավոր Արամ Գրիգորյանը հետևյալ ձևակերպումներն է օգտագործել.

«Դատարանը նախնառաջ հարկ է համարում անդրադառնալ հիմնավոր կասկածի հարցին: Վերը շարադրված իրավադրույթների լույսի ներքո վերլուծելով սույն քրեական գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալի նկատմամբ քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և դատավորի կողմից ստանձնվել է քրեական գործով վարույթը, Դատարանն արձանագրում է, որ դատավարական այս փուլում հիմնավոր կասկածի շեմը հաղթահարված է և ընդունելով անմեղության կանխավարկածի սկզբունքի առաջնայնությունը, արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու պայմաններն առերևույթ առկա են:

Մինչույն ժամանակ պետք է փաստել, որ հիմնավոր կասկածի՝ առաջադրված մեղադրանքի մասով, առավել մանրամասն դատողություններ անելու հնարավորություն, մասնավորապես, քանի դեռ չեն հետազոտվել գործի նյութերը, այս ընթացակարգի շրջանակներում առկա չէ, իսկ սույն գործով առկա են բավարար հիմքեր եզրակացնելու, որ մեղադրյալը առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը և դեպքը, իրադարձությունը համընկնում է այն առերևույթ հանցանքներին, որոնց կատարման մեջ վերջինս մեղադրվում է»⁷⁷:

Հատկանշական է, որ վերջին պարբերությունը հանդիպում է այլ դատավորների որոշումներում ևս⁷⁸:

Մեղադրական եզրակացության մեջ նշված ապացույցների՝ հիմնավոր կասկածի առկայությունը հիմնավորելու համար բավարար լինելու հիմնավորումը, այլ ձևակերպմամբ, օգտագործել է դատավոր Գիվի Հովհաննիսյանը.

«Մեջբերված իրավական դրույթները, դիրքորոշումներն ու վերլուծությունները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, Դատարանը անդրադառնալով մեղադրյալի կողմից իրեն վերագրվող ենթադրյալ հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցին, գտնում է, որ քրեական գործի նյութերով՝ մասնավորապես՝ մեղադրական եզրակացությունում նշված ապացույցներով հիմնավորվել է այն կասկածը, որ մեղադրյալը կարող է կատարած լինել մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքները և առնչություն ունենալ դեպքին, այլ կերպ ասած՝ առկա է հիմնավոր կասկած մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը կատարելու վերաբերյալ: Ընդ որում, Դատարանը հարկ է համարում նշել, որ «հանցագործության կատարած լինելու հիմնավոր կասկած»

⁷⁶ ԵԴ1/2616/01/24

⁷⁷ ՀԿԴ/0220/01/24,

⁷⁸ Տե՛ս, օրինակ՝ ԵԴ1/0431/01/24

ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար, անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է»:

Նմանատիպ ձևակերպում օգտագործել է նաև դատավոր Տիգրան Ոսկանյանը:

«Այսպիսով՝ քրեական գործի նյութերով՝ մասնավորապես՝ մեղադրական եզրակացությունում նշված ապացույցներով կարող է հիմնավորվել այն կասկածը, որ մեղադրյալը կարող է կատարած լինել մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը և առնչություն ունենալ դեպքին, այլ կերպ ասած՝ առկա է հիմնավոր կասկած մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը կատարելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ հիմնավոր կասկածի՝ առաջադրված մեղադրանքի մասով, առավել մանրամասն դատողություններ անելու հնարավորություն, մասնավորապես, քանի դեռ չեն հետազոտվել գործի նյութերը, այս ընթացակարգի շրջանակներում առկա չէ»:

Դատավոր Սարգիս Դադոյանը նույնպես հղում է կատարել մեղադրական եզրակացությանը և հիմնավոր կասկածի առկայությունը հիմնավորել է հետևալ կերպ.

«Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից և սույն որոշման 1.17.) կետում չմեղսագրվող արարքի նկարագրությունն} մատնանշվածից երևում է, որ մեղադրյալի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Քրեական գործի նյութերով, մասնավորապես՝ մեղադրական եզրակացությունում նշված ապացույցներով, մատնանշվում է մեղադրյալի ենթադրյալ առնչությունը սույն որոշման 1.17 կետում նկարագրված ենթադրյալ հանցագործություններին, ինչպես նաև հիմք է տալիս հիմնավոր կասկած ձևավորելու առ այն, որ մեղադրյալին մեղսագրվող դեպքը համընկնում է նրան վերագրվող ենթադրյալ հանցանքին»:

Նշել է նաև, որ նախնական դատախոսների ընթացքում անհնար է անդրադառնալ մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ սույն փուլը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն, ըստ էության, քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Այլ կերպ՝ չպետք է այնպիսի հարցեր քննարկել և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունել, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան:

Այս մոտեցումը տանում է մեզ երկրորդ հիմնական խումբ հիմնավորումների:

2. Հանցանքի կատարման առերևույթության մակարդակում քննարկում, քանի որ մնացած հանգամանքները դատավարության հետագա փուլերի հարց է.

Դատավորների մի խումբ այլ ձևակերպմամբ է անդրադարձել հիմնավոր կասկածի առկայության հաստատման հարցին՝ շեշտադրելով այն հանգամանքը, որ հանցագործության դեպքի, դրան անձի առնչության, մեղավորության ապացուցվածության, արարքի որակման իրավաչափության գնահատումը, ի թիվս այլոց, կազմում է գործի ըստ էության քննության առարկան, և այս փուլում դատարանն իրավասու է հանցանքը կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը գնահատել առերևույթության մակարդակում: Հակառակ դեպքում, ըստ դատավորների, հիմնավոր կասկածի շրջանակներում մեղադրյալի արարքի որակման իրավաչափության (ուռճացվածության), դրա հիմնավորվածության հարցերի վերաբերյալ վաղաժամ դատողություններ կատարելն օբյեկտիվ հիմքեր կտա պնդելու, որ դատարանը, ի սկզբանե, տվյալ գործով որոշակի նախատրամադրվածություն է ունեցել, ինչն անթույլատրելի է: Արդյունքում եզրահանգվում է, որ դատարանի վարույթում գտնվող գործով, ի տարբերություն մինչդատական վարույթում գտնվող վարույթի, կալանավորման իրավաչափության հարցը քննարկելիս դրա պայմանների առկայությունը ենթադրվում է, եթե դրանք չեն բացառվում ակնհայտ փաստերով, որոնց առկայությունը հաստատելը չի պահանջում գործի հանգամանքների բազմակողմանի և խորը հետազոտում: Այս վերլուծության ներքո դատարանը եզրահանգել է, որ ներկայացված մեղադրանքում նկարագրված հանցագործությանը մեղադրյալի առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածն առերևույթ առկա է:

Համանման մոտեցում, բայց այլ ձևակերպմամբ արտահայտել են նաև այլ կազմեր:

Մասնավորապես, ընդգծվել է, որ դատարանի վարույթում գործի քննության շրջանակներում հիմնավոր կասկածին անդրադարձ կատարելու սահմանները ողջամտորեն պետք է ավելի նեղ լինեն մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում հիմնավոր կասկածի քննարկման սահմանների համեմատ և նախքան ներկայացված մեղադրանքի վերաբերյալ եզրափակիչ դատական ակտ կայացնելը դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը կամ հիմնավորվածությանը: Նշվածը կարող են քննարկման առարկա դառնալ միայն ներկայացված մեղադրանքի վերաբերյալ եզրափակիչ դատական ակտ կայացնելու ընթացքում, իսկ այս փուլում գործի հաստատված մեղադրական եզրակացությամբ Դատարան ստացված լինելը

բավարար է փաստելու, որ առկա է մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված արարքը կատարելու հիմնավոր կասկածը:

Կրկին, վերը նշված տեքստը նույնությամբ՝ բացի մեղադրյալը տվյալների, օգտագործվել է տարբեր դատական կազմերի կողմից: Այս մոտեցումը կիրառել են դատավոր Ռազմիկ Մարիկյանը, Արշակ Մաթևոսյանը, Տաթևիկ Մուրադյանը, Ռոման Սմբատյանը, Անի Դանիելյանը, Վահե Ջիվանյանը:

Այս մոտեցման ավելի հակիրճ տարբերակը կիրառել է նաև դատավոր Դավիթ Արղամանյանը՝ նշելով, որ.

«Անդրադառնալով հիմնավոր կասկածի առկայության հարցին՝ Դատարանն արձանագրում է, որ դատարանի վարույթում գտնվող քրեական գործերով նախնական կամ հիմնական դատալսումների ընթացքում խափանման միջոցի հարցի քննարկման ժամանակ հիմնավոր կասկածին անդրադարձ կատարելու սահմանները ողջամտորեն նեղ են մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում հիմնավոր կասկածի քննարկման սահմաններից: Նախքան ներկայացված մեղադրանքի վերաբերյալ վերոհիշյալ կայացնելը դատարանը քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտության հարցին կարող է անդրադարձ կատարել բացառապես ՀՀ քրեական դատավարության 315-րդ հոդվածի շրջանակներում՝ առանց ապացույցների հետազոտման: Այսինքն՝ բացառությամբ այդ փուլի՝ Դատարանը մեղադրանքի էությանն ու հիմնավորվածությանն անդրադարձ չի կատարում»⁷⁹:

Համանման մոտեցում, բայց այլ ձևակերպումներով կիրառել է դատավոր Անի Մարտիրոսյանը: Մասնավորապես՝ որոշման մեջ նշվել է.

«Դատարանը հարկ է համարում նշել, որ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Այսինքն՝ պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական վարույթի քննության փուլում: Այսպիսով՝ քրեական գործի նյութերով կարող է առերևույթ հիմնավորվել այն կասկածը, որ մեղադրյալը հնարավոր է կատարած լինի իրեն մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքը և առնչություն ունենալ դեպքին, այլ կերպ ասած՝ առկա է հիմնավոր կասկած մեղադրյալի կողմից իրեն մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքները կատարելու վերաբերյալ: Մինչև նույն ժամանակ պետք է փաստել, որ հիմնավոր կասկածի՝ առաջադրված մեղադրանքի մասով, առավել մանրամասն դատողություններ անելու

⁷⁹ ԵԴ1/2477/01/24

հնարավորություն, մասնավորապես, քանի դեռ չեն հետազոտվել գործի նյութերը, չեն հարցաքննվել անձինք, այս ընթացակարգի շրջանակներում առկա չէ»⁸⁰:

3. Խափանման միջոցի կիրառման մասին դատարանի՝ Նախորդիվ կայացած որոշմամբ հիմնավոր կասկածը հաստատված համարելը.

Մի շարք ուսումնասիրված որոշումներում որպես ողջամիտ կասկածի առկայության հիմնավորում նշվել է Նախորդիվ, այդ թվում՝ այլ դատական կազմի կողմից հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված լինելու հանգամանքը:

Օրինակ՝

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, իր վերոհիշյալ որոշմամբ հիմնավորված համարելով մեղադրյալին վերագրվող արարքին նրա առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածը, գտել է, որ առկա է մեղադրյալի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու խիստ նվազ մտավախություն, ինչը հնարավոր է չեզոքացնել տնային կալանքի և բացակայելու արգելքի համակցված կիրառմամբ: Շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ դատարանը գտել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վերոհիշյալ որոշմամբ դատարանի կողմից հաստատված տնային կալանքի կիրառման իրավաչափության համապատասխան պայմաններն ամբողջությամբ շարունակում են գոյություն ունենալ⁸¹:

«Սույն քրեական գործի նյութերը ուսումնասիրելով հիմնավոր կասկածի համատեքստում՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել վարչական հսկողությունը, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված վարչական հսկողությունը վերացվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը: Դատարանն արձանագրում է, որ վերը նշված որոշումներով հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված է համարվել: Դատարանը գտնում է, որ ինչպես վերը նշվածով, այնպես էլ սույն քրեական գործում առկա փաստական տվյալներով շարունակվում է առկա լինել հիմնավոր կասկածը: Մինչև սույն ժամանակ հարկ է նշել, որ հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ անձի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է և կիրառելի է ոչ թե հիմնավոր կասկածը, այլ անձի մեղքը հավաստելիս»⁸²:

⁸⁰ ԵԴ1/2240/01/23

⁸¹ ԵԴ1/0562/01/24

⁸² ԵԴ1/3303/01/24

«Դատարանը, նկատի ունենալով, որ 2024 թվականի հունվարի 16-ին քննարկել է միևնույն ժամանակ վարույթում մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հարցը, 2024 թվականի փետրվարի 22-ին այլընտրանքային խափանման միջոցները կալանք խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունը, իսկ 2024 թվականի մայիսի 21-ին՝ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու հարցը՝ արձանագրում է, որ հիմնավոր կասկածի առկայությանը կամ բացակայությանը վերստին չի անդրադառնում, քանի որ վերոնշյալ որոշումներով արդեն իսկ հաստատվել է, որ հիմնավոր կասկածն առկա է, հակառակ պարագայում՝ կկայացվեին համապատասխան այլ որոշումներ: Ավելին՝ դատական նիստի ընթացքում ևս հիմնավոր կասկածը չվիճարկվեց»⁸³:

«Դատարանը, քրեական գործում առկա փաստական տվյալների և տեղեկությունների վերլուծության արդյունքում վերահաստատելով նախաքննության ընթացքում կայացված խափանման միջոց տնային կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ կայացված նախորդ որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, գտնում է, որ ներկա պահին թեպետ պահպանվում է մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչնդոտելու և փախուստի դիմելու մտավախությունը, սակայն այն նվազել է: Այլ կերպ՝ չխախտելով մեղադրյալի անմեղության կանխավարկածը, Դատարանը փաստում է, որ առկա է նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքեր, ինչպես նաև իրավախախտմանն առնչություն ունենալու հիմնավոր կասկածը»⁸⁴:

Գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի վարույթում գտնվող գործերով ողջամիտ կասկածի գնահատման հարցը կրում է ձևական բնույթ: Հատկանշական է, որ հիմնական դատալսումների դեպքում այս մոտեցումը առավել արտահայտված է լինում, այսինքն՝ անգամ այն դեպքում, երբ նախնական դատալսումների փուլում դատարանն այս կամ այն ձևով շոշափել է ողջամիտ կասկածի առկայության հարցը, ապա նույն գործով հիմնական լսումների փուլում կայացրած որոշումներում որևէ անդրադարձ չկա:

Բոլոր այն դեպքերում, երբ դատարանն անդրադարձել է հիմնավոր կասկածին, ապա առավելապես ներկայացվել են դրա վերաբերյալ գոյություն ունեցող ընդհանուր մոտեցումներն ու սկզբունքները, առանձին դեպքերում վկայակոչվել են նաև ՄԻԵԴ նախադեպեր և Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որոնք շարադրվել են բավականին երկար և հանգամանալից, սակայն խափանման միջոցն ընտրելիս այդ մոտեցումները կոնկրետ գործի հանգամանքների համատեքստում չեն քննարկվել և չեն վերլուծվել: Ավելին, ինչպես երևում է ներկայացված գործերից, որոշ դեպքերում դատավորը այլ գործերի շրջանակներում հարցի վերաբերյալ կիրառած մոտեցումները նույնությամբ կիրառել է տվյալ գործում ևս՝ առանց կոնկրետ գործի փաստական հանգամանքների ներքո վերլուծություն կատարելու:

⁸³ ՀԿԴ/0310/01/23

⁸⁴ ԵԴ1/0524/01/24

6.2 ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ

6.2.1 Խափանման միջոցի իրավաչափության իրավական հիմքերը

Ներպետական օրենսդրությամբ սահմանված են նաև խափանման միջոցի կիրառման իրավաչափության հիմքերը, որոնք են՝

- 1) մեղադրյալի փախուստը կանխելը,
- 2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելը կամ
- 3) մեղադրյալի կողմից իր վրա օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելը⁸⁵:

Խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

Այս հիմքերը նույնպես զարգացել են դատական պրակտիկայում կայացված որոշումների միջոցով:

Հատկանշական է, որ ՀՀ-ում խափանման միջոցների և մասնավորապես մինչդատական փուլում անձին ազատությունից զրկելու հարցը երկար տարիներ հանդիսացել է խնդիր և կրել համակարգային բնույթ, ինչը արտացոլվել է նաև ՄԻԵԴ որոշումներում:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Այվազյանն ընդդեմ Հայաստանի գործով, հղում կատարելով նաև մի շարք այլ գործերի, հաստատել է, որ կալանք նշանակելիս և դրա ժամկետը երկարաձգելիս **կարծրատիպային ձևակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում** (Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի [Piruzyan v. Armenia], թիվ 33376/07, §§ 97-100, 2012 թվականի հունիսի 26, Մալխասյանն ընդդեմ Հայաստանի [Malkhasyan v. Armenia], թիվ 6729/07, §§ 74-77, 2012 թվականի հունիսի 26, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի [Sefilyan v. Armenia], թիվ 22491/08, §§ 88-93, 2012 թվականի հոկտեմբերի 2, և Արա Հարությունյանի գործով վճիռը):

Այդ գործով ներպետական դատարանները նույն ձևով են հիմնավորել դիմումատուի շարունակական կալանքը; այն է՝ *միայն մեջքերելով ներպետական օրենսդրության դրույթները և անդրադառնալով վերագրվող հանցագործության ծանրությանը՝ առանց ներկայացնելու նրա գործի հատուկ փաստերը կամ մանրամասներ այն մասին, թե ինչպես է հիմնավորվում թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ կրկին հանցագործություն կատարելու ռիսկը*: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՄԻԵԴ-ը

⁸⁵ Քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 116

գտել է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել վերաբերելի և բավարար պատճառներ դիմումատուին կալանավորելու համար, ինչը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածը:

Հատկանշական է, որ վերջին տարիներին ՄԻԵԴ կողմից ՀՀ դեմ կալանքի վերաբերյալ ընդունված մի շարք գործերով այս խնդիրը կրկին արձանագրվել է⁸⁶:

Մասնավորապես, ՄԻԵԴ-ը վերահաստատել է, որ ներպետական *դատարանները նույն ձևով են հիմնավորել դիմումատուի շարունակական կալանքը՝ միայն մեջբերելով ներպետական օրենսդրության դրույթները և անդրադառնալով վերագրվող հանցագործության ծանրությանը՝ առանց ներկայացնելու նրա գործի հատուկ փաստերը կամ մանրամասներ այն մասին, թե ինչպես է հիմնավորվում թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ կրկին հանցագործություն կատարելու ռիսկը: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել վերաբերելի և բավարար պատճառներ դիմումատուին կալանավորելու համար*⁸⁷:

Անդրադառնալով տնային կալանքին՝ ՄԻԵԴ-ը նախ ընդունել է, որ տնային կալանքը ինքնին հանդիսանում է ազատությունից զրկում, քանի որ ներառում է անձի ազատ տեղաշարժի սահմանափակում⁸⁸: Ինչը պահանջում է ոչ միայն հստակ օրենսդրական հիմքեր, այլ ենթադրում է, որ նման սահմանափակում պետք է բխի յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործի փաստերից և հետապնդի որոշակի օրինաչափ նպատակ:

Խափանման միջոցների և մասնավորապես կալանքի հարցին բազմիցս անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/1194/06/21 որոշմամբ, համադրված վերլուծության ենթարկելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի 3-րդ կետի, 288-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 3-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի իրավակարգավորումները՝ փաստել է, որ մինչդատական վարույթում կալանք կիրառելու կամ դրա ժամկետը երկարաձգելու միջնորդությունը քննելիս դատարանը, գտնելով որ *մեղադրյալի օրինական*

⁸⁶ Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ վճիռ, 15 հունիսի 2021 թվականի վճիռ, գործ համար 13610/12

Սմբատ Այվազյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ վճիռ, 08 հոկտեմբերի 2020 թվական, գործի համար 49021/08

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ վճիռ, 15 հոկտեմբեր 2020 թվական, գործի համար 49020/08

⁸⁷ Նույն տեղում

⁸⁸ De Tommaso v. Italy գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 23 փետրվարի 2017 թվական, գործի համար 43395/09

վարքագիծը հնարավոր է ապահովել այլընտրանքային խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառմամբ, իրավասու է կալանքի փոխարեն կիրառել այլընտրանքային խափանման միջոց կամ դրանց համակցություն՝ միայն այն դեպքում, երբ այդպիսի խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցված կիրառման դեպքում դրա մեջ ներառված խափանման միջոցներից առնվազն մեկի ընտրության լիազորությունը վերապահված է դատարանին: Նման դեպքերում դատարանը քննիչի միջնորդությունը բավարարում է մասնակի և կիրառում համապատասխան խափանման միջոցը (օրինակ՝ տնային կալանք) կամ դրանց համակցությունը (օրինակ՝ տնային կալանք և գրավ): Իսկ այն դեպքերում, երբ դատարանը միջնորդության քննության արդյունքում գտնում է, որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար ոչ միայն միջնորդվող կալանքի, այլև իր իրավասությանը վերապահված խափանման միջոցի ընտրության անհրաժեշտությունը բացակայում է, ապա պետք է մերժի քննիչի միջնորդությունը՝ առավել մեղմ խափանման միջոցի կամ դրանց համակցության կիրառման հարցի լուծումը թողնելով վարույթի համապատասխան հանրային մասնակիցների հայեցողությանը:

Նույն գործով, բեկանելով ստորադաս ատյանների կայացրած որոշումները, Վճռաբեկ դատարանը նշել է, որ այլընտրանքային խափանման միջոցի կամ խափանման միջոցների կիրառմամբ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու հնարավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն: Նշվել է նաև, որ ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել *Նաև մեղադրյալի անձը ընթացագրող տվյալները:* Այսպես՝ մեղադրյալը, լինելով ոստիկանության գնդապետ, շուրջ քսանչորս տարի ծառայել է Հայաստանի Հանրապետության ուժային կառույցներում՝ 1994-1997 թվականների ընթացքում պաշտոններ զբաղեցնելով ՀՀ Ներքին գործերի նախարարությունում, 1997-2011 թվականների ընթացքում՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում, 2011-2018 թվականների ընթացքում՝ ՀՀ ոստիկանությունում, իսկ վերջինիս մեղսագրվում են իր ծառայողական գործունեության ոլորտում ենթադրաբար կատարված հանցավոր արարքներ: Վերոնշյալը ողջամտորեն ենթադրում է որոշակի հեղինակություն, կապեր ու լծակներ ինչպես պետական համակարգի տարբեր օղակներում պաշտոններ զբաղեցնող անձանց, այնպես էլ հասարակության տարբեր շերտերի ու շրջանակների նկատմամբ⁸⁹:

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանը անդրադարձել է շարունակական կալանքի հարցին: 2025 թվականի ապրիլի 9-ի թիվ LԴ1/0059/01/17 որոշմամբ

⁸⁹ <https://www.arlis.am/hy/acts/198520/latest>

անդրադառնալով շարունակական կալանքի համատեքստում անձի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածին և վարույթի հնարավոր երկարատև ընթացքն արձանագրելու հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ *թեև նշված հանգամանքներն ինքնին չեն բացառում անձի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի վտանգները, սակայն բարձրացնում են նրան շարունակաբար կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորված համարելու շեմը: Կոնկրետ դեպքում Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարել արդեն իսկ ձեռնարկված դատավարական գործողությունների և հետազոտված ապացույցների ծավալի պայմաններում անձի տևական ժամանակ կալանքի տակ գտնվելու փաստն Առաջին աստիճանի դատարանի կողմից արձանագրելու հանգամանքը:*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *ապացուցողական ողջ զանգվածը հետազոտելուց հետո անձին շարունակաբար կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորող հիմքերի բացակայության պայմաններում անգամ, զուտ դատաքննությունը վերսկսելու օրենսդրական կարգավորման հիման վրա վարույթի բնականոն ընթացքին խոչընդոտելու հավանականության առկայության արձանագրումը ոչ այլ ինչ է, քան կալանքի տակ պահելու ժամկետի մեխանիկական երկարաձգում, ինչն անհամատեղելի է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքերի հետ:*

Նույն գործով Վճռաբեկ դատարանը կարևոր արձանագրում է կատարել նաև այն մասով, որ *ծանրակշիռ փաստարկներով հիմնավորման ենթակա է անձին շարունակաբար կալանքի տակ պահելու անհրաժեշտ ու բավարար հիմքերի առկայությունը, այլ ոչ թե համապատասխան երաշխիքների կիրառմամբ անձին ազատ արձակելը*⁹⁰:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/1194/06/21 որոշմամբ կալանք խափանման միջոցի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու առնչությամբ արձանագրել է, որ երբ դատարանը միջնորդության քննության արդյունքում գտնում է, որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովվելու համար ոչ միայն միջնորդվող կալանքի, այլև իր իրավասությանը վերապահված խափանման միջոցի ընտրության անհրաժեշտությունը բացակայում է, ապա պետք է մերժի քննիչի միջնորդությունը՝ առավել մեղմ խափանման միջոցի կամ դրանց համակցության կիրառման հարցի լուծումը թողնելով վարույթի համապատասխան հանրային մասնակիցների հայեցողությանը⁹¹:

⁹⁰ <https://cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2824>

⁹¹ <https://www.arlis.am/hy/acts/198520/latest>

Անձին ազատությունից զրկելու և հատկապես կալանքի երկարաձգման հարցին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը վերջերս կայացրած կարևոր նախադեպային որոշմամբ: Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1792 գործով 30 հուլիսի 2025 թվականին քննարկել է անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցը, և անդրադարձել քրեական գործով ինչպես մինչդատական վարույթի, այնպես էլ դատական քննության փուլում կալանքի ժամկետի երկարաձգման ժամանակ դատարանի կողմից պատշաճ ջանասիրություն /due diligence/ ապահովելու պարտականությանը⁹²:

Այսպես, Սահմանադրական դատարանը վերահաստատել է, որ անձի հիմնական իրավունքների իրացման այն երաշխիքները, որոնք գործում են մինչդատական վարույթում, առնվազն *mutatis mutandis* գործում են նաև դատական վարույթում, և դրանց արդյունավետությունը չի կարող նվազել գործը դատարան (այսինքն՝ հրապարակային և բազմաթիվ այլ երաշխիքներով ապահովված ըստ էության քննության ենթարկելու համար) ուղարկված լինելու պատճառով կամ դրա արդյունքում: Դատարանն ընդունել է նաև, որ խափանման միջոցների, հատկապես՝ կալանքի շարունակական կիրառման սկզբունքներից է այն, որ կալանքի տևողության հետ զուգընթաց, կալանքի հիմքերի առկայությունը վկայող փաստական տվյալները հետզհետե պետք է ավելի շատ վերագրելի լինեն բացառապես մեղադրյալին:

Անդրադառնալով կալանքի հիմքերի առկայության հիմնավորմանը, դատարանը նշել է, որ հիմքերի հիմնավորումը նախևառաջ անձի անմեղության կանխավարկածի հետ սերտորեն կապված՝ նրա ազատության կանխավարկածը հաղթահարելուն ուղղված գործընթաց է, ինչից էլ հենց բխում է, որ անձի՝ մեղադրյալի կարգավիճակը պահպանելու ամբողջ ժամանակահատվածում, մասնավորապես՝ *անկախ քրեական վարույթի փուլերից՝ ազատության մեջ մնալը կանոն է, իսկ նրան ազատությունից զրկելը՝ բացառություն*, որը գործադրելու համար անհրաժեշտ է տրամադրել իրավունքի սահմանափակումն իրավունքի խախտման վերաճելը կանխող միասնական երաշխիքներ, այդ թվում՝ ապահովել կալանքի հիմքերի առկայության առթիվ պետության ունեցած կանխատեսական մտահոգությունների օբյեկտիվ փաստական հիմքերի վերացման ուղղությամբ պատշաճ ջանասիրության պարտադիրությունը:

⁹² Հարություն Ներսիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՄԴՈ-1792 որոշում, 30 հուլիսի 2025 թվական
https://www.concourt.am/decision/decisions/6890a32e0aebb_SDV-1792.pdf

Ըստ այդմ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ *պատշաճ ջանասիրության ապահովման պարտականությունը քրեական վարույթի ամբողջ քննության վրա չտարածելը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ շարունակական կալանքը կիրառվի որպես քողարկված քրեական պատիժ*⁹³:

Սահմանադրական դատարանն այս գործով եզրահանգել է, որ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի հավանականությունը որպես կալանքի հիմք պահպանվելու հանգամանքը գնահատելուց առաջ դատարանը թե՛ դատական վերահսկողություն և թե՛ արդարադատություն իրականացնելու փուլերում պարտավոր է ապահովել մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ դատավարական վարքագծի՝ իբրև սուբյեկտիվ մտավախության (վկաների վրա ներգործելու մասին կանխատեսական դատողության) հիմքում ընկած օբյեկտիվ հիմքերի նախադրյալների չեզոքացման (վկաների հարցաքննությունը կազմակերպելու) ուղղությամբ վարույթի հանրային մասնակիցների ձեռնարկած քայլերը⁹⁴: Ինչը լրացուցիչ երաշխիքներ է ստեղծում կալանքի երկարաձգման հիմնավորման տեսանկյունից նաև դատական քննության փուլում, և ենթադրում է, որ դատարանում կալանքի ժամկետը երկարացնելու հարցը քննարկելիս կողմերը պետք է ներկայացնեն տվյալ գործը քննող դատավորի գործադրած ջանասիրության մասին դիրքորոշում, իսկ դատարանը «ինքնավերահսկողության» մոդելով պետք է դատական ակտում ներկայացնի իր դրսևորած ջանասիրության մասին փաստարկներ: Բարձր ատյանի դատարանը ևս հնարավորություն կունենա դիրքորոշում հայտնել առաջին ատյանի դատարանի գործադրած ջանասիրության վերաբերյալ:

Հաշվի առնելով կալանքի առանձնահատուկ տեղը խափանման միջոցների համակարգում՝ օրենսդիրը սահմանել է դրա իրավաչափության լրացուցիչ պայմաններ, որոնք առավելապես վերաբերում են ապացուցողական իրավունքի տիրույթին: Դրանք են՝

- ա) այլընտրանքային խափանման միջոցների ոչ պիտանի լինելը,
- բ) խափանման այդ միջոցի իրավաչափության պայմանների՝ քննիչի կամ դատախազի կողմից պատշաճ հիմնավորվելը և միաժամանակ դատարանի կողմից պատճառաբանված հաստատվելը,
- գ) կալանքի ժամկետի երկարացման դեպքում՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու, այսինքն՝ մինչդատական վարույթը դեռևս չավարտելու անհրաժեշտությունը⁹⁵:

⁹³ Նույն տեղում, պարագրաֆ 91

⁹⁴ Նույն տեղում պարագրաֆ 94

⁹⁵ ԵԴ1/2077/01/23

Դիտարկված գործերով առավել հաճախակի վկայակոչվել է մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար հիմքը:

Դիտարկված գործերով հաճախակի է արձանագրվել, որ դատարանը խափանման միջոցի կիրառման հիմքերը քննարկում է նախորդիվ կայացված ակտերի լույսի ներքո, և կա՛մ հաստատում է հիմքի ու հավանականության առկայությունը, կամ արձանագրում է, որ այն փոփոխվել է կամ վերացել: Այս առումով հատկանշական է գործերից մեկով դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումը առ այն, որ դատավորի կողմից քրեական գործի վարույթը ստանձնելուց հետո դատարանն է հանդիսանում քրեական գործի վարույթի պատասխանատուն, և վարույթի ընթացքում առաջացող ռիսկերը հենց նույն քրեական գործի վարույթը ստանձնած դատավորն է գնահատում՝ **կաշկանդված չլինելով մինչդատական վարույթի ընթացքում գնահատված ռիսկերով**: Այլ կերպ՝ սույն փուլում գործի քննության ծավալը տարբերվում է մինչդատական վարույթում առկա ծավալից, և սույն փուլում Դատարանն է գնահատում դատական քննության ընթացքում առաջացող ռիսկերը՝ այդ թվում նաև խափանման միջոցի ընտրության ժամանակ առկա հիմքերը: Ինչ վերաբերում է կալանավորման կիրառման հիմքերին, ապա նշվածը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից համակարգային վերլուծության են ենթարկվել Ա.ճուղուրյանի և մի շարք այլ գործերով կայացված որոշումներում, որտեղ հետևողականորեն ամրապնդվել և զարգացվել են քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները:

6.3 Փախուստի կանխում

Ուսումնասիրված գործերով միայն 20-ի պարագայում է դատարանն այս թե այն ձև խափանման միջոցի հարցի քննարկման ժամանակ անդրադարձել մեղադրյալի փախուստը կանխելու անհրաժեշտությանը:

Որոշ որոշումներում նշվել է, որ մեղադրյալի փախուստի վտանգը չի կարող պայմանավորվել բացառապես հնարավոր պատժի ծանրության սպառնալիքով⁹⁶: Թեպետ հնարավոր պատժի խստությունը վերաբերելի գործոն է, սակայն

⁹⁶ ԵԴ1/2477/01/24

փախուստի վտանգը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով այն վերաբերելի հանգամանքները, որոնք կհաստատեն այդ վտանգի առկայությունը և աստիճանը, որը թույլ կտա որոշել անձի նկատմամբ որևէ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հարցը:

Փախուստի վտանգը պետք է գնահատել՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, որոնք վերաբերելի են անձի կերպարին, բարոյականությանը, մշտական բնակության վայրին, մասնագիտության, ունեցվածքին, ընտանեկան կամ այլ անձնական կապերին, կապվածությանը երկրին և այլն⁹⁷: Փախուստի վտանգի հիմքի կիրառելությունը չի պարտադրում վարույթի ընթացքում արդեն իսկ փախուստի դիմելու փորձ, կամ փախուստի դիմած լինելու փաստի պարտադիր առկայություն, այլ այն գնահատվում է որպես մեղադրյալի՝ վարույթի հետագա ընթացքում հնարավոր վարքագիծը կանխորոշող ենթադրություն: Ընդ որում՝ նշված գործոնները սպառնիչ չեն և ենթակա են գնահատման յուրաքանչյուր դեպքում:

Այն որոշումներում, որտեղ անդրադարձ կատարվել է փախուստի ռիսկին, այն հիմնականում դատարանի կողմից նվազ է համարել: Փախուստի հիմքի առկայությունը դատարանը հիմնավորված է համարել այն դեպքում, երբ մեղադրյալը այլ պետության քաղաքացի է, կապեր է ունեցել արտերկրում, քննության ժամանակ վարույթ իրականացնող մարմնից թաքնվել է, իսկ որոշ դեպքերում՝ հնարավոր պատժի ծանրությունն է հաշվի առել:

Այդպես, գործերից մեկով մեղադրյալը օտարերկրյա քաղաքացի էր: Խափանման միջոցի հարցը քննարկելիս դատարանը նախ վկայակոչել է նախորդիվ դատարանի կողմից համակցված որպես այլընտրանքային խափանման միջոցներ տնային կալանքի, բացակայելու արգելքի և երկու միլիոն ՀՀ դրամ չափով գրավի կիրառված լինելը՝ միտված մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու և փախուստի դիմելու ռիսկերի չեզոքացմանը: Դատարանը դեռևս բարձր է համարել մեղադրյալի կողմից փախուստի դիմելու հավանականությունը, որի կանխման նպատակով, ըստ դատարանի, անհրաժեշտ է պիտանի խափանման միջոցի /միջոցների/ կիրառում: Դատարանը երկարացրել է տնային կալանքի ժամկետը: Նշվածն արձանագրելիս Դատարանը հաշվի է առել նաև մեղադրյալի ՌԴ քաղաքացի լինելը և արտերկրում կապեր ունենալը⁹⁸:

Մինևույն ժամանակ մեկ այլ գործով, որով ներգրավված մեղադրյալը կրկին օտարերկրյա քաղաքացի է, որը ՀՀ-ում ունի մանկահասակ երեխա և մշտական

⁹⁷ Նույն տեղում

⁹⁸ ԵԴ1/0541/01/24

բնակության վայր, դատարանը փախուստը ռիսկը նվազ է գնահատել՝ հաշվի առնելով մեղադրյալի սոցիալական կապերը Հայաստանում:

Մեկ այլ գործով դատարանը հաշվի է առել նախաքննության ընթացքում վարույթ իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքը. Դատարանը վկայակոչել է մեղադրյալի՝ մինչդատական վարույթի ընթացքում դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ վերջինս տնական ժամանակ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը, ինչպես նաև հանցանքի բնույթի, ծանրության աստիճանի հետ, և եզրահանգել, որ առկա է մեղադրյալի կողմից փախուստի դիմելու ռիսկ: Միևնույն ժամանակ դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ մեղադրյալը ՀՀ-ում ունի մշտական բնակության վայր, կայուն կապեր, ընտանիք, և եզրահանգել, որ այդ ռիսկը խիստ բարձր չէ: Այս գործով դատարանը տնային կալանքը վերացրել է՝ կիրառելով բացակայելու արգելքը⁹⁹:

Կարևոր է արձանագրել նաև դատարանի դիրքորոշումը այն դեպքում, երբ մեղադրողը առաջ է քաշում որևէ հիմք, որը նախորդիվ որոշումներում հաստատված չի համարվել դատարանի կողմից, իսկ մեղադրողը որևէ նոր հանգամանք չի ներկայացրել:

Որոշ գործերով դատարանը չի համաձայնվել հանրային մեղադրողի գնահատականի հետ, այն մասով, որ մեղադրյալի որոշակի գործողություններ հնարավոր է որակել որպես վարույթ իրականացնող մարմնից թաքնվել:

«Անդրադառնալով մեղադրյալի կողմից փախուստի դիմելու հավանականության վերաբերյալ Հանրային մեղադրողի փաստարկներին՝ Դատարանն արձանագրում է, որ Դատարանի 2024 թվականի հունվարի 28-ի որոշմամբ քննարկվող հավանականությունը հաստատված չի գնահատվել, իսկ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ հիշյալ որոշման կայացումից հետո առաջացած կամ ի հայտ եկած փաստական հանգամանքները Հանրային մեղադրողը չի ներկայացրել: Դատարանը գտնում է, որ ոստիկանության աշխատակիցների կողմից մեղադրյալին մոտենալն ինքնին բավարար չէ նրա կողմից փախուստի դիմելու հավանականության վերաբերյալ դատողություններ կատարելու համար: Նման պայմաններում մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ Հանրային մեղադրողի փաստարկները վերացական բնույթի են և չեն կարող բավարար լինել քննարկվող հավանականությունը հիմնավորված գնահատելու համար»¹⁰⁰:

Գործերից մեկով դատարանը, հղում անելով նախորդիվ կայացված դատական ակտին, նշել է, որ մեղադրյալի փախուստի հավանականությունը իրատեսական չի համարում: Նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ

⁹⁹ ԵԴ1/2483/01/24

¹⁰⁰ ԵԴ1/0353/01/24

մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ, Էդմոն Փիրումյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ LԴ/0058/06/20 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման վկայակոչմամբ, արձանագրվել և պատճառաբանվել է նշված հիմքի բացակայությունը, իսկ որևէ նոր փաստական տվյալ առկա չէ, որը կվկայեր մեղադրյալի կողմից փախուստի հավանականության առկայության մասին: Նման պայմաններում այլ որոշում կայացնելը դատարանն անթույլատրելի է համարում, քանի որ նույն փաստական տվյալների առկայության պայմաններում դատարանը չի կարող մի դեպքում փախուստի հավանականությունն իրատեսական չհամարել, մյուս դեպքում՝ նույն հանգամանքների առկայության պայմաններում՝ այդ հիմքերի հավանականությունը ողջամիտ համարել¹⁰¹:

Մեկ այլ գործով դատարանը հիշեցրել է, որ նախորդիվ կայացված դատական ակտում արձանագրվել է, որ փախուստի դիմելու ռիսկը բացակայում է, քանի որ դրա հիմքում դրված է եղել միայն մեղսագրվող հանցանքի ծանրությունը: Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը արձանագրել է, որ տվյալ հիմքը դատավարության տվյալ փուլում բավականին նվազ է, և բավարար հիմքեր չկան ենթադրելու, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, վարույթն իրականացնող մարմնի տեսադաշտից անհետանալու նպատակով կարող է լքել Հայաստանի Հանրապետությունը:

Մեկ այլ գործով դատարանը փաստացի որևէ գնահատական չի տվել փախուստի ռիսկին, որը Վերաքննիչ դատարանիի որոշմամբ հաստատված է համարվել և արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված փախուստը կանխելու ռիսկին՝ Դատարանն արձանագրում է, որ ինչպես նախկինում կայացված որոշմամբ, այնպես էլ ներկայում, նշյալ ռիսկի առկայության կամ բացակայության հարցին չի անդրադառնում՝ հաշվի առնելով, որ այդ ռիսկի չեզոքացման համար արդեն իսկ Վերաքննիչի դատարանի կողմից ընտրվել է այլընտրանքային պիտանի խափանման միջոց բացակայելու արգելքը»¹⁰²:

Մեկ այլ գործով դատարանը կրկին վկայակոչել է նախորդիվ դատարանի կողմից հաստատված փախուստի հիմքը, այնուամենայնիվ, չի մանրամասնել, թե ինչու է այն համարում դեռևս հավանական: Մասնավորապես, դատարանը նշել է.

«Անդրադառնալով մեղադրյալի տնային կալանքի հիմքերին՝ Դատարանը գտնում է, որ տվյալ փուլում շարունակում է առկա լինել մեղադրյալի նկատմամբ կալանքը

¹⁰¹ ԵԴ1/1981/01/24

¹⁰² ՀԿԴ/0225/01/23

որպես խափանման միջոց ընտրելու միայն մեկ հիմքը՝ հաստատված Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 19-ի որոշմամբ: Մասնավորապես այն, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է դիմել փախուստի: <...> Ամփոփելով նշվածը՝ Դատարանն արձանագրում է, որ գործով ձեռք չեն բերվել այնպիսի նոր փաստական տվյալներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են Դատարանի կողմից նախկինում արձանագրված՝ մեղադրյալի տնային կալանքի տակ պահելու հիմքը, ուստի մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ տնային կալանքը, գրավը և բացակայելու արգելքը վերացնելու կամ փոխելու փաստական հիմքեր չկան»¹⁰³:

Իսկ մեկ այլ գործով հակառակը, դատարանը գտել է, որ փախուստի դիմելու ռիսկը նվազել է ինքնին՝ ժամանակը անցնելու հիմքով, ինչը մեծապես պայմանավորված է նրանով, որ ցանկացած կալանավորման հիմք ժամանակի ընթացքում նվազում է, եթե սկզբնական կամ նախորդող ժամանակաշրջանում դրա հավանականությունը բարձր է եղել, ապա ժամանակի ընթացքում կամ միշտ այն ակտուալ համարվել չի կարող¹⁰⁴:

Որոշ դեպքերում թեև դատարանը փախուստի ռիսկը նվազ է համարել, անգամ նշել է, որ նախորդիվ կայացված որոշմամբ այդ հիմքի առկայությունը չի հաստատվել, միննույնն է, նշել է, որ կա ՀՀ-ն լքելու ռիսկ, ուստի կիրառել է բացակայելու արգելքը:

«Անդրադառնալով խափանման միջոց կիրառելու հիմքերից փախուստը կանխելու անհրաժեշտությանը՝ Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի հունիսի 20-ի որոշմամբ արձանագրվել է, որ նշված հիմքը բացակայում է: Միննույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ փախուստի դիմելու ռիսկը բավարար չէ անձի նկատմամբ անազատության հետ կապված խափանման միջոց կիրառելու համար, սակայն, հաշվի առնելով, որ «փախուստ» եզրույթի տակ դիտարկվում է ինչպես մեղադրյալի կողմից ուղղակի դիտավորությամբ վարույթն իրականացնող մարմնի տեսադաշտից՝ Հայաստանի Հանրապետությունից փախչելը, այնպես էլ ցանկացած այլ նպատակով Հայաստանի Հանրապետությունը լքելը՝ Դատարանը գտնում է, որ խափանման միջոց չկիրառելու պարագայում մեղադրյալը կարող է լքել Հայաստանի Հանրապետությունը, ուստի առկա է փախուստի դիմելու նվազ վտանգ: Դատարանը որոշել է վերացնել տնային կալանքը՝ կիրառելով բացակայելու արգելք խափանման միջոցը»¹⁰⁵:

Մեկ այլ գործով դատարանն անդրադարձել է նույն հարցին, բայց շատ ավելի հստակ է բացատրել ռիսկի աստիճանի փոփոխությունը ստեղծված իրավճակում: Այդպես, դատարանը նշել է, որ թեև նախորդիվ կայացված որոշումներում դատարանը փախուստի ռիսկ չի արձանագրել, այնուամենայնիվ, ըստ դատարանի,

¹⁰³ ԵԴ1/1823/01/24

¹⁰⁴ ԵԴ1/0574/01/24

¹⁰⁵ ԵԴ1/1772/01/24

վարույթի ներկա փուլում գնահատականը փոխվել է: Մասնավորապես՝ դատարանն արձանագրել է, որ մեղադրյալի կողմից դատաքննության սույն փուլում ազատության մեջ գտնվելու պայմաններում խնդրո առարկա ռիսկը ողջամիտ է դառնում: Հետևաբար՝ բացակայելու արգելք խափանման միջոցի կիրառմամբ կարող է ապահովվել մեղադրյալի կողմից պատշաճ վարքագծի ապահովումը, որն էլ իր հերթին կարող է չեզոքացնել վերոշարադրված ռիսկը: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Դատարանը գտել է, որ անհրաժեշտ է փոփոխել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց տնային կալանքը, և մեղադրյալի կողմից իր վրա օրենքով դրված պարտականությունների կատարումն ապահովելու, ինչպես նաև նրա ՀՀ տարածքից հեռանալու հնարավորությունը բացառելու նպատակով, նրա նկատմամբ կիրառել բացակայելու արգելքը¹⁰⁶:

Մինչև սույն ժամանակ առանձին դեպքերում արձանագրվել է, որ նույնիսկ երբ դատարանը քննարկել է փախուստի ռիսկը, կոնկրետ գործի փաստական հանգամանքներում այդ ռիսկը համալիր չի ուսումնասիրվել, թե կոնկրետ գործով մեղադրյալի փախուստի դիմելու ռիսկը ինչպիսին է և ինչպես է դա գնահատվում և հիմնավորվում: Օրինակ՝

«Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալը իր նկատմամբ ընտրված այլընտրանքային խափանման միջոցների համակցության պայմաններում չի խախտել իր վրա դրված պարտականությունների կատարումը, դրսևորել է պատշաճ վարքագիծ, հետևաբար շարունակվում են պահպանվել նրա նկատմամբ արդեն իսկ ընտրված այլընտրանքային խափանման միջոց տնային կալանքի համար օրենքով սահմանված հիմքերը: Դատարանը վարույթի քննության այս փուլում դեռևս հավանական է համարում մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու, փախուստի դիմելու օրենսդրորեն ամրագրված հիմքերը, ինչպես նաև վարույթով անցնող անձանց վրա անօրինական ազդեցություն գործելու ռիսկը, ինչը կարող է չեզոքացվել տնային կալանք խափանման միջոցի կիրառման պայմաններում»¹⁰⁷:

Որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ փախուստի ռիսկը որպես առանձին ու բարձր ռիսկայնության գործոն հազվադեպ է դիտարկվում դատարանում: Նման իրավիճակ հիմնականում լինում է, եթե անձը խուսափել է քննությունից, եղել է հետախուզման մեջ և/կամ օտարերկրյա քաղաքացի է: Հատկանշական է, որ թեև մեղադրողը որոշ դեպքերում փորձել է վկայակոչել փախուստի հիմք մի շարք գործերով, դատարանը արձանագրել է, որ կամ նման հիմքը նախկինում հաստատված չի եղել, իսկ նոր հանգամանքներ մեղադրողը չի նշել, կամ նշել է, որ մեղադրողի կողմից վկայակոչվող հանգամանքները չեն կարող վկայել ռիսկի

¹⁰⁶ ԵԴ1/2483/01/24

¹⁰⁷ ԵԴ1/1440/01/23

մասին, դրանք վերացական բնույթ ունեն կամ պետք է մեկնաբանվեն այլ կերպ: Ավելին՝ որոշ դեպքերում մեղադրողը կիրառել է շատ լայն մեկնաբանությունը, թե ինչպիսի իրավիճակը կարելի է համարել փախուստ կամ քննությունից թաքնվել:

Բացի այդ, դատական կազմերը միասնական մոտեցում չեն ցուցաբերել ժամանակը անցնելուն զուգընթաց ռիսկի աստիճանի գնահատմանը՝ որոշ դեպքերում դատարանը հիմք է ընդունել նոր հանգամանքների բացակայություն որպես ռիսկի աստիճանի փոփոխության բացակայության հիմք, իսկ մյուս դեպքում՝ հենց ժամանակը անցնելու հիմքը ինքնին դիտարկել է որպես ռիսկի աստիճանի նվազման մասին վկայող էական հանգամանք:

Ամփոփելով դատարանների կողմից այս հիմքի կիրառման գործերով արձանագրումները՝ պետք է նկատել, որ **“փախուստի ռիսկը” հազվադեպ է դիտարկվում որպես հիմնական հիմք**, գործերի մեծ մասում դատարանը այն գնահատել է որպես նվազ, բացառությամբ օտարերկրացի մեղադրյալների: Ինչպես երևում է ներկայացվածից՝ **օտարերկրյա քաղաքացիների դեպքում ռիսկը հաճախ ավելի բարձր է գնահատվում**, իսկ **Նախկինում խուսափման փորձի կամ թաքնվելու դեպքերը** կարող են հիմք հանդիսանալ ռիսկի բարձր գնահատման համար: **Որոշ գործերով ռիսկի առկայությունը վերլուծվել է մակերեսորեն**, առանց մեղադրյալի վարքագծի ու գործի փաստական տվյալների համապարփակ վերլուծության:

6.4 Կանխել հանցանքի կատարումը

Դիտարկված գործերից 30-ով դատարանը խափանման միջոցի հարցը քննարկելիս այս թե՛ այն ձև քննարկել է մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության հարցը, այդ թվում՝ նաև՝ այն նվազ կամ գոյություն չունեցող համարել: Որոշ գործերով դատարանն ընդգծել է, որ տնային կալանքի հիմքերը կրում են կանխատեսական բնույթ, սակայն դրանք չպետք է հիմնված լինեն սոսկ վերացական ենթադրությունների վրա, այլ պետք է ողջամտորեն բխեն գործի նյութերից:

Իրավական վերլուծման մասում որոշ դատավորներ նշել են, որ մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելը գնահատվում է այն սանդղակով, որ հանցանք կատարելու վտանգը պետք է իրատեսական լինի՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, անձի կերպարը, անցյալը: Նախկինում դատված լինելը կարող է հիմք լինել մեղադրյալի կողմից նոր հանցանք գործելու ողջամիտ մտավախության համար: Նման մտավախություն կարող է լինել նաև կախված մեղսագրվող արարքի բնույթից: Հանցանք կատարելու ռիսկը գնահատելիս կարող է հաշվի առնվել

ինչպես մեղսագրվող արարքի հանցագործության չափարտված փուլում՝ նախապատրաստության, հանցափորձի փուլերում գտնվելը, մեղադրյալի հետհանցավոր վարքագիծը, կամ հանցագործության տևող կամ շարունակվող լինելը:

Առավել հաճախ դատարանը վկայակոչել է նախկինում հանցանք կատարած լինելու հանգամանքը, հատկապես նույնասեռ հանցագործության համար դատապարտված լինելը, և այն հանգամանքը, որ հանրային քրեական հետապնդում է հարուցվել նշված դատվածությունը մարված չլինելու պայմաններում նույնասեռ արարք կատարելու համար: Որոշ դեպքերում դատարանը անգամ մարված դատվածության առկայությունը դիտարկվել է որպես հավանականության մասին վկայող գործոն: Հիմնականում դատարանը հստակ նշել է, որ վերագրվող արարքին գնահատական չի կարող տա, մինևույն ժամանակ որոշ որոշումներում օգտագործված ձևակերպումները հաստատող բնույթ ունեն, այլ ոչ թե առերևույթության մակարդակի են:

Բարձր ռիսկայնություն դատարանն արձանագրել է այն դեպքերում, երբ գործով մեղադրյալը, ում նկատմամբ կիրառված է եղել մինչդատական վարույթի ընթացքում խափանման միջոց, նոր ենթադրյալ հանցանք է կատարել կամ այլ վարույթով ունի դատավարական կարգավիճակ՝ մեղադրվելով նույնասեռ հանցանք կատարելու մեջ: Նման դեպքերում դատարանը հիմնավորված է համարել տնային կալանքի ժամկետը երկարացնելը:

Մինևույն ժամանակ գործերից մեկով ի պատասխան մեղադրողի փաստարկին առ այն, որ մեղադրյալը դատաքննության փուլում գտնվող այլ քրեական գործով ունի մեղադրյալի կարգավիճակ և, հաշվի առնելով նրան վերագրվող արարքները, մեծ է նոր հանցանք կատարելու հավանականությունը մեղադրյալի կողմից ազատության մեջ գտնվելու պայմաններում, դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերը բացառապես վերաբերվում է ապագային միտված գործողությունների վերաբերյալ փաստական տվյալ ունենալուն կամ ողջամիտ ենթադրությանը, սակայն դատալսումներին այդպիսիք չներկայացվեցին¹⁰⁸:

Որոշ տեսակի հանցագործությունների դեպքում, օրինակ՝ թմրամիջոցների իրացում, դատարանը հենց հանցանքի տեսակը ինքնին գնահատել է որպես նոր հանցանք կատարելու հավանականությունը մեծացնող: Այդպես, գործերից մեկով դատարանը նախ արձանագրել է մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը՝ դրա լատենտային լինելը, թմրանյութի քանակը (խոշոր չափ), տեսակը

¹⁰⁸ ՀԿԴ/0069/01/24

(«Մարիխուանա» և «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցներ): Դրա հիման վրա դատարանը եզրահանգել է, որ բարձր է հավանականությունը, որ մեղադրյալը, գտնվելով ազատության մեջ, կարող է կատարել նույնաբնույթ ենթադրյալ հանցանք¹⁰⁹:

Գործերից մեկով շոշափվել են քաղաքական իրավունքների իրացման հարցեր: Մեղադրողը պնդել է, որ անձը կարող է կրկին մասնակցել Երևան քաղաքում ընթացող ցույցերին, իսկ քանի որ մեղսագրվող արարքը ենթադրաբար կատարվել է ցույցի ժամանակ, ապա դա ինքնին արդեն վկայում է նրա մասին, որ մեղադրյալը կարող է կատարել նոր հանցանք: Անդրադառնալով մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ հանրային մեղադրողի փաստարկներին՝ դատարանն արձանագրել է, որ դատարանի 2024 թվականի մայիսի 17-ի որոշմամբ քննարկվող հավանականությունը հաստատված չի գնահատվել, իսկ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ հիշյալ որոշման կայացումից հետո առաջացած կամ ի հայտ եկած փաստական հանգամանքներ հանրային մեղադրողը չի ներկայացրել: Դատարանը գտել է, որ մեղադրյալի կողմից ցույցի կամ ակցիաների մասնակցելն ինքնին բավարար չէ նրա կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ դատողություններ կատարելու համար: Նման պայմաններում մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ հանրային մեղադրողի փաստարկները վերացական բնույթի են և չեն կարող բավարար լինել քննարկվող հավանականությունը հիմնավորված գնահատելու համար¹¹⁰:

Ուշագրավ է դատարանի հիմնավորումը մեկ այլ գործով, որով անցնող մեղադրյալին վերագրվում է ահաբեկչություն կատարելու նախապատրաստվելը: Անդրադառնալով մեղադրյալի կողմից ազատության մեջ մնալու դեպքում նոր հանցանք կատարելու ենթադրությանը՝ այս գործով դատարանը նշել է, որ, մեղադրյալին մեղսագրված է ենթադրաբար մի խումբ անձանց հետ նախնական համաձայնության գալով ահաբեկչություն կատարելու նախապատրաստվելը, որը պայմանավորված նշված հանցագործության բնույթով և բարձր հասարակական վտանգավորության աստիճանով էապես ազդում է մեղադրյալի կողմից ազատության մեջ մնալու պարագայում նոր հանցանք կատարելու կալանավորման իրավաչափության պայմանի գնահատման վրա: Բացի այդ, դատարանն արձանագրել է, որ նշված ենթադրյալ արարքը մեղադրյալն իրենից անկախ հանգամանքներով չի կարողացել ավարտին հասցնել՝ բացահայտվելով նախապատրաստության փուլում: Դատարանը եզրահանգել է, որ առկա է

¹⁰⁹ ԵԴ1/1057/01/24

¹¹⁰ ԵԴ1/0353/01/24

ենթադրությունն առ այն, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է կատարել քրեական օրենսգրքով արգելված նոր արարք¹¹¹:

Իսկ մեկ այլ գործով դատարանը հստակ արձանագրել է, որ գործն ըստ էության քննող դատարանի կողմից միայն առաջադրված մեղադրանքով նոր արարք կատարելու ռիսկ արձանագրելը, այլ տվյալների բացակայության պայմաներում, կարող է խախտել անձի անմեղության կանխավարկածը, որպիսի պայմաններում դատարանը նման ռիսկ չի արձանագրում¹¹²:

Մեկ այլ գործով դատարանն անդրադարձել է նաև մեղադրյալի կողմից հանցանքներ կատարելու պարբերականությանը: Այդպես, մեղադրյալի վերաբերյալ քննված քրեական գործը 2024 թվականի հունվարի 15-ին կարճվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ ներկայիս վարույթով մեղադրյալին մեղսագրված է 2024 թվականի հունվար ամսին ենթադրաբար կատարված համասեռ հանցանք: Այս գործոնը դատարանը համադրել է նաև մշտական աշխատանք կամ կանոնավոր ամսական եկամուտ չունենալու հանգամանքի հետ և եզրահանգել, որ ողջամիտ է ենթադրել, որ մեղադրյալը ազատության մեջ կարող է շարունակել զբաղվել թմրանյութերի առերևույթ ապօրինի շրջանառությամբ, հետևաբար՝ առկա է մեղադրյալի կողմից համասեռ հանցանք կատարելու բարձր ռիսկ¹¹³:

Հատկանշական է, որ այս գործով դատարանն ընգծել է, որ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու բարձր հավանականության արձանագրումն ինքնին չի պարունակում անձի մեղավորության վերաբերյալ եզրահանգում: Մեղադրյալի կողմից հանցանք կատարելու ռիսկը դատարանը գնահատում է բացառապես անձի կողմից իրեն մեղսագրվող հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի ապացուցողական շեմի համատեքստում, ինչը որևէ կերպ չի կարող հանդիսանալ անձի մեղավորության վերաբերյալ եզրահանգում. հակառակ պարագայում անհրաժեշտ կլինի հիմնավոր կասկածից վեր ապացուցողական շեմի առկայություն:

Որոշ դատական ակտերում օգտագործվել են այնպիսի ձևակերպումներ, որոնք վերագրվող արարքի մեղադրյալի կողմից կատարված են ներկայացնում: Այսպես, գործերից մեկով դատարանը նշել է, որ հիմնավոր է համարում քրեական վարույթն իրականացնող մարմնի ենթադրությունն առ այն, որ մեղադրյալն ազատության մեջ մնալու դեպքում կարող է կատարել նոր հանցանք: Գործերից մեկով

¹¹¹ ԵԴ1/1629/01/24

¹¹² ԵԴ1/0775/01/24

¹¹³ ԵԴ1/0996/01/24

դատարանը նման հետևությունը բխեցրել է այն հանգամանքից, որ վերջինս ունի չմարված դատվածություն: Այսպես՝ մեղադրյալը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի օգոստոսի 30-ի դատավճռով դատապարտվել է ազատազրկում՝ երկու տարի ժամկետով, որը չի կիրառվել՝ սահմանվելով փորձաշրջան երկու տարի ժամկետով: Այսինքն՝ մեղադրյալը իր նկատմամբ փորձաշրջան սահմանված լինելու պարագայում 2023 թվականի օգոստոսի 3-ին կատարել է նոր քրեական օրենսգրքով չթույլատրված արարքներ: Դատարանը եզրակացրել է, որ հիշյալ փաստերն իրենց համակցության մեջ հիմք է տալիս հիմնավոր ենթադրություններ կատարել առ այն, որ վերջինս, մնալով ազատության մեջ, կարող է կատարել նոր հանցանք¹¹⁴:

Որոշ գործերով դատարանը հաշվի է առել քրեական արդարադատության հետ առնչվելը, անգամ դատվածության բացակայության պայմաններում՝ որպես ռիսկային գործոն: Այդպես, գործերից մեկով դատարանը նշել է, որ մեղադրյալը նախկինում դատապարտված չէ, սակայն վերջինը որոշակիորեն քրեական հետապնդման մարմինների ուշադրության կենտրոնում է: Մասնավորապես՝ մեղադրյալի վերաբերյալ դատարանի վարույթում քրեական գործ է քննվել, որը կարճվել է՝ վաղեմությանն անցնելու հիմքով, վերջինը միայն 2023 թվականին մի քանի անգամ ձերբակալվել է ոստիկանության տարբեր աշխատակիցների կողմից՝ տարբեր արարքների կասկածանքով, որպիսի պայմաններում դատարանի համար որոշակիորեն մտավախություններ են առաջացել առ այն, որ մեղադրյալի մոտ կարող է ձևավորվել կայուն հանցավոր վարքագիծ: Այս գործով դատարանը նաև որպես ռիսկային գործոն դիտարկել է մեղսագրվող արարքը՝ ապօրինի թմրամիջոցների ձեռքբերում և պահում՝ անձնական օգտագործման համար, և արձանագրել մտավախությունն առ այն, որ ազատության մեջ մնալու պայմաններում մեղադրյալը կարող է փորձել ապօրինի ձեռք բերել և պահել թմրամիջոց¹¹⁵:

Այս գործով դատարանը նաև նշել է, որ ինչ վերաբերում է հափշտակության հանցակազմին, ապա սույն հանցակազմի շրջանակներում ևս մեղադրյալը մեկ անգամ հայտնվել է քրեական վարույթում և ունեցել է դատավարական կարգավիճակ, սակայն տվյալ դեպքի վերաբերյալ որևէ գնահատական տալու հնարավորությունը բացակայում է, քանի որ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործը կարճվել է: Ուստի, դատարանը գտել է, որ մեղադրյալին մեղսագրվող հանցագործությունների բնույթով և կատարման եղանակով պայմանավորված մեծ է հավանականությունը, որ մեղադրյալը լիակատար ազատության մեջ մնալու պայմաններում կարող է կատարել քրեական օրենքով և

¹¹⁴ ԵԴ1/2176/01/23

¹¹⁵ ԵԴ1/2240/01/23

պատժի սպառնալիքով սահմանափակված արարք: Նման պայմաններում դատարանն արձանագրել է, որ դեռևս առկա է խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը և իրավաչափությունը: Ավելին, դատարանի գնահատմամբ, սույն հարցն ավելի առարկայական է դառնում, երբ անգամ պաշտպանության կողմն է արձանագրում կիրառված խափանման միջոցի արդյունավետությունը՝ չառարկելով դրա հետագա, շարունակական կիրառման դեմ:

Գործերից մեկով դատարանն անդրադարձել է նույն հիմքերի ու հանգամանքների շարունակական վկայակոչմանը: Այդպես, հերթական նիստի ժամանակ, անդրադառնալով նախորդիվ կայացված որոշումներում արձանագրված ռիսկերին, դատարանն արձանագրվել է, որ քրեական վարույթի ներկա փուլում դատարանին հայտնի չեն և չեն ներկայացվել բավականաչափ ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք թույլ կտան դատարանին արձանագրել քննարկվող հիմքի շարունակական առկայությունը: Դատարանը գտել է, որ քննարկվող հիմքի վերաբերյալ քրեական վարույթի սկզբնական փուլում ներկայացված տվյալները չեն կարող քրեական գործի քննության յուրաքանչյուր փուլում հանդես գալ նույն բարձր կենսունակությամբ, և քրեական գործի քննության հետագա ընթացքում տվյալ հիմքի առկայության վերաբերյալ նոր էական հանգամանքների բացակայության պայմաններում հիմքի կենսունակությունը նվազում է: Դատարանը գտել է, որ քրեական գործի քննության ներկա փուլում քննարկվող հիմքը որոշակիորեն նվազ բնույթ է կրում¹¹⁶:

Արձանագրվել են դեպքեր, երբ դատարանը հստակ նշել է, որ նախորդիվ այլ դատական որոշմամբ հաստատված՝ տնային կալանքի կիրառման իրավաչափության համապատասխան պայմանները չեն շարունակում գոյություն ունենալ, և դատարանը պատճառաբանված ձևով չի կարող հաստատել տնային կալանքի կիրառման իրավաչափության պայմանների շարունակական առկայությունը: Մասնավորապես՝ դատարանը գտել է, որ քննության ներկա փուլում մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում նոր հանցանք կատարելու հավանականությունն էականորեն նվազել է, ինչը մեծապես պայմանավորված է նրանով, որ ցանկացած կալանավորման հիմք, ժամանակի ընթացքում նվազում է, եթե սկզբնական կամ նախորդող ժամանակաշրջանում դրա հավանականությունը բարձր է եղել, ապա ժամանակի ընթացքում կամ միշտ այն ակտուալ համարվել չի կարող: Ավելին՝ դատարանը հարկ է համարում նկատել, որ ներկայացված նյութերում առկա՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մեղադրյալը նախկինում դատապարտված չի եղել¹¹⁷:

¹¹⁶ ԵԴ1/3333/01/24

¹¹⁷ ԵԴ1/2187/01/23

Մարված դատվածության պարագայում դատարանը տարբեր մոտեցումներ է ցուցաբերել: Դիտարկված գործերից մեկով մեղադրյալին վերագրվել է թմրամիջոցների շրջանառություն: Դատարանը փաստել է, որ մեղադրյալի վերաբերյալ ՀՀ ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրված պահանջագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեն վերջինի դատվածությունները մարված են, սակայն դրանք կրկին վերաբերում են թմրամիջոցների շրջանառությանը: Դատարանը նշել է, որ թեն, իրավացիորեն, որևէ կերպ անձի մարված դատվածությունները չեն կարող վերջինի համար առաջացնել իրավական առումով անբարենպաստ հետևանքներ, սակայն դրանք չեն կարող անտեսվել դատարանի կողմից՝ չգնահատվելով, որպես մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքներ: Դատարանն արձանագրել է, որ մեղադրյալը մշտապես քրեական հետապնդում իրականացնող մարմինների ուշադրության կենտրոնում է, այն էլ մեծապես թմրամիջոցների շրջանառությանը վերաբերելի վարույթների շրջանակներում: Դատարանը հատուկ նշել է նաև այն հանգամանքը, որ մեղադրյալի վերաբերյալ դատարանում քննվող երկու վարույթների շրջանակներում էլ մեղադրյալին վերագրվող արարքներում մատնանշվում է նույն տեսակի թմրամիջոցը: Դատարանը երկարաձգել է տնային կալանքը ժամկետը՝ գտնելով, որ այլ խափանման միջոցները պիտանի չեն¹¹⁸:

Որոշ գործերով մեղադրողը փորձել է հանցանք կատարելու հավանականությունը հիմնավորել մեղադրյալի աշխատանք և եկամուտ չունենալու հանգամանքով: Գործերից մեկով դատարանն արձանագրել է, որ այդ հանգամանքը չի կարող ինքնին գնահատվել որպես անձի կողմից հանցանք կատարելու հավանականությունը հիմնավորող հանգամանք, քանի դեռ չի հիմնավորվում, որ դա նրա հիմնական եկամտի աղբյուրն է: Սույն դեպքում առկա են տեղեկություններ այն մասին, որ մեղադրյալի հիմնական եկամուտը կամ դրա ճնշող մասը ձևավորվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության արդյունքում, բացի այդ՝ մեղադրյալը հայտնել է փայտագործությամբ զբաղվելու, ինչպես նաև որպես տպագրող սարքերի մասնագետ աշխատելու վերաբերյալ տվյալներ: Հետևաբար՝ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու հավանականության վերաբերյալ մեղադրողի փաստարկները վերացական բնույթի են և չեն կարող բավարար լինել քննարկվող հավանականությունը հաստատված գնահատելու համար¹¹⁹:

Ներկայացված գործերի ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ դատարանների կողմից հանցանք կատարելը կանխելը առավել հաճախ վկայակոչված և կիրառված հիմքերից է: Ինչը առավել հաճախ կապվել է

¹¹⁸ Նույն տեղում

¹¹⁹ ԵԴ1/0428/01/24

մեղադրյալի՝ նախկինում ունեցած դատվածության կամ քրեական մարմինների հետ առնչություն ունենալու հանգամանքի հետ: Ընդ որում, առանձին դեպքերում հանցանք կատարելու ռիսկը դատարանի կողմից գնահատվել է՝ օգտագործելով այնպիսի ձևակերպումներ, որոնցից բխում է, որ դատարանի վարույթում գտնվող գործով վերագրված հանցանքը կատարվել է մեղադրյալի կողմից՝ որպես հաստատված փաստ:

Միատեսակ չէ դատարանի գնահատականը դատվածությունն չունենալու դեպքում վերագրվող հանցանքի տեսակով պայմանավորված ռիսկի գնահատմանը: Որոշ դեպքում հանցանքի բնույթը ինքնին բավարար էր: Որոշ դեպքերում, անգամ նախկինում չդատապարտված մեղադրյալների մոտ դատարանը արձանագրել է հանցանք կատարելու բարձր հավանականություն՝ պայմանավորված հանցանքի բնույթով և/կամ մի խումբ անձանց կողմից կատարված լինելու հանգամանքով: Նման դեպքերը վերաբերել են թմրամիջոցների իրացման կամ ահաբեկչությունն նախապատրաստելու մեղադրանքներին: Մեղադրողը նույն մոտեցումը փորձել է կիրառել նաև ցույցերի համատեքստում կատարված դեպքերին, սակայն դատարանը չի համաձայնել մեղադրողի դիրքորոշման հետ:

Մարված դատվածության պարագայում դատարանը տարբեր մոտեցումներ է ցուցաբերել, այդ թվում նաև՝ մարված դատվածությունն ունենալը որպես հանցանք կատարելը հիմնավորող գործոն:

6.5 Պարտավորությունների կատարման ապահովում

Օրենքով մեղադրյալի վրա դրված պարտավորությունների ապահովման անհրաժեշտությունը որպես խափանման միջոցի կիրառման հիմք առավել վիճահարույցն է եղել, քանի որ արձանագրվել է հակասական պրակտիկա:

Դիտարկված գործերով դատարանի մոտեցումը կարելի է բաժանել պայմանական երեք խմբի՝

1. երբ դատարանը նախաքննության ավարտը և գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու հանգամանքը համարել է խոչընդոտելու ռիսկի նվազման հանգամանք և փոխել է տնային կալանքը այլ խափանման միջոցով:
2. երբ դատարանը գտել է, որ քանի դեռ չեն հարցաքննվել գործով բոլոր՝ վկաները և չեն հետազոտվել ապացույցները, միջամտելու ռիսկը պահպանվում է, և տնային կալանքը երկարաձգել է:

3. երբ դատարանը վկայակոչել է գործին վերաբերելի անհատական հանգամանքներ և դրանց լույսի ներքո ընտրել խափանման միջոց:

Որոշ գործերով դատարանը հստակ նշել է, որ արդարադատության իրականացմանը միջամտելու վտանգի մասին պնդումները չպետք է վերացական լինեն, այլ պետք է բխեն գործի կոնկրետ հանգամանքներից և ապացույցներից¹²⁰:

Այդպես, գործերից մեկով դատարանն արձանագրել է, որ մեղադրյալի կողմից փախուստի դիմելու և մեղադրյալի պարտականությունները չկատարելու հավանականության մասին վկայող իրատեսական փաստեր առկա չեն, իսկ արդարադատության իրականացմանը միջամտելու վտանգն ապացույցները վերացնելը, տուժողի վրա ճնշում գործադրելը և այլն, չպետք է գնահատվեն վերացական կերպով, այլ պետք է բխի գործի կոնկրետ հանգամանքներից և ապացույցներից¹²¹: Այս գործով դատարանը մեղադրյալի կողմից հանցանք կատարելը իրատեսական է համարել, ուստի վերջինիս նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոց բացակայելու արգելքը թողնել անփոփոխ, իսկ տնային կալանքը երկարաձգել երկու ամիս ժամկետով:

Մեկ այլ գործով դատարանն ընդգծել է, որ խոչընդոտելու հավանականությունը պետք է գնահատման ենթարկվի ոչ թե վերացարկված, այլ ապացույցների որոշակի ամբողջությամբ հաստատված տվյալների հիման վրա, որոնք հնարավորություն կտան հիմնավորված ենթադրություններ անել առ այն, որ անձը, կալանքի կամ տնային կալանքի տակ չգտնվելով, կարող է խոչընդոտել քրեական վարույթի բնականոն ընթացքին: Ավելին՝ եթե գործի քննության որոշակի փուլում խափանման միջոց կիրառելու հիմքերը գնահատելիս հնարավոր է բացառապես հիմնվել ենթադրությունների վրա՝ հաշվի առնելով քրեական գործի բնույթը, վարույթի ընթացքը, գործով անցնող անձանց շրջանակը և այլ հանգամանքներ, ապա քննության հետագա փուլերում, առավել ևս՝ նախաքննությունը և նախնական դատախոսներն ավարտված լինելու, ապացույցների ծավալը որոշած և դրա մի մասը հետազոտած լինելու պայմաններում, հիմքերը պետք է հիմնված լինեն ոչ թե բացառապես ենթադրությունների, այլ հնարավոր ենթադրությունները որևէ կերպ հիմնավորող տվյալների վրա: Դատարանը նկատել է, որ ենթադրյալ հանցագործություններն առերևույթ բացահայտվել են գաղտնի քննչական գործողությունների կատարմամբ (օբյեկտիվ ապացույցներով), ինչի հետևանքով մեղադրյալի վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կամ դատարանի

¹²⁰ Տե՛ս, օրինակ՝ ԵԴ1/0534/01/24

¹²¹ ԵԴ1/0661/01/24

որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու վտանգը ցածր է¹²²:

Որոշ գործերով դատարանը նշել է, որ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Այսինքն՝ հանցանքի ծանրությունը և սպասվող պատժի խստությունը հանդիսանում են վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր, ուստի մեկ տարի ազատազրկում նախատեսող և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց ազատությունից զրկելու իրավական հիմքերի առկայությունը փաստելու համար չեն կարող սահմանվել նույնանման չափորոշիչներ¹²³:

Այս առումով որոշումներում դատարանը, օրինակ, նշել է, որ մեղադրյալին վերագրվող արարքը միջին ծանրության է, կամ հակառակը՝ շեշտադրել է արարքի հանրային վտանգավորությունը:

Արձանագրվել են գործեր, երբ դատարանը շատ ընդհանրական ձևակերպումներով է հիմնավորել խափանման միջոցի կիրառելիության իրավաչափությունը՝ հիմնականում հղում անելով նախորդ որոշումների, առանց մանրամասներ տրամադրելու, և գործով որևէ փոփոխության բացակայությանը¹²⁴:

Այդպես, գործերից մեկով դատարանը նշել է, որ տվյալ փուլում շարունակում են առկա լինել մեղադրյալի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց տնային կալանքի կիրառման հիմքերը՝ հաստատված երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 3-ի և 2023 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումներով: Մասնավորապես՝ այն, որ մեղադրյալը, գտնվելով ազատության մեջ, կարող է չկատարել իր վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունները և դիմել փախուստի: Դատարանը եզրահանգել է, որ գործով ձեռք չեն բերվել այնպիսի նոր փաստական տվյալներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են դատարանի կողմից նախկինում արձանագրված՝ մեղադրյալին տնային կալանքի տակ պահելու հիմքերը, ուստի մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ տնային կալանքը, վերացնելու կամ փոխելու փաստական հիմքեր չկան: Բացի այդ,

¹²² ՀԿԴ/0225/01/23

¹²³ ԵԴ1/1057/01/24

¹²⁴ ԵԴ1/2071/01/23

դատարանն արձանագրել է, որ տվյալ փուլում ՀՀ քրեական դատավարության 116-րդ հոդվածով սահմանված նպատակներին հնարավոր չէ հասնել մեղադրյալի նկատմամբ ավելի մեղմ խափանման միջոցների կիրառմամբ, քանի որ այլ խափանման միջոցներն ի գործ չեն ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը, հետևաբար՝ վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված տնային կալանքի ժամկետը¹²⁵: Սակայն դատարանը չի մանրամասնել, թե ինչու այլ խափանման միջոցների կիրառմամբ հնարավոր չէ չեզոքացնել ռիսկը: Մեղադրյալին վերագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքը՝ Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը՝ խոշոր չափերով: Այս գործով և՛ պաշտպանը, և՛ մեղադրյալը չեն առարկել մեղադրողի միջնորդությանը՝ երկարացնել տնային կալանքի ժամկետը:

Մեկ այլ գործով դատարանը նշել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ մեղադրյալի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց՝ տնային կալանք երկու ամիս ժամկետով: Նշված որոշումներով արձանագրվել է ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Առանց մանրամասներ տրամադրելու դատարանն արձանագրել է, որ մեղադրյալի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց տնային կալանք ընտրելու իրավաչափության պայմանները ներկա դրությամբ չեն վերացել և չեն փոխվել, մասնավորապես՝ մեղադրյալի կողմից քննությանը խոչընդոտելու հավանականությունը շարունակում է առկա լինել: Դատարանը հաշվի է առել նաև մեղադրյալին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, ինչը գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին, ըստ դատարանի, Էապես բարձրացնում է մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը¹²⁶:

Մեկ այլ գործով դատարանը հղում է կատարել նախորդիվ կայացված որոշմանը, որում արձանագրվել է մեղադրյալի կողմից իր վրա օրենքով դրված պարտականությունները չկատարելու հիմքի առկայությունը, և եզրահանգել, որ այդպիսի հավանականությունը տվյալ փուլում շարունակում է առկա լինել, քանի որ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ ազատության մեջ գտնվելով՝ մեղադրյալը կխոչընդոտի գործի քննությանը՝ դատավարության մասնակիցների, այդ թվում՝ մյուս մեղադրյալների վրա ազդեցություն գործադրելու ճանապարհով:

¹²⁵ ԵԴ1/2077/01/23

¹²⁶ ԵԴ1/2071/01/23

Ավելին՝ դատարանը նշել է, որ նման եզրահանգումը պայմանավորված է գործում առկա փաստական հանգամանքներով, այնուամենայնիվ, որևէ հանգամանք չի մանրամասնել: Արձանագրելով, որ գործով ձեռք չեն բերվել այնպիսի նոր փաստական տվյալներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են դատարանի կողմից արձանագրված՝ մեղադրյալի տնային կալանքի տակ պահելու հիմքերը, դատարանը եզրահանգել է, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցները վերացնելու կամ փոխելու փաստական հիմքեր առկա չեն¹²⁷:

Մեծ թվով գործերով դատարանը հիմնականում քննարկել է ապացույցների հետազոտելու ու վկաների հարցաքննելու հարցը որպես տնային կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտության հիմք, սակայն լրիվ տարբեր մոտեցում է ցուցաբերել այդ հարցի շուրջ:

➤ **Նախաքննության ավարտը որպես ռիսկի նվազեցման գործոն.**

Դիտարկված գործերի զգալի մասի դեպքում դատարանը գործը վարույթ ընդունելուց հետո առաջին անգամ խափանման միջոցի հարցը քննարկելիս՝ որպես նախնական դատալսման փուլում պարտադիր քննարկման հարց, արձանագրել է, որ ներկա փուլում, երբ ավարտվել է նախաքննությունը և քրեական վարույթի նյութերն հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, օբյեկտիվորեն նվազել է մեղադրյալի կողմից քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունը:

Գործերից մեկով դատարանն ընդգծել է ժամանակի հետ ռիսկի նվազման հանգամանքը: Մասնավորապես՝ դատարանն արձանագրել է, որ ազատությունից զրկելու վերոնշյալ հիմքը քննության տարբեր փուլերն ավարտելուն զուգահեռ աստիճանաբար կորցնում է իր կշիռը, իսկ տվյալ դեպքում քրեական վարույթը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, նախաքննության մարմնի կողմից կատարվել են գործը դատարան ուղարկելու համար անհրաժեշտ բոլոր ապացուցողական և քննչական գործողությունները, հարցաքննվել է տուժողը, կատարվել է առերես հարցաքննություն, ուստի էականորեն նվազել է գործով տուժողի վրա մեղադրյալի կողմից ազդելու և այդ կերպ վարույթի ընթացքին խոչընդոտելու հավանականությունը¹²⁸:

Անդրադառնալով մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցներից տնային կալանքի շարունակական կիրառման անհրաժեշտության հարցին՝ Դատարանն արձանագրել է, որ թեև որոշակի առումով իրատեսական է

¹²⁷ ԵԴ1/1629/01/24

¹²⁸ ԵԴ1/0661/01/24

մեղադրյալի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների չկատարման հավանականությունը, այնուամենայնիվ մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի վերոհիշյալ ռիսկն այլևս այն աստիճանի բարձր չէ, որ հնարավոր չլինի չեզոքացնել այլընտրանքային առավել մեղմ խափանման միջոցների կիրառմամբ: Դատարանի վերը նշված համոզմունքի ձևավորման համար հիմք է հանդիսացել, մասնավորապես այն հանգամանքը, որ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, դեպքի վերաբերյալ առկա են գործով անցնող անձանց համապատասխան ցուցմունքներ, ապացուցողական նյութը, որը դրվել է մեղադրյալին առաջադրված մեղադրանքի հիմքում, կազմում են նաև օբյեկտիվ (գրավոր) ապացույցներ, այդ թվում նաև՝ տեսագրություններ: Դատարանը հաշվի է առել և պակաս կարևորություն չի տվել նաև այն հանգամանքին, որ ի տարբերություն նախաքննության փուլի, դատաքննության փուլում ապացուցման գործընթացին միջամտելու ավելի նվազ հավանականություն է առկա, պայմանավորված այն հանգամանքով, որ ապացույցների հավաքման գործընթացն արդեն իսկ ավարտվել է¹²⁹:

Գործերից մեկով դատարանը նշել է, որ ժամանակին համընթաց մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հիմքերի առկայությունը հիմնավորող փաստական տվյալները փոփոխության են ենթարկվում, այլ կերպ՝ այդ հիմքերի առկայությունը չի կարող լինել կայուն և հարատև: Դատարանի սույն դիրքորոշումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ձևավորված այն իրավական մոտեցումներից, որ գործի քննությանը խոչընդոտելու վտանգը, եթե անգամ հիմնված լինի իրական մտավախությունների վրա, ապա արդարացված է լինում միայն նախաքննության սկզբնական փուլում, իսկ անգամ առանձնահատուկ բարդություն ներկայացնող գործերի դեպքում՝ խոչընդոտելու մտավախությունը ժամանակի ընթացքում նվազում է և այլևս չի կարող հիմք հանդիսանալ շարունակական կալանքը արդարացնելու համար (տե՛ս Եվրոպական դատարանի՝ W. v. Switherland գործով 26.01.1993թ. վճիռը, էջ 33-35, Clooth v. Belgium գործով 12.12.1991թ. վճիռը, էջ 43)¹³⁰:

Այս գործով, նշվածից զատ, դատարանը վկայակոչել է այն հանգամանքը, որ մեղադրյալը դեռևս նախաքննության սկզբնական փուլից ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, տվել ինքնախոստովանական ցուցմունքներ: Մինևույն ժամանակ, ըստ պաշտպանի հայտարարության՝ մեղադրյալը արագացված վարույթ կիրառելու միջնորդությամբ հանդես գալու պատրաստակամություն է հայտնել: Դատարանը նաև ընդգծել է, որ սույն

¹²⁹ ԵԴ1/0926/01/24

¹³⁰ ԵԴ1/1118/01/24

քրեական վարույթով անցնող երկու վկաները հանդիսանում են ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցներ, որպիսի պայմաններում ողջամիտ չեն լինի ենթադրություններ առ այն, որ մեղադրյալը կարող է որևէ կերպ ազդեցություն գործադրել նրանց վրա: Վերոշարադրյալի հաշվառմամբ դատարանն արձանագրել է, որ ոչ միայն նվազել է, այլ գրեթե չեզոքացել է մեղադրյալի կողմից քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունը, ուստի նման պայմաններում այլևս արդարացված չէ մեղադրյալին ազատության սահմանափակման պայմաններում պահելը:

Գործով դատակոչված վկա չլինելը նույնպես դատարանի կողմից գնահատվել է որպես վարույթին միջամտելու ռիսկի չեզոքացման գործոն: Այդպես, գործերից մեկով դատարանը, նկատի ունենալով այն, որ նախաքննությունն ավարտված է, քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ սույն քրեական վարույթով դատակոչված որևէ անձ առկա չէ, գտել է, որ նման պայմաններում մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունները չկատարելու վտանգի առկայությունը նույնպես էականորեն նվազել է: Վերոգրյալի հաշվառմամբ դատարանը գտել է, որ քննության ներկա փուլում խափանման միջոցի գործողության ընթացքում փոխվել և վերացել է դրա իրավաչափության պայմանը, գործի նյութերում առկա չեն և հանրային մեղադրողը դատարանին չի ներկայացրել այնպիսի փաստական տվյալներ և հիմնավորումներ, որոնք կանխորոշում են մեղադրյալի անձնական ազատությանը միջամտող տնային կալանքի կիրառման շարունակական պահպանման անհրաժեշտությունը¹³¹:

Այս գործով դատարանն ընդգծել է, որ վարույթն իրականացնող մարմինն անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս պետք է առաջնորդվի նվազագույնի սկզբունքով, այն է՝ չպետք է ընտրի ավելի խիստ խափանման միջոց, քան այն, որով քրեական վարույթի ընթացքում հնարավոր կլինի ապահովել մեղադրյալի օրինական վարքագիծը, իսկ քննարկվող դեպքում դատարանը եզրահանգել է, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել այլընտրանքային խափանման միջոցների, տվյալ դեպքում՝ վարչական հսկողության և բացակայելու արգելքի համակցված կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց, կարող է հաղթահարել նրա կողմից հնարավոր ոչ օրինական վարքագիծ դրսևորելու վերաբերյալ մտավախությունը, ավելին՝ այն հնարավորություն կտա ապահովելու մեղադրյալի ազատության իրավունքի և նրա մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը:

¹³¹ ԵԴ1/2187/01/23

Մեկ այլ գործով դատարանն արձանագրել է, որ նախորդիվ կայացված որոշումներով դատարանը տնային կալանքի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորել է այն հանգամանքով, որ առկա է մեղադրյալի՝ իր վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունները չկատարելու, մասնավորապես՝ քրեական վարույթին խոչընդոտելու, այդ թվում՝ քրեական գործի հետ առնչություն ունեցող բոլոր անձանց բացահայտելուն: Ներկայումս դատարանն արձանագրել է, որ քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել և հաստատված մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկվել է դատարան: Այսինքն՝ վարույթի նախաքննության ընթացքում կատարվել են հիմնական ապացույցների հավաքմանը, ձեռքբերմանը ուղղված քննչական, դատավարական գործողությունները, ուստի մեղադրյալի կողմից ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու ռիսկն ըստ էության վերացել է: Առավել ևս, որ վարույթով մեղադրյալը չունի հանցակիցներ և չկան դատակոչված վկաներ¹³²:

Մեկ այլ գործով նույնպես դատարանը հստակ նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործի նախաքննությունը ավարտվել է, հարցաքննվել են գործով անցնող բոլոր անձինք և իրականացվել են այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք անհրաժեշտ են եղել քրեական վարույթի շրջանականներում և նախաքննության մարմինը, բավարարվելով ապացույցների ձեռքբերված ծավալով, ավարտել է մինչդատական վարույթը և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել դատարան, ապա այլընտրանքային խափանման միջոցներից վարչական հսկողությունը՝ համակցված արդեն իսկ մինչդատական վարույթի ժամանակ կիրառված գրավի հետ, ի գործ են ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը՝ սահմանափակելով վերջինիս շփումը գործով անցնող վկաների հետ: Արդյունքում դատարանը մեղադրյալի նկատմամբ ընտրված համակցված խափանման միջոցներից տնային կալանքը փոփոխել է և նրա նկատմամբ ընտրվել վարչական հսկողությունը՝ միաժամանակ անփոփոխ թողնելով մինչդատական վարույթի ընթացքում արդեն իսկ ընտրված գրավը¹³³:

Մյուս գործով դատարանը վերահաստատել է նախորդ որոշմամբ արտահայտած դիրքորոշումները, և նշել, որ հաշվի առնելով մեղադրյալին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով վերագրվող ենթադրյալ հանցագործության համար նախատեսված պատժի խստությունը՝ դատարանը հավանական է համարում նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը, սակայն այդ մասին վկայող այլ փաստական հանգամանքների բացակայության պայմաններում

¹³² ԵԴ1/0796/01/24

¹³³ ԵԴ1/2577/01/24

դատարանն այդ հավանականությունը բարձր չի համարել: Նույնը վերաբերում է գործի քննությանը խոչընդոտելու հավանականությանը, այսինքն՝ դրա ռիսկը ևս ցածր է՝ նկատի ունենալով, որ գործը մեղադրական եզրակացությամբ ստացվել է դատարանում, ըստ մեղադրական եզրակացության 3 վկաներ են գործով ներգրավված, երկուսն արդեն հարցաքննվել են, ուստի նրանց վրա անօրինական ազդեցություն ունենալու և դրանով իսկ գործի քննությանը էական վնաս հասցնելու հավանականությունը դատարանը ցածր է համարել¹³⁴:

Որոշ գործերով դատարանը թեև խոչընդոտելու հավանականությունը բարձր է գնահատել, գտել է, որ այն հնարավոր է չեզոքացնել այլ խափանման միջոցների կիրառման միջոցով:

Այսպես, գործերից մեկով դատարանը նախ նշել է, որ դատական վարույթի ներկա փուլում, երբ դեռևս չեն հետազոտվել քրեական գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ չեն հարցաքննվել քրեական վարույթին ներգրավված մասնավոր մասնակիցները և օժանդակող անձինք, գտնում է, որ սույն փուլում դեռևս բարձր է մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունների կատարումից խուսափելու հավանականությունը՝ նկատի ունենալով դատարանի կողմից նախորդ՝ տնային կալանքի ժամկետի երկարաձգման որոշման համար հիմք ծառայած իրավաչափության պայմանների շարունակական առկայության փաստը հաստատող հիմնավորումները և պատճառաբանությունները, այնպես էլ ներկա պահին նշվածը հերքող փաստական տվյալներ չներկայացնելու հանգամանքը: Դատարանը գտել է, որ մեղադրյալին մեղսագրվող ենթադրյալ արարքների բնույթը՝ դրանց կատարման եղանակը, առանձնահատկությունները, թույլ են տալիս պատկերացում կազմել մեղադրյալի հետագա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման վերաբերյալ ու բացահայտել մեղադրյալի անձնային այն հատկանիշները, որոնք բացասական են բնութագրում վերջինիս ու էապես բարձրացնում են նրա կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունների կատարումից խուսափելու հավանականությունը: Այնուամենայնիվ, դատարանն, անդրադառնալով առավել մեղմ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման հնարավորությանը, արձանագրել է, որ վարչական հսկողությունը կիրառված գրավի հետ համակցված կարող է լինել գործունե երաշխիք՝ մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը չեզոքացնելու համար և դրանց կիրառմամբ հնարավոր է ապահովել մեղադրյալի հետագա պատշաճ վարքագիծը՝ գործի դատական քննության ընթացքում: Նշվածն արձանագրելիս դատարանը հաշվի է առել քրեական գործի մեծածավալ լինելը: Բացի այդ, դատարանը փաստել է, որ շուրջ

¹³⁴ ԵԴ1/1057/01/24

երկու ամիս վարույթը գտնվում է նախնական դատախոսների՝ սկզբնական փուլում: Ընդ որում, դատարանը հաշվի է առել նաև վարույթի մասնավոր մասնակիցների վարքագիծը: Այսինքն՝ ստեղծված իրավիճակում դատարանը գտել է, որ մեղադրյալի ազատության սահմանափակումը չի կարող լինել արդարացված: Դատարանը տնային կալանքը վերացրել է, կիրառել է վարչական հսկողություն՝ համակցված նախկինում կիրառված խափանման միջոց 10.000.000 ՀՀ դրամ չափով գրավի հետ¹³⁵:

➤ *Վկաների հարցաքննված չլինելը.*

Դիտարկված գործերի մեջ մեծ խումբ են կազմում այն դեպքերը, երբ դատարանը հակառակ մոտեցում է ցուցաբերել և վկայակոչել է գործով վկաների դեռևս հարցաքննված չլինելը որպես վարույթին միջամտելու բարձր հավանականության մասին վկայող հանգամանք: Այս հանգամանքը վկայակոչվել է ինչպես առանձին, այնպես էլ հիմնականում վերագրվող հանցանքի տեսակի հետ միասին՝ որպես լրացուցիչ ռիսկի գործոն:

Այդպես, գործերից մեկով դատարանն արձանագրել է, որ մինչդատական վարույթի ավարտված լինելը չի կարող ինքնին առանցքային նշանակություն ունենալ գործի դատական քննության փուլում մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու ռիսկերը գնահատելու հարցում: Դատարանը նման եզրահանգման է եկել պայմանավորված այն հանգամանքով, որ դատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը քննարկելիս, վերաբերելի գործոնների հաշվառմամբ, գնահատման է ենթարկվում մեղադրյալի մասնակցությամբ գործի պատշաճ դատական քննության հանրային շահը, որը ենթակա է գնահատման քրեական գործի տվյալ փուլում մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականության համատեքստում: Դատարանը գտել է, որ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը գնահատելիս պետք է հաշվի առնել դատաքննության ընթացքում կատարվելիք դատական գործողությունների ողջամտորեն սպասվելիք ծավալները և բնույթը¹³⁶:

Մեկ այլ գործով դատարանը գտել է, որ առկա է մեղադրյալի կողմից ապացուցման գործընթացին չմիջամտելու պարտականության կատարման խախտման հավանականություն: Դատարանը, հղում անելով այն հանգամանքին, որ դատավարությունը գտնվում է նախնական դատախոսների փուլում, դեռևս չեն հետազոտվել քրեական գործում առկա ապացույցները, ինչպես նաև չեն

¹³⁵ ԵԴ1/2145/01/23

¹³⁶ ՀԿԴ/0061/01/24

հարցաքննվել վկաները, այդ ռիսկը խիստ բարձր է գնահատել: Այսպիսով, դատարանն արձանագրել է, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց տնային կալանքի հիմքը դեռևս շարունակում է առկա լինել, որպիսի պայմաններում առավել մեղմ խափանման միջոցներն ի զորու չեն ապահովելու անձի դատավարական պատշաճ վարքագիծը: Դատարանը բավարարել է մեղադրյալի նկատմամբ կիրառված տնային կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ հանրային մեղադրողի միջնորդությունը¹³⁷:

Մեկ այլ գործով, անդրադառնալով մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված տնային կալանքի հիմքերին՝ դատարանը գտել է, որ ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի կողմից քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունն առկա է, քանի որ գործը գտնվում է նախնական դատախոսների փուլում և դեռևս չի հարցաքննվել տուժողը: Հետևաբար, Դատարանն արձանագրել է, որ տվյալ փուլում ՀՀ քրեական դատավարության 116-րդ հոդվածով սահմանված նպատակներին հնարավոր չէ հասնել մեղադրյալի նկատմամբ տնային կալանքից ավելի մեղմ խափանման միջոցի կամ դրանց համակցության կիրառմամբ, քանի որ այլ խափանման միջոցներն ի զորու չեն ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Դատարանը եզրահանգել է, որ վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված տնային կալանքի ժամկետը պետք է երկարաձգել երեք ամիս ժամկետով¹³⁸:

Մեկ այլ գործով դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ քրեական գործը գտնվում է դատարանում և մեղադրյալին հասու են քրեական գործի ողջ նյութերը և արդեն մեղադրյալը ամբողջ ծավալով տեղեկացված է մեղադրանքի կողմի ունեցած ապացուցողական զանգվածի մասին, և հաշվի առնելով, որ մեղադրյալը և տուժողը ունեն որոշակի ներանձնային հարաբերություններ, ուստի առարկայանում է կանխատեսական ենթադրությունը առ այն, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է **ներագդել տուժողի վրա իր համար նպաստավոր** դատավարական իրավիճակ ապահովելու համար, ինչով էլ կխոչընդոտի գործի քննությանը: Նման կանխատեսական ենթադրության պարագայում, դատարանի գնահատմամբ, տնային կալանքից բացի այլ խափանման միջոց չի կարող գործուն միջոց հանդիսանալ վերոնշյալ կանխատեսական ենթադրությունը չեզոքացնելու համար: Դատարանը գտել է, որ «տնային կալանք», 5.000.000 ՀՀ դրամ գրավը և բացակայելու արգելք խափանման միջոցները ի զորու են ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը գործի հետագա քննության փուլում¹³⁹:

¹³⁷ ԵԴ1/2598/01/24

¹³⁸ ԵԴ1/2441/01/24

¹³⁹ ԵԴ1/1439/01/24

Հատկանշական է գործերից մեկով դատարանի արած արձանագրումը, որ քննարկվող դեպքում, ըստ դատարանի, մեղադրյալի կողմից կատարված ենթադրյալ արարքները ուղղված չեն եղել տուժողի անձին, այլ պայմանավորված են եղել տուժողի ունեցած քաղաքական հայացքներով, ինչպիսի հանգամանքը փաստում է այն մասին, որ տվյալ դեպքում գործ ունենք երկու հակառակ քաղաքական, գաղափարական բևեռների հետ, որպիսի հանգամանքը կրկին անգամ փաստում է այն ենթադրությունը, որ մնալով ազատության մեջ՝ մեղադրյալը, ինչպես նաև գաղափարական հակադիր բևեռներում գտնվող անձիք կփորձեն անօրինական ազդեցություն գործադրել վկայի և տուժողի վրա: Ըստ դատարանի՝ վերոգրյալ հանգամանքը հաստատվում է նաև նրանով, որ դատական նիստի դահլիճից հեռացված մեղադրյալի ազգականի կողմից, դատարանի շենքում, տուժողի նկատմամբ հնչեցվել են որոշակի ամոթանքներ՝ նման կերպ հաստատելով մեղադրյալի և վերջինիս համախոհների հակակրանքը տուժողի նկատմամբ: Այս հանգամանքով դատարանը ամրապնդում է իր կողմից արված եզրահանգումը առ այն, որ տվյալ դատավարական փուլում, երբ դեռ դատարանի կողմից հարցաքննված չեն գործով այլ անձիք, մասնավորապես՝ գործով առկա տուժողը և վկան, առերևույթ առկա է վտանգը, որ մեղադրյալը, գտնվելով ազատության մեջ, կարող է ապօրինի ազդեցություն գործադրել սույն գործով ներգրավված վերոնշյալ անձանց վրա: Դատարանը եզրահանգել է, որ նշված ռիսկը այնքան բարձր է, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել կալանք խափանման միջոցի կիրառմամբ, սակայն միառժամանակ դատարանը հաշվի է առել դատական նիստի ընթացքում արված հայտարարությունը առ այն, որ մեղադրյալը ձերբակալված լինելու ընթացքում ենթարկվել է խոշտանգման, որի վերաբերյալ առկա է նաև փորձաքննության եզրակացություն: Դատարանը երկարացրել է տևալին կալանքի ժամկետը¹⁴⁰:

Գործերից մեկով դատարանը գտել է, որ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցների՝ համակցված տևալին կալանք, բացակայելու արգելքը և գրավը պահպանումն անհրաժեշտ է՝ վերջինի վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար: Դատարանը նման եզրահանգման հիմքում դրել է հետևյալ հանգամանքները՝ մեղադրյալի վերաբերյալ քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ստացվել է դատարան (խափանման միջոց կիրառելու պայմաններն առերևույթ առկա են), գործով դատաքննության դեռևս չսկսված լինելը և ապացույցների հետազոտված չլինելը, և մեղադրյալին վերագրվող

¹⁴⁰ ԵԴ1/0994/01/24

հանցագործության բնույթը, վտանգավորության աստիճանը, ակնկալվող պատժի խստությունը¹⁴¹:

Մեկ այլ գործով դատարանը, ի լրումն մեղադրանքի կողմից ներկայացված որևէ ապացույց դեռևս չհետազոտված լինելու հանգամանքին, նշել է նաև դատակոչված վկաներից մեկի՝ մեղադրյալի հետ ազգակցական հարաբերությունների մեջ գտնվելու մասին և մյուս վկային մեղադրյալի կողմից ճանաչելու հավանականությունը: Դատարանը նշել է նաև վերագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը: Արդյունքում դատարանը եզրակացրել է, որ մեղադրյալի կողմից վկաների վրա ապօրինի ազդեցություն ունենալու հավանականությունն առկա է, և այդպիսի ռիսկը չեզոքացնելու համար տնային կալանքը կարող է լինել արդյունավետ միջոց¹⁴²:

Մեկ այլ գործով դատարանը, ի լրումն նախնական դատալսման փուլում գտնվելու, ողջամիտ կասկածի առկայության, շեշտադրել է մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն, որ մեղադրյալը մեղադրվում է բնակչության առողջության դեմ ուղղված և դիտավորությամբ դրսևորվող ծանր հանցանքի կատարման մեջ, որի համար պատիժ է նախատեսված չորսից ութ տարի ժամկետով ազատազրկման ձևով, դրանով նաև պայմանավորել վկաների վրա ներագդելու բարձր հավանականությունը՝ ի օգուտ մեղադրյալի ցուցմունք տալը հարկադրելու նպատակով¹⁴³:

Ինչպես տեսնում ենք, վերագրվող արարքը և դրա համար նախատեսված պատիժը գնահատվել են որպես էական գործոն մի շարք գործերում:

Այլ գործով դատարանն անդրադարձել է մեղադրյալի և տուժողների միջև մտերիմ ընկերական հարաբերությունների առկայությանը, և եզրահանգել, որ քանի դեռ քրեական գործով չի հարցաքննվել որևէ անձ, ողջամիտ է ենթադրությունն առ այն, որ մեղադրյալն իր օգտին ցուցմունքներ տալու և/կամ ցուցմունքները համապատասխանեցնելու ակնկալիքով կարող է ազդեցություն գործադրել նրանց վրա՝ այդ կերպ ապօրինի միջամտելով ապացուցման գործընթացին: Վերոգրյալի հետ միասին դատարանը հաշվի է առել մեղադրյալին վերագրվող արարքների բնույթը, կատարման եղանակը, հանրային վտանգավորության աստիճանը, այդ թվում՝ այդ արարքների համար նախատեսված պատժի խստությունը, ինչը, ըստ դատարանի, ևս կանխորոշիչ դեր ունի մեղադրյալի հնարավոր ոչ օրինական վարքագծի ռիսկերը գնահատելու տեսանկյունից: Դատարանը եզրահանգել է, որ

¹⁴¹ ԵԴ1/0689/01/24

¹⁴² ԵԴ1/1054/01/24

¹⁴³ ԵԴ1/0562/01/24

քրեական գործի քննության տվյալ փուլում առկա է մեղադրյալի կողմից քննությանը խոչընդոտելու բարձր ռիսկ, ուստի երկարացրել է տնային կալանքի ժամկետը¹⁴⁴:

Մեկ այլ գործով դատարանն ընդգծել է, որ քրեական գործի տվյալներում և/կամ գործի ընթացքի առանց որևէ էական փոփոխության, որը կարող է նշանակություն ունենալ այլընտրանքային այլ խափանման միջոցների թույլատրելիության հարցում, պաշտպանական կողմի միջնորդության բավարարումն իրավաչափ չի լինի, այն դեպքում, երբ այդ նույն իրավիճակում, նույն փաստական հանգամանքներով նախկինում արձանագրվել է, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել այդ թվում այլընտրանքային խափանման միջոց տնային կալանքի պայմաններում, իսկ անազատության հետ չկապված այլ խափանման միջոցների կիրառումը թույլատրելի չի համարվել: Այս գործով դատարանն ըստ էության երկու հիմնական փաստարկ է հաշվի առել՝ հիմնական դատալսման փուլում փաստաթղթային ապացույցների ամբողջությամբ հետազոտված չլինելը և գործով անցնող անձանց հարցաքննված չլինելը; ինչպես նաև նախկինում ավելի մեղմ խափանման միջոցի՝ վարչական հսկողության պայմանները խախտելը: Երկրորդ գործոնի մասով դատարանը նշել է, որ մեղադրյալի նկատմամբ նախկինում դատարանն առաջնորդվել է նվազագույնի սկզբունքով, սակայն վերջինս իր գործողություններով հիմնավորել է, որ այն բավարար երաշխիք չէ իր պատշաճ վարքագիծն ապահովելու հարցում, ինչով պայմանավորված դատարանի հետևությունները ոչ թե հանդիսանում են ողջամիտ ենթադրություններ, այլ՝ գործի քննության ընթացքում արձանագրված ուղղակի փաստ: Դատարանը փաստել է, որ առկա չեն այնպիսի նոր էական հանգամանքներ, որոնք կարող են վկայել ընտրված խափանման միջոցն առավել մեղմ խափանման միջոցով փոխարինելու անհրաժեշտության մասին¹⁴⁵:

➤ *Այլ գործոնների առկայություն*

Դիտարկված գործերով դատարանը որոշ դեպքերում հաշվի է առել որոշակի լրացուցիչ հանգամանքներ, օրինակ՝ մեղքն ընդունելը, դատավարության ձգձգումները՝ պայմանավորված ապացույցների մեծ ծավալով կամ միջազգային փոխօգնության ընթացակարգից օգտվելու անհրաժեշտությամբ, և այլն:

Որոշ գործերով դատարանը, ի թիվս այլ գործոնների, ընդգծել է տնային կալանքի կամ անազատության պայմաններում գտնվելու ժամանակահատվածը: Որոշ դատավորներ իրենց որոշումներում նշել են, որ անձի շարունակական

¹⁴⁴ ԵԴ1/1744/01/24

¹⁴⁵ ՀԿԴ/0310/01/23

անազատության մեջ գտնվելու դեպքում դրա նպատակահարմարության աստիճանը նվազում է, և դատարանի կողմից անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտության պատճառաբանվածության աստիճանին ավելի բարձր պահանջներ են ներկայացվում:

Գործերից մեկով դատարանը թեև արձանագրել է, որ մեղադրյալի կողմից իր վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունները չկատարելու հավանականությունը դեռևս առկա է, այնուամենայնիվ, նշել է, որ վարույթին խոչընդոտելու հավանականության ռիսկը նվազել է: Դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ թեև վարույթի սկզբնական փուլում արձանագրվել է նշված հիմքի առկայություն և բարձր հավանականություն, սակայն քրեական վարույթի առկա փուլում, երբ անձն անազատության մեջ է 2023 թվականի հոկտեմբերի 3-ից, քրեական վարույթը գտնվում է դատական քննության փուլում, այսինքն՝ մեղադրանքի կողմը ձեռք է բերել բոլոր ապացույցները՝ հարցաքննվել են վարույթի օժանդակ մասնակիցները, **արդեն առաջին պլան է մղվում այդ ընթացքում մեղադրյալի փաստացի դրսևորած վարքագիծը:** Որպես հավանականության նվազման ցուցիչ՝ դատարանը նշել է մեղադրյալի կողմից իր վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունները չկատարելու որևէ **փաստական հանգամանքի բացակայություն**, մեղադրյալի՝ դատապարտված չլինելը և մշտական բնակության վայր ունենալը, ամուսնացած լինելը և խնամքին կինը և երկու անչափահաս երեխաները ունենալը: Ավելին՝ մեղադրյալը իրեն ներկայացված **մեղադրանքում մեղավոր է ճանաչել** և համապատասխան փուլում համաձայնեցված վարույթով դատական քննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ հանդես գալու մասին է հայտնել: Մեղադրյալի նկատմամբ համակցված կիրառված է նաև այլընտրանքային խափանման միջոց գրավ՝ յոթ միլիոն ՀՀ դրամ: Դատարանը գտել է, որ վերոշարադրյալ փաստական հանգամանքներն առանցքային նշանակություն ունեն մեղադրյալի կողմից գործի քննությանը միջամտելու ռիսկի չափերի և աստիճանի գնահատման տեսանկյունից, մասնավորապես, հանդիսանում են այնպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք էականորեն նվազեցնում են գործի քննությանը խոչընդոտելու հավանականության ռիսկը: Արդյունքում՝ դատարանը վերացրել է տնային կալանքը¹⁴⁶:

Գործերից մեկով մեղադրյալի՝ տնային կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը գնահատելով՝ դատարանը հաշվի էր առել մեղադրյալի՝ 4 ամիս անազատության մեջ գտնվելը: Դատարանը հաշվի է առել նաև մեղադրյալի

¹⁴⁶ ՀԿԴ/0024/01/24

անձը և ընտանեկան դրությունը բնութագրող տվյալները, այդ թվում այն, որ նա վատառողջ է, իսկ նրա խնամքին են երկու անչափահաս երեխաները, և եզրահանգել, որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշված պաշտպանության տեսանկյունից մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված որևէ խափանման միջոցի հետագա կիրառումը համաչափ չէ դրանով հետապնդվող նպատակին, իսկ բացակայելու արգելք խափանման միջոցի կիրառումը սույն դեպքում ի գործ է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Վերջին դիրքորոշման համար դատարանը հիմք է ընդունել այն, որ բացակայելու արգելքը խափանման միջոցներից ամենամեղմն է, իսկ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը թեև առկա է, սակայն էապես նվազ է: Այս գործով մեղադրյալին վերագրվել է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը՝ շահադիտական դրդումներով (ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մաս 2-րդ կետ)¹⁴⁷:

Մեկ այլ գործով նույնպես շոշափվել է անազատության պայմաններում տևական ժամանակ լինելը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալը 2024 թվականի ապրիլի 1-ից գտնվում է շարունակական կալանքի տակ, ինչպես նաև վերջինիս կողմից մեղքը ընդունելու, դատվածություն չունենալու և խնամքին հղի կին ունենալու հանգամանքները, Դատարանն արձանագրել է, որ մինչդատական վարույթում մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հիմքը էականորեն նվազել է, և գտել է, որ դատական քննության սույն փուլում խիստ նվազել է մեղադրյալի կողմից քրեական վարույթին խոչընդոտելու, մասնավորապես ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու ռիսկը: Դատարանի համոզմամբ՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նախաքննության ընթացքում արդեն իսկ կիրառված առավել մեղմ համակցված խափանման միջոցներ գրավով և Հայաստանի Հանրապետությունից բացակայելու արգելքով¹⁴⁸:

Դատավարության տևողությանն անդրադառնալիս գործերից մեկով դատարանը արձանագրել է, որ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախկինում կայացված որոշումներից հետո գործի քննության ընթացքում տեղի են ունեցել այնպիսի էական փոփոխություններ, որոնք հիմք են հանդիսանում գնահատելու և արձանագրելու խոչընդոտելու ռիսկի նվազած լինելու, ինչով էլ պայմանավորված՝ այլընտրանքային ավելի մեղմ խափանման միջոցների այլևս թույլատրելի լինելու հանգամանքը: Դատարանի նշված դիրքորոշումը

¹⁴⁷ ԵԴ1/2254/01/23

¹⁴⁸ ԵԴ1/1224/01/24

պայմանավորված է այն հանգամանքով, որ գործի քննությունը գտնվում է **հիմնական դատալսումների այնպիսի փուլում, որտեղ քրեական գործի գրավոր՝ փաստաթղթային ապացույցները տևականորեն հետազոտվում են:** Այսինքն՝ քրեական գործի քննության ընթացքում փաստաթղթային ապացույցների մի մասն արդեն իսկ հետազոտվել են, իսկ մյուս մասի հետազոտումն իրենից դեռևս տևական ժամանակ է պահանջելու՝ նկատի ունենալով նախնական դատալսումների ընթացքում սահմանված ապացույցների ծավալը: Դատարանի գնահատմամբ՝ որոշակի ժամանակահատված անցած լինելը և ապացույցների մի մասը հետազոտած լինելն ինքնին վկայում են, որ գործի քննության ընթացքում տեղի են ունեցել էական փոփոխություններ: Դատարանը շեշտել է, որ տևական ժամանակ անցած լինելու հանգամանքը և անազատության մեջ գտնվելու փաստը ողջամտորեն կարող է ապահովել մեղադրյալի կողմից հետագա պատշաճ վարքագիծ դրսևորելը: Դատարանը նաև նշել է, որ մեղադրյալի նկատմամբ նույնիսկ մեղադրական դատավճիռ կայացնելու և պատիժ նշանակելու դեպքում, վերջինի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով պետք է հաշվակցվի հնարավոր նշանակվելիք պատժին, ինչն իր հերթին լրացուցիչ գործոն է պատշաճ վարքագիծ դրսևորելու հարցում: Նշվել է նաև, որ քրեական գործով անցնող 4 մեղադրյալներից 3-ը ներկայում գտնվում են ազատության մեջ և նրանց նկատմամբ կիրառված են ավելի մեղմ խափանման միջոցներ՝ նկատելով, որ քրեական գործում առկա չեն այնպիսի տվյալներ, որոնցով պայմանավորված հնարավոր կլինի փաստել, որ մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, ի տարբերություն մյուս մեղադրյալների, բարձր է: Դատարանն արձանագրել է, որ քրեական գործում առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք կվկայեն, որ սույն փուլում մեղադրյալի վրա դրված պարտականությունները չկատարելու հավանականությունն այնչափ բարձր է, որ ազատության սահմանափակման հետ կապ չունեցող այլընտրանքային խափանման միջոցները չեն կարող ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը¹⁴⁹:

Մեկ այլ գործով դատարանը նշել է, որ մեղադրյալն անազատության մեջ է գտնվում շուրջ ինն ամիս, վերջինին տնային կալանքի տակ պահելու հիմքը նրա կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունների կատարումն ապահովելու անհրաժեշտությունն է եղել: Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ նրա խնամքին են երկու անչափահաս երեխաները և կենսաթոշակառու ծնողները: Այս համատեքստում նկատի ունենալով, որ տուժողը և վկաները գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, հաշվի

¹⁴⁹ ՀԿԴ/0225/01/23

առնելով դատարանում ապացույցների հետազոտման անմիջականության սկզբունքը և **միջազգային իրավական փոխօգնության առանձնահատկությունները, ընթացակարգերը և ժամկետները՝** դատարանը գտել է, որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության տեսանկյունից մեղադրյալին ազատությունից զրկելու հետ կապված որևէ խափանման միջոցի հետագա կիրառումը համաչափ չէ դրանով հետապնդվող նպատակին: Դատարանը գտել է, որ որպես խափանման միջոց կիրառված գրավի պահպանումը և դրան համակցված՝ լրացուցիչ սահմանափակումներով վարչական հսկողության կիրառումը սույն դեպքում ի գործ են չեզոքացնել մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր վրա դրված պարտականությունները չկատարելու հավանականությունը և ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի հավանականությունը դատական քննության փուլում այնչափ բարձր չէ, որպեսզի այն հաղթահարի փաստական հանգամանքների վրա հիմնված ենթադրությունների այն անհրաժեշտ նշաձողը, որը թույլ կտա մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց տնային կալանքի շարունակական կիրառումը հիմնավոր դիտարկել¹⁵⁰:

Ուսումնասիրված հաջորդ գործով դատարանը արձանագրել է, որ մեղադրյալին մեղսագրվում է 2019 թվականին կատարած արարքներ, ուստի վարութային մասնակիցներին հայտնաբերելը, նրանց դատարան ներկայացնելը որոշակի բարդություններով (բնակության հասցեի և ընդհանրապես բնակության վայրի փոփոխություն, ՀՀ-ից մեկնել և այլն) են իրականանում, դեռևս չեն հարցաքննվել վկաների մեծ մասը, ինչպես նաև տուժողը, մեղադրյալը չի խախտել իր վրա դրված պարտականությունները և այլն: Այնուամենայնիվ, դատարանը եզրահանգել է, որ վարույթի քննության այս փուլում դեռևս հավանական է համարում մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու, փախուստի դիմելու օրենսդրորեն ամրագրված հիմքերը, ինչպես նաև վարույթով անցնող անձանց վրա անօրինական ազդեցություն գործելու ռիսկը, ինչը կարող է չեզոքացվել տնային կալանք խափանման միջոցի կիրառման պայմաններում, այսինքն՝ տնային կալանքը թողել է անփոփոխ¹⁵¹:

Մեկ այլ գործով դատարանն ընդգծել է մեղադրյալի՝ վերագրվող արարքը կատարելիս պաշտոնատար անձ հանդիսանալը, այն, որ վերջինիս մեղսագրվում է պաշտոնից բխող ազդեցությունն օգտագործելով ենթադրյալ հանցավոր արարքների կատարումը, ինչպես նաև մեղադրյալի՝ վարույթին ներգրավված

¹⁵⁰ ԵԴ1/2195/01/23

¹⁵¹ ԵԴ1/1440/01/23

անձանց հետ որոշակի փոխհարաբերություններ ունենալու, նաև վերջինիս հետ գործընկերներ հանդիսանալու հանգամանքները: Արդյունքում եզրահանգել է, որ դեռևս առկա է մեղադրյալի կողմից ազատության մեջ գտնվելու պայմաններում վարույթին խոչընդոտելու հավանականությունը, ինչը կարող է դրսևորվել գործով անցնող անձանց նկատմամբ ապօրինի ազդեցություն գործադրելու, այդ թվում՝ ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու եղանակով: Դատարանը նաև նշել է, որ խափանման միջոցը՝ տնային կալանքը փոխելու կամ վերացնելու և ավելի մեղմ խափանման միջոց ընտրելու բավարար փաստական տվյալներ դատարանին չեն ներկայացվել, ինչը հիմք կհանդիսանար ոչ պատշաճ վարքագծի դրսևորման ռիսկերի նվազած լինելու վերաբերյալ հիմնավոր եզրահանգում կատարելու համար: Քննարկելով վերագրվող հանցանքների՝ պաշտոնատար անձի կողմից կատարելու և դրանով պայմանավորված ավելի բարձր հանրային վտանգավորության հանգամանքով՝ դատարանը եզրահանգել է, որ դա բավարար հիմք է հանդիսանում անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկած ձևավորելու առ այն, որ անձը կարող է խոչընդոտել քրեական գործին, այդ թվում՝ ապօրինի միջամտել գործի քննությանը: Նշված փաստարկը հիմնավորելու համար դատարանը վկայակոչել է ՄԻԵԴ-ի պրակտիկան առ այն, որ ի թիվս այլնի, անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս առանձնահատուկ դերակատարում ունի նրա՝ հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած պաշտոնն ու հնարավոր ազդեցությունը գործով անցնող վկաների վրա, նրա հնարավորությունները խոչընդոտելու քրեական գործի բնականոն ընթացքին¹⁵²:

Ավելին՝ այս գործով դատարանը նշել է, որ միևնույն ժամանակ վարույթի ավարտված լինելը չի կարող ինքնին առանցքային նշանակություն ունենալ գործի դատական քննության փուլում մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու ռիսկերը գնահատելու հարցում: Դատարանը նման եզրահանգման է եկել պայմանավորված այն հանգամանքով, որ դատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը քննարկելիս, վերաբերելի գործոնների հաշվառմամբ, գնահատման է ենթարկվում մեղադրյալի մասնակցությամբ գործի պատշաճ դատական քննության հանրային շահը, որը ենթակա է գնահատման քրեական գործի տվյալ փուլում մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականության համատեքստում և պետք է հաշվի առնել դատաքննության ընթացքում կատարվելիք դատական գործողությունների ողջամտորեն սպասվելիք ծավալները և բնույթը:

Ինքնախոստովանական ցուցմունք տալու գործոնն ընդգծվել է նաև մեկ այլ գործով: Այդպես, դատարանը նշել է, որ նախաքննությունը ավարտվել է,

¹⁵² ՀԿԴ/0220/01/24

հավաքվել են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր ապացույցները, ինչպես նաև քննության ընթացքում մեղադրյալը օժանդակել է գործի քննությանը, մատնացույց է արել թմրամիջոցը հայտնաբերելու վայրը, **տվել է ինքնախոստովանական ցուցմունք, չի վիճարկում իրեն ներկայացված մեղադրանքի փաստական հիմքն** ու իրավական գնահատականը, ինչի պայմաններում դատարանը գտել է, որ էականորեն նվազել է մեղադրյալի կողմից քրեական գործի քննությանը խոչընդոտելու մտավախությունը¹⁵³:

Մեկ այլ գործով դատարանը արձանագրել է քրեական վարույթին խոչընդոտելու ռիսկի ցածր լինելը, նախորդ որոշմամբ տնային կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման համար հիմք ծառայած իրավաչափության պայմանների շարունակական առկայության փաստը հաստատող հիմնավորումները և պատճառաբանությունները, ինչպես նաև ներկա պահին նշվածը հերքող փաստական տվյալներ չներկայացնելու հանգամանքը: Դրան զուգահեռ դատարանը վկայակոչել է մեղադրյալի դրական բնութագրվելու հանգամանքը, Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակցելը, ամուսնացած լինելը, խնամքին են գտնվում երրորդ խմբի հաշմանդամ մայրը, երկրորդ խմբի հաշմանդամ հայրը, երրորդ խմբի հաշմանդամ որդին, ունի մշտական բնակության վայր, այնուամենայնիվ, եզրահանգել է, որ կիրառված խափանման միջոց՝ տնային կալանքը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և զսպել՝ մեղադրյալի հավանական ոչ օրինաչափ վարքագծի վերաբերյալ դատարանի մոտ առկա մտավախությունները, և երկարաձգել է այն երեք ամիս ժամկետով¹⁵⁴:

Գործերից մեկով դատարանը գտել է, որ սույն դեպքում անհրաժեշտ է ընտրված խափանման միջոց տնային կալանքի ժամկետը երկարաձգել մեղադրյալի կողմից իր վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար, քանի որ նախաքննության մարմնին արդեն իսկ մեկ անգամ հայտնի է դարձել մեղադրյալի կողմից քննությանը խոչընդոտելու կամ գոնե նման գործողություն կատարելու ողջամիտ կասկած, այն է՝ մեղադրյալը զանգահարել է վկային և հայտնել, որ եթե որևէ մեկն իր անունը տա՝ «մոռթելու է»: Դատարանը նաև նշել է, որ թեև սույն քրեական վարույթի նախաքննության փուլն արդեն իսկ ավարտվել է, սակայն դա դեռևս ինքնին չի նշանակում, որ վարույթի քննությունն առհասարակ ավարտվել է՝ հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթը դեռևս նոր է ստացվել դատարան և վարույթի քննությունը գտնվում է նախնական դատախոսների փուլում: Մասնավորապես՝ դեռևս պետք է հետազոտվեն ապացույցները, հարցաքննվեն դատարանում դեռևս չհարցաքննված վկան և տուժողը, այդ թվում այն վկան, ում

¹⁵³ ԵԴ1/1718/01/24

¹⁵⁴ ՍԴ/0037/01/23

սպառնացել է մեղադրյալը, ուստի հարկ է արձանագրել, որ առնվազն մինչև տվյալ վկայի հարցաքննությունն իրականացնելը դատարանը զրկված է տվյալ հիմքի ռիսկի նվազման առումով որևէ այլ դատողություններ կատարելուց: Նման պայմաններում դատարանն իրատեսական է համարել մեղադրյալի կողմից դեռևս չհարցաքննված վկայի և տուժողի վրա ապօրինի ազդեցություն գործադրելու մտավախությունը¹⁵⁵:

Մեկ այլ գործով դատարանը վերագնահատել է նախաքննության ժամանակ խափանման միջոցի ընտրության և դրա հիմքում ընկած հանգամանքները: Այդպես, դատարանն արձանագրել է, որ դատարանը 2024 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ խոչընդոտելու հավանականությունը պայմանավորել էր մեղադրյալի կողմից թմրամիջոցի ենթադրյալ ձեռք բերման, թմրամիջոց իրացնելու, ենթադրյալ թմրամիջոց իրացրած անձանց ինքնությունները պարզելու հանգամանքներով: Հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթով որևէ անձի թմրամիջոցի իրացման մեղադրանք առաջադրված չէ, իսկ գործով անցնող անձինք ոստիկանության ծառայողներ են, որոնց վրա, ըստ դատարանի, ազդեցություն գործադրելու հավանականությունը ողջամիտ չէ, դատարանը գտել է, որ խոչընդոտելու հավանականությունն էականորեն նվազ է, ուստի մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց տնային կալանքի ժամկետը երկարաձգելու կամ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է: Արդյունքում կիրառվել է բացակայելու արգելք¹⁵⁶:

Ինչպես կարելի է նկատել ներկայացվածից, պարտավորությունների կատարման առնչությամբ դատարանների մոտ առկա են տարբեր մոտեցումներ, ինչը հիմնականում որոշումներում տեղ է գտնում երեք հիմնական հիմքի վերլուծությամբ՝ խոչընդոտելու ռիսկի կանխում, գործին միջամտելու ռիսկ և անհատական հանգամանքների հիման վրա ռիսկերի գնահատում: Այս առնչությամբ գերակշիռ դեպքերում արձանագրվել է, որ դատարանները հաճախ նշում են, որ միջամտելու և այլ ռիսկեր չպետք է գնահատվեն վերացական, այլ հիմնվեն գործի կոնկրետ փաստական հանգամանքների վրա, սակայն նկատվել է ինչպես վերացական մոտեցման կիրառում և ռիսկերի գնահատման բաց, այնպես էլ միևնույն հարցի վերաբերյալ տարբեր մոտեցումների կիրառում: Գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ արձանագրվել են դեպքեր, երբ դատարանները հղումներ են արել նախորդ որոշումներին՝ առանց նոր տվյալներ ներկայացնելու կամ նախկին հիմնավորումները փաստացի վերլուծելու:

¹⁵⁵ ԵԴ1/3303/01/24

¹⁵⁶ ԵԴ1/1981/01/24

Ամփոփելով տնային կալանքի կիրառման դեպքերում դատավորների կողմից այլ գործոնների կիրառման պրակտիկան՝ կարող ենք նշել, որ դատավորները ուշադրություն են դարձնում այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են մեղադրյալի կողմից **մեղքի ընդունումը, ինքնախոստովանական ցուցմունքները, քննությանը օժանդակելը**, որոնք կարող են դիտարկվել որպես ռիսկերը նվազեցնող հանգամանքներ: Նմանապես, այս հանգամանքների թվին է դասվում նաև **նախաքննության ավարտը, ապացույցների մեծ մասի հավաքագրումը կամ ուսումնասիրությունը, վկաների՝ ոստիկանության կամ քրեակատարողական ծառայող լինելը**, ինչը կրկին հիմք կարող է լինել խափանման միջոցը մեղմացնելու համար, քանի որ խոչընդոտելու հնարավորությունը նվազում է: Որոշ գործերով ընդգծվել է, որ հանցանքի ծանրությունը և սպասվող պատժի խստությունը հանդիսանում են վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր:

Այն դեպքերում, երբ գործով ներգրավված են եղել պաշտոնատար անձինք, ապա խափանման միջոցի պահպանումը դատարանն իրավաչափ է համարել՝ նկատի ունենալով հնարավոր **ազդեցությունը վկաների վրա** կամ **ապացույցների նկատմամբ միջամտությունը**:

Չարկ է արձանագրել, որ դիտարկված գործերի մեծամասնության դեպքում դատարանն ընդհանրական ձևակերպմամբ պարզապես նշում է, որ այլ խափանման միջոցների կիրառմամբ հնարավոր չէ նվազեցնել կամ չեզոքացնել արձանագրված ռիսկը՝ առանց գործի հանգամանքներով հիմնավորելու:

6.6 Նիստի ընթացքում դատարանի կողմից անդրադարձ այլ հանգամանքների

Առանձին դեպքերում դատարանը, ի լրումն մեղադրյալի փախուստի ռիսկին, պարտավորությունների կատարմանը և նոր հանցանք կատարելու կանխմանը անդրադարձին, նշել է այլ հանգամանքներ ևս, որոնք, ըստ դատարանի որոշման, էական են եղել խափանման միջոցի ընտրության հարցում: Մասնավորապես, նմանատիպ գործերից մեկով դատարանը նշել է, որ.

«Չաշվի առնելով դատական նիստի ընթացքում արված հայտարարությունը մեղադրյալին խոշտանգման ենթարկելու փաստի առթիվ, գնահատելով նաև այն հանգամանքը, որ ենթադրյալ խոշտանգման մասին հայտարարությունը նաև որոշակիորեն հիմնավորվում է փորձագետի եզրակացությամբ՝ Պատարանը մեղադրյալի նկատմամբ նման հնարավոր հետագա վերաբերմունքը կանխելու

նպատակով, առավել նպատակահարմար է գտնում մեղադրյալի նկատմամբ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի կիրառում, որը միառժամանակ, այլ խափանման միջոցների՝ գրավի և բացակայելու արգելքի կիրառված համակցությամբ կարող է ապահովել օրենքով մեղադրյալի վրա դրված պարտականությունների չկատարման հիմքի չեզոքացումը»¹⁵⁷ :

Ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել է, որ որոշ դեպքերում վարձակալական հիմունքներով բնակվող մեղադրյալներ տնային կալանք խափանման միջոց կիրառվելու դեպքում բախվում են լրացուցիչ մարտահրավերների, որոշ դեպքերում վարձակալության պայմանագիրը տան սեփականատերը չի երկարացնում, ուստի առաջանում է անհրաժեշտություն փոխել տնային կալանքի տակ գտնվելու վայրը: Դիտարկված գործերով, երբ նման հարց է բարձրացվել, դատարանը տնային կալանքը փոխել է վարչական հսկողությանը կամ այլ խափանման միջոցների:

Մեկ այլ գործով դատարանը անկյունաքարային է համարել երեխայի իրավունքների ապահովումն այն դեպքում, երբ ծնողի նկատմամբ տնային կալանք է կիրառված: Այս գործով դատարանը նախ նշել է, որ ներկայումս քրեական գործը գտնվում է դատաքննության փուլում, մեղադրանքի կողմը ավարտել է ապացույցների ձեռքբերման գործընթացը, ինչով էլ պայմանավորված մեղադրյալի կողմից գործի քննությանը ներագդելու հավանականությունը նվազել է, և մասնավորապես հաշվի առնելով, որ սույն գործով մյուս մեղադրյալը արդեն իսկ տվել է ցուցմունքներ, որոնք, ըստ էության, ընդհանուր առմամբ համահունչ են մեղադրյալի ցուցմունքներին և նաև հաշվի առնելով, որ մյուս մեղադրյալը այլ քրեական գործով գտնվում է կալանքի տակ, վկաները հանդիսանում են քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ, որոնց վրա ներագդելու հավանականությունը խիստ նվազ է: Դատարանը եզրահանգել է, որ ներկայումս նվազել է մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հիմքի հավանականության աստիճանը¹⁵⁸:

Հատկանշական է, որ այս գործով դատարանը գնահատել է նաև մեղադրյալի երեխայի վրա մոր՝ տնային կալանքի տակ գտնվելու հանգամանքի ազդեցությունը, մասնավորապես նշվել է, որ երեխան նույնպես գտնվել է տանը և փաստացի սահմանափակվել է նաև նրա ազատ տեղաշարժը և համապատասխան զարգացման կենտրոններ այցը: Բացի երեխայի լավագույն շահը վկայակոչելուց, դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ մեղադրյալի ամուսինը գտնվում է անազատության մեջ, իսկ ազատության սահմանփակման հետ կապ չունեցող

¹⁵⁷ ԵԴ1/0994/01/24

¹⁵⁸ ԵԴ1/0524/01/24

խափանման միջոցի կիրառման դեպքում մեղադրյալը, իր խոսքերից, կշարունակի աշխատել և հոգալ իր ընտանիքի կարիքները: Արդյունքում դատարանը որոշել է, որ մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կարելի է ապահովել և նշված մտավախությունները հնարավոր է չեզոքացնել կամ նվազեցնել առավել մեղմ խափանման միջոցների՝ վարչական հսկողության և բացակայելու արգելքի համակցված կիրառմամբ:

6.7 Սահմանափակումների կիրառման առանձնահատկություններ

Դիտարկված գործերով դատարանը, եթե կիրառել է սահմանափակումներ, ապա հիմնականում կիրառել նույն բլանկետային ձևակերպումը և արգելել՝ 1) ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց, 2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

Մինևույն ժամանակ որոշ գործերով դատարանը չի կիրառել սահմանափակումներ կամ դրանք որոշակի փուլում վերացրել է:

Գործերից մեկով դատարանը հատուկ շեշտել է վերագրվող հանցանքի գաղափարական հողի վրա կատարելու փաստը և եզրակացրել է, որ մեղադրյալի նամակագրություն ունենալու, հաղորդակցության այլ ձևերից օգտվելու, այդ թվում՝ փոստային առաքանուց օգտվելու, այլ անձանց հետ շփում ունենալու և իր բնակության վայրում հյուրընկալելու իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ է, քանի որ արարքը պայմանավորված է առերևույթ գաղափարական հակադիր բնեռներով, ուստի նշված իրավունքների չսահմանափակելը կարող է հանգեցնել մեղադրյալի հայացքները կիսող անձանց կողմից գործի քննությանը խոչընդոտելուն¹⁵⁹:

Հատկանշական է, որ այս գործով դատարանը նաև նշել է, որ մեղադրյալը տնային կալանքի վայրում բնակվում է իր ընտանիքի անդամների հետ, իսկ այլ մերձավոր ազգականների միջոցով որևէ ազդեցություն ունենալը ենթադրյալ դեպքին ականատես անձանց վրա իրատեսական չէ՝ հաշվի առնելով կիրառված խափանման միջոցների համակցությունը և դրանց խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքների գիտակցումը, ուստի մեղադրյալի և մերձավոր ազգականների հետ շփում և հաղորդակցություն ունենալը սահմանափակելն անհարկի և ոչ անհրաժեշտ զրկանքներ կարող է պատճառել վերջինիս:

Որոշ դեպքերում դատարանը հատուկ նշել է այն անձանց տվյալները, ում հետ շփումը արգելված է մեղադրյալի համար: Իսկ այն դեպքերում, երբ արձանագրվել

¹⁵⁹ ԵԴ1/0994/01/24

Ե հյուրընկալման արգելքի խախտում, դատարանը այդ հանգամանքը գնահատել է մեղադրյալի դիտավորությունն ունենալու տեսանկյունից: Նշված դեպքում դատարանը խախտում անելու դիտավորություն չի հաստատել, ուստի մեղադրյալի դեմ այդ հանգամանքը չի օգտագործել¹⁶⁰:

Գործերից մեկով դատարանը հատուկ ընդգծել է, որ հեռախոսային խոսակցություններ ունենալու արգելքը տարածվում է նաև համացանցի միջոցով դա անելու վրա¹⁶¹:

Որոշ գործերով դատարանը բավականին ճկուն մոտեցում է ցուցաբերել՝ ապահովելով տնային կալանքի ընդհանուր ռեժիմը, իսկ մյուս կողմից՝ արձագանքել մեղադրյալի կողմից բարձրացված խնդիրներին: Օրինակ՝ դատարանը թույլատրել է մեղադրյալին՝ համապատասխան ուղեկցությամբ, այցելել որդու գերեզման, իրականացնել բերքահավաք կամ այցելել բժշկի:

Եզրահանգումներ

Դիտարկված նիստերի արդյունքներով դատարանի կողմից **76 (66%)** մեղադրյալի նկատմամբ տնային կալանք խափանման միջոցը պահպանվել է, իսկ մնացածի դեպքում՝ փոխել: Մասնավորապես՝ **2-ի** մեղադրյալի նկատմամբ փոխվել է կալանքի, **24-ի** նկատմամբ կիրառվել է վարչական հսկողություն, այդ թվում՝ համակցված բացակայելու արգելքի և/կամ գրավի հետ, **12-ի** նկատմամբ փոխվել է բացակայելու արգելքով, այդ թվում նաև որոշ դեպքերում՝ գրավի հետ համակցված, **մեկ** մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը փոխվել է գրավի:

Արձանագրվել է տնային կալանքի տակ գտնվելու բավականին երկար ժամանակահատվածներ, որոշ դեպքերում տնային կալանքից առաջ կիրառված է եղել կալանք: Դիտարկված գործերով տնային կալանքի տակ գտնվելու առավելագույն ժամկետը եղել է շուրջ 15 ամիս:

Դիտարկված գործերով մեղադրյալների ճնշող մեծամասնությունը ներկայացված էին փաստաբանի կողմից: Հատկանշական է, որ պաշտպան չունեցող երկու մեղադրյալի խափանման միջոցն էլ մեղմացվել է: 115 մեղադրյալից 6%-ը եղել են օտարերկրյա քաղաքացիներ, նրանք բոլորը ունեցել են պաշտպան և ապահովվել են թարգմանիչով:

¹⁶⁰ ԵԴ1/1728/01/24

¹⁶¹ ՀԿԴ/0220/01/24

Դատվածության առկայությունը հանդիսացել է կարևոր գործոն, որը դատարանի կողմից հաշվի է առնվել, հատկապես հանցանք կատարելու ռիսկի գնահատման համատեքստում: Հատկանշական է, որ միատեսակ չէ դատական կազմերի մոտեցումը մարված դատվածության հանգամանքին: Որոշ դեպքերում դատարանը նշել է, որ դատվածության մարված լինելը չի կարող օգտագործվել անձի դեմ, իսկ մյուս դեպքում՝ որ թեև մարված, սակայն կոնկրետ արարքի համար դատվածության առկայությունը չի կարող անտեսվել և հանդիսանում է անձին բնութագրող հանգամանք:

Դիտարկված գործերից **5-ի** պարագայում արձանագրվել է նախկինում ընտրված խափանման միջոցի պայմանների խախտում: Թեև մեղադրողը այս գործերով միջնորդել է կիրառել կալանք, դատարանը անհատական գնահատման է արժանացրել գործի հանգամանքները: Արդյունքում նշված գործերից մեկով կիրառվել է կալանք, մեկ այլ գործով՝ վարչական հսկողություն, իսկ մնացած դեպքերում՝ տնային կալանքը երկարաձվել:

Հարկ է նշել, որ հանրային մեղադրողը գրեթե բոլոր մեղադրյալների նկատմամբ միջնորդել է երկարացնել տնային կալանքի ժամկետը, իսկ **7-ի** դեպքում՝ փոփոխել խափանման միջոցը՝ կիրառելով կալանք: Այսինքն՝ որևէ դեպքում չի միջնորդել մեղմացնել խափանման միջոցը, անգամ հիմնական դատալսումների փուլում: Ավելին՝ որոշ դեպքերում մեղադրողը անգամ վկայակոչել է այնպիսի հիմքեր, որոնք նախորդիվ չեն հաստատվել, սակայն որևէ նոր հանգամանք չի ներկայացրել:

Հատկանշական է դատարանի մոտեցումը տնային կալանքի և զբաղվածության ապահովման փոխկապակցվածության գնահատման առումով: Որոշ դեպքերում տնային կալանքի փոփոխությունը ազատության ավելի նվազ սահմանափակում ենթադրող խափանման միջոցով դատարանը հիմնավորել է մեղադրյալին աշխատելու և ընտանիքի հոգսը հոգալու հնարավորություն տալու անհրաժեշտությամբ:

Գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի վարույթում գտնվող գործերով ողջամիտ կասկածի գնահատման հարցը կրում է ձևական բնույթ: Հատկանշական է, որ հիմնական դատալսումների դեպքում այս մոտեցումը առավել արտահայտված է լինում, այսինքն՝ անգամ այն դեպքում, երբ նախնական դատալսումների փուլում դատարանն այս կամ այն ձևով շոշափել է ողջամիտ կասկածի առկայության հարցը, ապա նույն գործով հիմնական լսումների փուլում կայացրած որոշումներում որևէ անդրադարձ չկա:

Բոլոր այն դեպքերում, երբ դատարանն անդրադարձել է հիմնավոր կասկածին, ապա առավելապես ներկայացվել են դրա վերաբերյալ գոյություն ունեցող ընդհանուր մոտեցումներն ու սկզբունքները, առանձին դեպքերում վկայակոչվել են նաև ՄԻԵԴ նախադեպեր և Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որոնք շարադրվել են բավականին երկար և հանգամանալից, սակայն խափանման միջոցն ընտրելիս այդ մոտեցումները կոնկրետ գործի հանգամանքների համատեքստում չեն քննարկվել և չեն վերլուծվել: Ավելին, ինչպես երևում է ներկայացված գործերից, որոշ դեպքերում դատավորը այլ գործերի շրջանակներում հարցի վերաբերյալ կիրառած մոտեցումները նույնությամբ կիրառել է տվյալ գործում ևս՝ առանց կոնկրետ գործի փաստական հանգամանքների ներքո վերլուծություն կատարելու:

Դատարանների կողմից խափանման միջոցների կիրառման հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանները երբեմն տարբեր մոտեցումներ են ցուցաբերում ռիսկերի գնահատման հարցում: Մի կողմից՝ դատարանները հաճախ նշում են, որ գնահատականները չպետք է լինեն վերացական, մյուս կողմից՝ գործնականում հանդիպել են և՛ վերացական ձևակերպումներ, և՛ առանց փաստական նոր տվյալների նախորդ որոշումներին ուղղակի հղումներ:

Փախուստի կանխումը՝ որպես խափանման միջոցի ընտրության հիմք, գործերի մեծ մասում դիտարկվել է որպես նվազ նշանակություն ունեցող: Սակայն որոշ դեպքերում, օրինակ՝ օտարերկրյա քաղաքացիների կամ նախկինում թաքնվելու կամ խուսափելու փորձի առկայության դեպքում, ռիսկը հաճախ բարձր է գնահատվել: Միևնույն ժամանակ, որոշ գործերում այդ ռիսկը ուսումնասիրվել է մակերեսորեն՝ առանց մեղադրյալի վարքագծի և գործի հանգամանքների ամբողջական վերլուծության:

Ինչ վերաբերում է նոր հանցանք կատարելուն, ապա այն դատարանների կողմից ամենից հաճախ օգտագործվող հիմքերից է՝ հատկապես այն դեպքերում, երբ մեղադրյալը նախկինում դատված է եղել կամ առնչվել է քրեական համակարգի հետ: Այնուամենայնիվ, անգամ եթե մեղադրյալը նախկինում դատվածություն չի ունեցել, ռիսկը հաճախ ներկայացվել է ընդհանրական ձևով՝ հիմնականում վերագրվող արարքի բնույթով պայմանավորված:

Գործին միջամտելու և պարտավորությունների խախտման ռիսկի հիմքը դատարանի կողմից վկայակոչվել է առավել հաճախ: Մեծ թվով գործերով դատարանը հիմնականում քննարկել է ապացույցների հետազոտելու ու վկաների հարցաքննելու հարցը որպես տնային կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտության հիմք, սակայն լրիվ տարբեր մոտեցում է ցուցաբերել այդ

հարցի շուրջ: Գործերի մի մասում դատարանը դատական փուլ անցնելու հանգամանքը ինքնին գնահատել է որպես հանգամանքների փոփոխություն և միջամտելու ռիսկի նվազման հիմք, իսկ մյուս դեպքերում դատարանը հակառակ մոտեցումն է ցուցաբերել և պնդել, որ նույն ռիսկը պահպանվում է դատավարության ընթացքում, քանի դեռ չեն հարցաքննվել վկաները և/կամ տուժողը և չեն հետազոտվել ապացույցները:

Դատավորների կողմից գնահատվել են այլ հանգամանքների ազդեցությունը ևս: Մասնավորապես, տնային կալանքի կիրառման հարցում դատարանները հաշվի են առնում մեղադրյալի պահվածքը՝ մասնավորապես մեղքի ընդունումը, քննությանը աջակցելը, ապացույցների մեծ մասի հավաքագրված լինելը և նախաքննության ավարտը: Սակայն, երբ գործով ներգրավված են պաշտոնատար անձինք, դատարանները հակված են խափանման միջոցը պահպանելու՝ հնարավոր ազդեցության և միջամտության կանխման նկատառումներով, ինչպես նաև ընտանեկան հանգամանքները, այդ թվում՝ տնային կալանքի կիրառման ազդեցությունն ընտանիքի այլ անդամների վրա, այդ թվում՝ երեխաների և խնամքի տակ գտնվող այլ անձանց: Որոշ գործերով ընդգծվել է, որ հանցանքի ծանրությունը և սպասվող պատժի խստությունը հանդիսանում են վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր:

Որոշ դեպքերում դատարանը, հաշվի առնելով մեղադրյալի անձնական և ընտանեկան կարիքները, ցուցաբերել է որոշակի ճկունություն. տնային կալանքը թեև երկարաձգվել է, այնուամենայնիվ, թույլատրվել է կատարել որոշակի գործողություններ, օրինակ՝ այցելել գերեզման կամ հավաքել և իրացնել բերքը:

Արձանագրվել են դեպքեր, երբ վարձակալական հիմունքներով բնակվող մեղադրյալները բախվել են լրացուցիչ խնդիրների՝ պայմանավորված վարձակալության պայմանագրի չերկարաձգմամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել մեղադրյալի նկատմամբ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը միայն որպես բացառիկ միջոց,

- Մեղադրյալի կողմից կոնկրետ հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը գնահատել և հիմնավորել կոնկրետ փաստերի և տեղեկությունների հիման վրա.
- Բացառել անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի լուծումը՝ հիմնվելով բացառապես անձին մեղսագրվող հանցագործության ծանրության և վտանգավորության վրա.
- Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել որոշումների հիմնավորվածության և պատճաբանվածության սկզբունքը, ցուցաբերել ջանասիրություն և առաջարկվող և ընտրված խափանման միջոցի հիմքում դրված ռիսկերի հիմնավորման առնչությամբ.
- Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել որոշումների անհատականացվածությունը՝ հիմնվելով անձի անհատական հանգամանքների, այդ թվում՝ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների գնահատման վրա.
- Ապահովել մեղադրյալի մասնակցությունը խափանման միջոցի հարցի քննարկման.
- Օրենքով նախատեսել տնային կալանքի տակ գտնվող անձի՝ օրվա ընթացքում առնվազն մեկ ժամ զբոսնելու իրավունքը: